

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ՍԵՐԻԱ № 2

Ա. Գ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

ԲՈՒՎԱԿԱՆ ԲԶԵԼ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՑՈՒՑ  
ԵՐԵՎԱՆ 1948

581.77

116.95

(2-84

Христианов, В. Г.

Русский язык

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿADEMİYԻ  
ԲՈՒԺԱՆԵՐԻ ԳԵՆԵՏԻԿԱՅԻ ԽՈՍՏԱՏՈՒՄ

ՀԱՆՐԱՄԱՏԵԼԻ ՍԵՐԻԱ № 2

581-17

12-84

Ռ. Գ. ԱՐԱՐԱՏՅԱՆ

ԱՄՓՈՎՎԱԾ Է 1961 թ.

ԲՈՒԺԱԿԱՆ ԲԶԵԴ

44647  
116314



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՐ Գ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ԿՐԵՊԱՆ

1948

Ընդհանուր խմբագրությամբ  
Հայկական ՍՍՌ Գիտուրյալ և համապատասխան  
Պրեզիդենտ Վ. Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՑԱՆԻ

Պրակի խմբագիր՝ Վ. Հ. ԳՈՒԼՔԱՆՑԱՆ

Ա. Շ. ԱՐԱՐԱԿԻ  
РАСТИТЕЛЬНАЯ КЛЕТКА

(На армянском языке)  
Изд. АН Арм. ССР, Ереван, 1948 г.

## ԲՅԱՀԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնության մեջ կատարվող պլրոցեսների փոխագալք  
կապի ճանաչումը հսկայական քայլերով առաջ ըն-  
թացավ շնորհիվ երեք մեծ հայտնագործությունների.  
առաջին, շնորհիվ բջջի հայտնագործության, այդ  
միավորի, որի բազմացմամբ ու տարբերացմամբ  
զարգանում է բույսի և կենդանու ամբողջ մար-  
մինը...

Ֆ. Էնգելս


Բույսերի և կենդանիների կազմության հաբոցվ արդեն  
զբաղվել է հույն փիլիսոփա Արիստոտելը մեր թվագրությունից  
մոտավորապես երեք դար առաջ: Բույսերի մասին մեծածավալ  
աշխատություն է զբել Արիստոտելի աշակերտ Թեոփրաստը, որը  
քննության է առել նաև դրանց ներքին կազմությունը: Նա ըն-  
դունում էր, որ բույսի ցողունը կաղզված է «ջիլերից, ջղերից և  
փափուկ մասից», ջիլերը և ջղերը ճեղքվում և բաժանվում են  
երկարությամբ, իսկ փափուկ մասը՝ բոլոր ուղղություններով  
«ինչպես հողի կոշտը»: Բջիջների և բջջային կազմության մասին  
ոչ Արիստոտելը և ոչ էլ Թեոփրաստը գաղափար չեն ունեցել,  
որովհետև անդեն աշքով դրանք տեսնել հնարավոր չեն:

Բջիջները տեսնելու և բջջային կազմությունն ուսումնասի-  
րելու համար անհրաժեշտ էր ունենալ մի գործիք, որով կարելի  
կլիներ մեծացնել պատկերը մի քանի տասնյակ կամ հարյուր  
անգամ:

Եզիպտոսում և Նինվեյում, ինչպես հետագայում նաև Հռո-  
մուս արդեն պատրաստում էին ապակե գնդեր ու սապնյակներ,  
որոնք մի քանի անգամ խոշորացնում էին պատկերը: Մոտավո-  
րապես 13-րդ դարի վերջերում, երբ մարդիկ սովորեցին ապակի  
հղկնու արվեստը, Եվրոպայում սկսեցին ակնոց պատրաստել:  
Անցավ էլի երեք դար, և մարդիկ սկսեցին փորձեր անել կառու-  
ցելու բարդ խոշորացույց, այսինքն՝ միկրոսկոպ:

Մեզ հայտնի առաջին միկրոսկոպը հօրինել են Հանս և Զախարիաս Յանսենները 1590—1610 թվականներին։ Սրանք հոլանդացի էին, հայր և որդի, մասնագիտությամբ ապակի հղկող։ Յանսենների միկրոսկոպն ուներ 45 սմ երկարությամբ և 5 սմ լայնությամբ տեսողական խողովակ՝ տեսափող, որն անշարժ տերացած էր պատվանդանին։ Առարկան տեղափորում էին այդ պատվանդանի վրա, տեսափողի դիմաց և դիտումը ընկնող լույսի տակ։ Յանսենների հորինած միկրոսկոպը, ինչպես և այդ ժամանակ «լվի ապակիները», որոնք կազմված էին մի փոքր խողովակից, մի ծայրին հարթուուցիկ ապակի, մյուս ծայրին հարթ ապակի սկզբում միայն հետաքրքրական խաղալիքներ էին համարվում։ Դրանցով ժամանցի համար դիտում էին զանազան մանր առարկաներ։ 17. բգ զարի առաջին կիսում միկրոսկոպը որպես գիտական գործիք չի օգտագործվել։

Յանսենների պատրաստած միկրոսկոպներից մեկին ծանոթանում է անգլիացի ֆիզիկոս Ռոբերտ Հուկը։ Օժտված լինելով



Նկ. 1. Հուկի միկրոսկոպը։

գյուտարարական ձիբքով՝ նա նպատակ է դնում կատարելագործել այն, և նրան հաջողվում է կառուցել շատ ավելի հարմար մի միկրոսկոպ։ Հուկի միկրոսկոպն ավելի կարե տեսափող ուներ, ընդունենը 18 սմ երկարությամբ, որն ըստ ցունկության կարելի էր երկարացնել, քանի որ կազմված էր չորս, իրար մեջ հադրյած, խողովակներից։ Միկրոսկոպին կից կաը

լուսավորող գործիք՝ կազմված լամպից, ջրով լի ապակե գնդից և երկուուցիկ ապակուց, վերջին երկուսը լույսը հավաքող հարստացնեներ են։ Այս միկրոսկոպի օգնությամբ Հուկը բազմաթիվ

գագմանալի նուրբ գիտողություններ է կատարել, որ հրատարակել  
է 1865 թվականին՝ «Միկրոգրաֆիա» (մանրագրություն) անունը  
կրող մի գրքով, իր գրքում նա նկարագրում է և՝ ասեղի ծայրը  
(գիտողություն 1), և՝ նուրբ բատիստ կամ կտավ (գիտողություն  
3), և՝ կակաչի սերմեր (գիտողություն 30), և՝ մրջյուն (դիտողու-  
թյուն 49), և շատ ուրիշ ամենատարրեր առաջկաներ, որոնց  
վրա նա մանրազնին դիտողություններ էր կատարել: Սակայն  
նրա 54 «գիտողություններից» ամենանշանակալին 17-րդն է, որ  
կոչվում է «Խցանի կազմության և նման մի քանի այլ ծակոտ-  
կեն մարմինների բջիջների և ծակոտիների մասին»: Խցանից  
շատ բարակ շերտեր կտրելով և իր միկրոսկոպով գիտելով՝ Հուկը  
նրանց մեջ նկատել է կանոնավոր զասավորված խորշեր կամ  
ծակոտիներ: Նա իր տեսածը նմանեցրել է մեղրի խորիսիին և  
խորշերն անվանել է ծակոտի կամ բջիջ, որովհետև զրանք փոքր  
արկղներ էին հիշեցնում: Նրա տված բջիջ անունը մինչև այժմ  
էլ գործ է ածվում: Նման կազմություն Հուկը տեսել է նաև  
կտակենու և այլ ծառերի ցողունի ծուծի մեջ, եղեգնի, սամիթի,  
գաղարի և մի քանի այլ բույսերի ներքին հյութալի հյուսվածք-  
ների մեջ: Նա նույնիսկ աղոտ կերպով կասկածել է, որ այստեղ  
մի ինչ որ ընդհանուր երկույթ է նկատվում: Սակայն նրա միտ-  
քը շեղվել է ճիշտ ընթացքից, և նա եկել է այն եզրակացության,  
որ ընդհանրապես բոլոր մարմինները ծակոտկան են և որ բույ-  
սերի վրա կատարած իր գիտողությունները իբր թե դրա հիա-  
նալի ապացույցն են: Այնուեւսկ Հուկն այլնս բույսերի ներքին  
կազմությանը, ինչպես և առևսասրակ միկրոսկոպիական հետա-  
զոտություններով չե զբաղվել: Բույսերի ներքին կազմությունը  
նրա համար ժամանակավոր հետաքրքրության առարկա էր՝  
կտպված իր կատարելագործած միկրոսկոպի ստուգման հետ: Սա-  
կայն նրա համար պատահական այդ հետազոտությունները ի-  
րենց կարեռ դերը խաղացին գիտության պատմության մեջ:  
Դրանք խթան հանդիսացան բույսերի ներքին կազմությունն  
ավելի սիստեմատիկորեն ուսումնասիրելու համար: Այդ ուղղու-  
թյամբ առանձնապես մեծ աշխատանք են կատարել Ռոբերտ  
Հուկի երկու նշանավոր ժամանակակիցները՝ Մարչելո Մալպիցին  
և Նեենմյան Գրյուն:

Մարչելո Մալպիցին, 17-րդ դարի ամենանշանավոր բնա-

Խույզներից մեկը, խտալացի գիտնական էր և բժշկականության  
պրոֆեսոր: Նրա «Բույսերի անատոմիա» գիրքը տպագրվել է  
1675 թվականին: Մանրամասն ուսումնասիրելով բնույսերի զա-  
նագան մասերի (տերե, կեղե, բնափայտ) ներքին կազմությունը՝  
նա նկատել է, որ դրանք կազմված են շատ մանր պարկիլներից  
ու խողովակներից: Բջջի համար նա գործ է ածում պարկիլ կամ  
բշտիկ անունը: Մալպիզին բջիջների վրա կատարած իր գիտո-  
ղությունները չի ընդհանրացրել, և փաստերը նրա մոտ մնացել  
են իրարից կարված: Նա շատ է դրազվել նաև կենդանիների  
ներքին կազմության ուսումնասիրությամբ, բայց այդտեղ բջիջ  
չի տեսել: Մալպիզիի մասին առում են, որ նա բջիջներ տեսել է,  
բայց բույսերի բջջային կազմությունը չի տեսել:

Նեհեմյան Գրյուն անգլիացի գիտնական էր և բժիշկ Նա  
համարյա Մալպիզիի նետ միաժամանակ՝ 1671 թվականին լուս-  
դունի արքայական ընկերության (Անգլիայի Ակադեմիա) է ներ-  
կայացնում իր աշխատությունը՝ «Բույսերի անատոմիայի սկզբ-  
ուունքները»: Մալպիզիից անկախ Գրյուն ևս տեսել ու նկարա-  
գրել է բուսական բջիջները և նույնիսկ ավելի մանրամասն: Նա  
ևս բջիջներն անվանել է պարկիլներ և բշտիկներ: Զնայած ավելի  
հարուստ փաստական նյութ ունենալուն՝ Գրյուն ևս բջջային  
կազմության վերաբերյալ ոչ մի ընդհանրացում չի արել:

17-րդ դարի միկրոսկոպիստանների շարքում ուրույն տեղ է  
գրավում Անտոնի վան Լիենիուկը: Սա հոլանդացի առևտրական  
էր, որը իր ազատ ժամերին խոշորացույց հղկելով էր դրազված:  
Նա այդ արվեստին այնպես էր հմտացել, որ արտակարգ կատա-  
րյալ սապնյակներ էր պատրաստում: Լիենիուկի «միկրոսկոպը»  
կազմված էր ընդամենը մեկ սապնյակից, բայց նրա այդ խոշո-  
րացույցը կամ, ինչպես այդ ժամանակ ասում էին, պարզ միկ-  
րոսկոպն ավելի շատ էր խոշորացնում և ավելի քիչ էր աղավա-  
զում պատկերը, քան նախորդ երեք գիտնականների գործածած  
բարդ միկրոսկոպները: Այսպիսի պարզ միկրոսկոպի օգտա-  
գործելը հեշտ չէր, որովհետեւ առարկան համարյա պետք  
է կպչեր ապակուն, իսկ ապակին էլ աչքին: Բայց այդ  
խիստ անհարմար խոշորացույցը Լիենիուկը ապշեցուցիչ  
գյուտեր է արել: Նա առաջին անգամ ցույց է տվել, որ  
գոյություն ունի միկրոսկոպիական մեծության բազմապիսի օբ-

դանիզմակի մի աշխարհ; որը անզեն աչքին անմատչելի է. այդ աշխարհը կարելի է անսնել միայն միկրոսկոպի օդնությամբ: Իս «միկրոսկոպով» Լևնհուկը գիտել է և բակտերիաներ, և սպիրամատողիդներ, և բուսական բջիջներ, և շատ ուրիշ հետաքըքրական առարկաներ: Նրա բազմաթիվ դիտողությունների արդյունքները տպագրվել են 1695 թվականին լատիներեն մի գրքով՝ «Բնության դպրություն» անունով: Լևնհուկին կարելի է իրավամբ համարել պրոտիստոլոգիայի (նախէակներն ու սումերասիրող գիտություն) և միկրոգրաֆիայի (մանրեազրության) հիմնադիր: Լևնհուկը ևս Մալպիգիի և Գրյուի նման հեռու է եղել ընդհանրացումներ անելուց:

Պիտրոս 1-ինը հետաքըքրագի է միկրոսկոպով և հասկացել է նրա մեծ նշանակությունը: Նա Դելֆտում եղած ժամանակ իր մատ՝ նազի վրա է հրավիրել Լեվինհուկին, որը ցուցադրել է նրան իր միկրոսկոպը և կատարած գյուտերից մի քանիսը: Պիտրոս 1-ինը հոգ է տարել, որ միքանի միկրոսկոպներ ձեռք բերվեն և ուղարկվեն Ռուսաստան:

18-րդ դարում համարյա ոչինչ չի ավելացել բջիջների մասին մինչ այդ ձեռք բերած գիտելիքների վրա: Սակայն այդ դարը նշանավոր է նրանով, որ միկրոսկոպը որպես հետազոտական գործիք բավական կատարելագործվել է՝ հատկապես նրա մեխանիկական մասը: Բայց նրա լուսաբանական հատկությունները չեն կատարելագործվել, մի բան, որ հենց ամենակարևորն է միկրոսկոպի մեջ: Գուցե զա է պատճառը, որ այդ ժամանակ ևս միկրոսկոպը մեծ դեր չի կատարել գիտության մեջ, այն համարվել է նույնիսկ ավելորդ: Օրինակ, սիստեմատիկայի ստեղծող Լիննեյը Ժիտում էր միկրոսկոպի նշանակությունը գիտական աշխատանքի համար, իսկ Վոլտերը ծաղրում էր միկրոսկոպիստներին՝ ասելով, որ նրանք ոչ թե իրական պատկերներն են անսնում, այլ երենց աչքերում եղած երկակայական բժերը:

18-րդ դարի սկզբում Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտ Տ. Կորֆը ոչ միայն ցուցադրում է միկրոսկոպը, այլև ինսդիր է դնում, որ այն կատարելագործվի: Այդ դարի 90-ական թվականներին արդեն փորձված ուսւ վարպետներ կային, որոնք ապակիներ էին հղում և միկրոսկոպներ պատրաստում: Հատուկ հիշատակության արժանի է ժամանակ կու-

լիբինը, որը իր ժամանակի նշանավոր մեխանիկ-հոնստրուկտոր-ներից մեկն էր, Կուլիբինը զեկավարում էր ակտոնեմիական արհետանոցները, որտեղ նա մեծ թվով միկրոսկոպներ է պատրաստել:

18-րդ դարը առանձնապես նշանավոր է նրանով, որ բիոլոգիայի մեջ, ինչպես և առհասարակ գիտության մեջ մեծ ընդհանրացումների փոքրներ են արվել Ընդհանրացում անելու ձըդտումը այնուհետև գարձել է աշխատանքի մեթոդ, որը շատ մեծ դեր է կատարել նաև 19-րդ դարի միկրոսկոպիստների հետազոտությունների մեջ։ Այդ հետազատություններին մեծ չափով օժանդակել է նաև միկրոսկոպի լուսարանական մասի (ապակիների) կատարելագործումը։ Միկրոսկոպներ սկսում էին պատրաստել արգեն գործարանային եղանակով, այնպիս որ դրանք համեմատաբար մատչելի էին դառնում։

Այդ ժամանակ դեռ մշակված միկրոսկոպային տեխնիկա չկար, առարկաները գիտվում էին թարմ կամ չորացած վիճակում, ջարդած կամ ձեռքի ածելիով կտրած, առանց ներկելու, ի հարկեն, մշտական պրեպարատ պատրաստել ես չգիտեին։

Չնայած միկրոսկոպի բավական մեծ կատարելագործմանը, այնուամենայնիվ 19-րդ դարի սկզբի ամենալավ միկրոսկոպներն իրեկ՝ համեմատած ներկայիս նույնիսկ աշակերտական միկրոսկոպի հետ շատ անկատար գործիքներ էին, եվ միայն պետք է զարմանալ թե այդ ժամանակվա միկրոսկոպիստներն ինչպես են կարողացել այնքան մեծ գյուտեր անել Հավանաբար, նրանք ունեցել են մեծ սեր զեպի առարկան և օժտված են եղել մեծ համառությամբ՝ առաջադրած ինդիքները կատարելու ձգուման մեջ։

Ռուսաստանի Գիտությունների Ակադեմիայի անդամ Կառապար Վոլֆը միկրոսկոպի օգնությամբ կատարել է մի շատ նշանավոր ուսումնասիրություն, նա հետազոտել է հալի ճուտի սպազմային պարգայումը։

Միկրոսկոպի օգնությամբ բազմաթիվ աշխատանքներ է կատարել Մ. Վ. Լոմոնոսովը, որը սիստեմատիկ կերպով օժտագործել է այն իր բազմազիսի հետազոտությունների ժամանակը։

Միկրոսկոպի պահանջը Ռուսաստանում այնքան մեծ էր, որ թէ 18 և թէ 19-րդ դարերի ընթացքում մի քանի տն-

գամ փորձել են կազմակերպել միկրոսկոպի լայն արտադրություն: Մի այդպիսի փորձ եղել է նաև 1916 թվին: Միկրոսկոպ-ների արտադրությունը մեր երկրում սկսել է միայն Սովետական կան կարգեցը հաստատվելուց հետո և այժմ նշանակալի արագությունը դարձանում է:

19.-րդ դարը գարձավ բջջի ուսումնասիրության դար: Բավական է ասել, որ այդ գարում հաստատվեց բջջային տեսությունը՝ երկու գիտնականների՝ Շլայդենի և մանավանդ Շվանի աշխատություններով, 1838—1839 թվականներին: Սակայն սրբազն ընդհանուրացումներից առաջ մի ամբողջ շարք փայլուն աշխատանքներ են կատարվել, որոնց մեջ բազմաթիվ առաջնակարգ գիտնականներ քայլ առ քարզել են բջջի դանազան կողմերը և մաս առ մաս բարձրացրել վարդույրը բնության այդ «գաղտնիքի» վրայից:

19.-րդ դարի արշալույսին գեռ ևս շարունակում էր տիրապետել այն հայացքը, ինչ որ նախորդ երկու դարերում, այն է, որ բջիջները դատարկ տարածություններ են հոծ զանգվածի մեջ: Այդ դարի առաջին երկու երեք տասնամյակներում բջջային կազմության վերաբերյալ քննվում են հիմնականում երեք հարցեր:

Հարցերից մեկն այն էր, թե բջիջները արգյուք խորշեր են մի միապաղատ զանգվածի մեջ, թե առանձին միավորներ սեփական պատերով: Այդ հարցը լուծվեց 1812 թվականին շնորհիվ Ռուբենհառերի փորձերի, որը նեխման ենթարկելով հյուսվածքը՝ քայլայեց բջիջների իրար միացնող շերտը և անջատեց գրանց միմյանցից: այդ պրոցեսը կոչվում է մացերացիա:

Երկրորդը կարելի է համարել այն հարցը, թե բջջի որ մասն է զիկավորը՝ բջջաթաղանթը թե պարունակությունը: Այս հարցի վերաբերյալ հակասական կարծիքներ կային: Սկզբում տիրապետում էր այն կարծիքը, թե բջջի զիկավոր մասը թաղանթն է: Սակայն աստիճանաբար սկսում էին թեքվել գեղի այն տեսակետը, որ բջջի էական մասը պարունակությունն է և ոչ թե թաղանթը: Այս հարցի լուծումը մեծ նշանակություն ուներ պարզելու համար թե արդյոք կենդանիներն էլ են բջիջներից կազմված: Եթե բջջի զիկավոր մասը համարվի թաղանթը, ապա կստացվի, որ միայն բույսերն ունեն բջիջներ, իսկ կենդանի-

ները՝ ոչ, քանի որ վերջիններիս բջիջները մեծ մասամբ գուրեն են թաղանթից:

Երրորդ հարցն էր՝ արդյոք միայն բույսի որոշ մասե՞րն են բջիջներից կազմված, թե բջիջները հատուկ են բույսի բույր մասերին անխռիր, ինչպես նաև կենդանիներին: Տրիլիգրանուար 1806 թվականին ցույց տվեց, որ բույսի ջրատար անոթները բջիջներից են առաջանում: Այս հայտնագործումից հետո կասկած չմնաց, որ բույսի բույր մասերը կազմված են բջիջներից կամ առաջանում են բջիջներից: Ինչ վերաբերում է կենդանիներին, ապա շատ գիտնականներ գտնում էին, որ կենդանական հյուսվածքները նույնպես ինչ որ միավորներից են կազմված, որ սկզբում անվանել են գնդիկներ կամ հատիկներ: Ուստի էլ նույնացնում էին կենդանիների այդ գնդիկները բուսական բջիջներին, սակայն պետք է ասել, որ այդ ժամանակ տվյալ խընդում ավելի շատ երեակայությունն էր զործում, քան հաստատ փաստերից բխող արամաբանությունը:

Այս առավելապես բնափիլիսոփիայական աշխատություններին զուգընթաց՝ 19-րդ դարի առաջին տասնամյակներում զանազան վայրերում աշխատում էին բազմաթիվ միկրոսկոպիստներ, որոնք քայլ առ քայլ հետազոտում էին զանազան հյուսվածքների ներքին նուրբին նուրբ կազմությունը: Այդ աշխատանքների շնորհիվ կուտակվեց փաստական հարուստ նյութ, որը և հնարավորություն տվեց հետազոտում մեծ ու փոքր ընդհանրացումներ անելու:

Հետազոտական զանազան մանր ու մեծ օջախների մեջ առանձնապես պետք է շեշտել երկուսը՝ ոչ միայն այն պատճառով, որ զբանք ամենամեծն էին, այլ որ ամենանշանավոր աշխատություններն այստեղից են գուրս եկել: Այդ օջախներն են Յոհան Պուրկինյեի լաբորատորիան, սկզբում Բրեսլավիում և առաջ Պրագայում, և Խոհաննես Մյուլերի լաբորատորիան Բեռլինում: Այդ երկու լաբորատորիաներն էլ շատ մեծ գործ են կատարել թշջային տեսությունը նախապատրաստելու և հաստատելու մեջ:

Պուրկինյեն մշակել է միկրոսկոպիական տեխնիկան, որը հնարավորություն էր առաջին ուսումնական բարեկու ոչ միայն բջջապատերը, այլև պարունակությունը, և զբանական բջիջները՝ նաև կենդանական բջիջները՝ նյարդային բջիջները, ստամոքսագեղ-

ձային բջիջները, սրտի թելիկները և այլն, նրա աշակերտները նկարագրել են կոճիկի, ոսկրի, շարակցական և այլ հյուսվածքների կաղմությունը և ցույց են տվել որ դրանք ևս բջիջներից են կաղմված. բջիջները նրանք անվանում էին գնդիկներ և հատիկներ. Պուրկինյեի լաբորատորիայի աշխատողները տեսել են բջջակորիզը, կորիզակը և մասնակի համեմատություններ են արել բուսական և կենդանական բջիջների միջև:

Պուրկինյեն և նրա աշակերտները շատ մոտ էին բջջային տեսություն ստեղծելուն: Նրանք հարուստ նյութ են հավաքել, բազմաթիվ ապացուցված համեմատություններ ու հետեւթյուններ արել և այսպիսով իսկ նախապատրաստել բջջային տեսության ձևակերպումը: Առանց Պուրկինյեի լաբորատորիայի աշխատանքների հաղիվ թե Շվանը կարողանար մշակել բջջային տեսությունը:

Մեզ հետաքրքրում պակաս դեր չի խաղացել և Մյուլերի շկոլան, որի աշխատանքներն այլ ուղղությամբ են ընթացել: Մյուլերը ցույց է տվել որ կենդանիների մեջքի լարը՝ քորդան բջջային կազմություն ունի, այստեղ կարելի է տեսնել բջջաթաղանթներ՝ նման բուսական բջջաթաղանթներին: Այս փաստից Մյուլերն այն եզրակացության է հանդել, որ, անկասկած, կենդանական մարմնում էլ կան բջիջներ, այսինքն՝ խորշեր, միայն սահմանափակ քանակությամբ: Մյուլերի աշակերտ Հենլեն 1837 թվականին ցույց է տվել, որ կենդանու ծածկող հյուսվածքն էլ է բջիջներից կաղմված և առանց տառանումների գործ է ածել բջիջ անունը: Մյուլերի շկոլան և ահազին փաստական նյութ է կուտակել, որը հետո օգտագործվել է բջջային տեսության համար: Հետաքրքրական է, որ այս շկոլայի աշխատողները հենց սկզբից համեմատելիս են եղել բուսական և կենդանական հյուսվածքները: Մյուլերի շկոլային է պատկանում նաև Շվանը՝ բջջային տեսության ստեղծողը:

Մի փոքր կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչպես է հայտնագործվել բջջակորիզը, որովհետև վերջինս մեծ դեր է խաղացել բջջային տեսության հաստատման գործում: Անհնառուկը երպարզ միկրոսկոպով արդեն տեսել էր կորիզը ձկների արյան կարմիր մարմնիկների մեջ: Այսուհետեւ ընախույզները բջիջի այդ մասը զանազան ժամանակներում նկատել, նկարագրել և կոչել

Ան տարբեր անուններով: Պուրկինյեն առանձնապես մանրամասն նկարագրել է կորիզը, որը նա անվանել է «սաղմանային բշտիկ»: Սակայն այդ գիտնականներից և ոչ մեկը, ինչպես և Պուրկինյեն, չի կարողացել ցույց տալ որ կորիզը բջջի մշտական մասն է: Այդ հաջողվել է անել նորերտ Բրառենին, որը 1831 թվականին գեկուցած իր աշխատության մեջ գրել է, որ բույսի վերնամաշկի բոլոր բջիջներում կա մեկական գնդաձև հատիկ կամ կորիզ: Նա կորիզ գտել է նաև այլ հյուսվածքների մեջ և, ճիշտ է՝ գգուզորեն, այն ենթագրությունն է արել որ կորիզը բջջի մշտական կազմող մասն է: Կորիզի գյուտը մեծ գեր է խաղացել Շլեյդենի և Շվանի աշխատանքներում:

Մաթիաս Շլեյդենը նպատակ էր գրել պարզելու, թե ինչպես է առաջանում բուսական բջիջը: Նա իր՝ 1838 թվականին լույս տեսած «Նյութեր բույսերի զարգացման մասին» աշխատության մեջ նկարագրել է նոր բջիջների առաջացման պրոցեսը: Բայց Շլեյդենի, բջջի պատերի ներսից կպած խեժի մեջ հատիկներ են առաջ գալիս, որոնք նա լորձ է անվանել Այդ հատիկները իշտանալով գառնում են կորիզակներ, ապա կորիզակի շուրջը՝ հատիկներից կորիզ է ձևափորվում: Վերջապես կորիզի մակերեսին դարձյալ լորձից թաղանթ է կազմվում, որը շրջապատում է կորիզը, կամ ինչպես Շլեյդենն է անվանում՝ ցիտորլասոսը: Այսպիսով հին բջջի մեջ առաջանում է նորը: Ի հարկե, այս նկարագրության մեջ շատ սիսալ զիտողություններ և երեսակացություններ կան: Սովորաբար Շլեյդենին են վերագրում բուսական բջջի գյուտը, որ ճիշտ չէ, վերենում բերված նկարագրությունից պարզվում է, որ բույսերի բջջային կազմությունն արդեն վաղուց հաստատված էր: Նա իր գրքում այդ մասին չի էլ գրում: Բացի դրանից, նա չի պնդել թե կենդանիներն էլ բույսերի նման բջիջներից են կազմված: ընդհակառակը, նա այդ բացասել է:

Շլեյդենի աշխատության մեջ ամենաարժեքավոր կողմն այն է, որ նա առաջին անգամ հետեղական կերպով կիրառել է գենետիկ մեթոդը հյուսվածքների և բջիջների վերաբերմամբ: Իսկ այդ մեթոդի արժեքն ակնհայտ է, քանի որ բիոլոգիայի մեջ միտոյն այդ կերպ կարելի է ցույց տալ զանազան տարրերի հոմոլոգիան՝ համապատասխանությունը, ծագման ընդհանընըությունը: Բացի դրանից, հարկավոր էր ունենալ մի հատկանիշ, որ կարու-

Դանար հիմք ծառայել համեմատության համար. զա բջջակորիգն  
 էր, որը լավագույն կերպով ցույց է տալիս բուսական և կենդա-  
 նական բջիջների նմանությունը: Բջջակորիգն է, որնույն կազ-  
 մությունն ունի ար-  
 տաքաւստ խիստ տար-  
 բեր հյուսվածքների  
 բջիջների մեջ: Շլեյ-  
 դենը ցույց տվեց, որ  
 կորիզը զարդացող  
 բջջի համար հիմնա-  
 կան նշանակություն  
 ունեցող հատկանիշ է:  
 Սա է Շլեյդենի աշ-  
 խատության երկրորդ  
 արժեքավոր կողմը:  
 Շլեյդենի մասին կա-  
 րելի է ասել հետեւյալը.  
 Նա բջջային տեսու-  
 թյան ստեղծողը չէ,  
 բայց այդ տեսության  
 ամենամոտ և ամենա-  
 կարևոր նախապատ-  
 րաստողներից մեկն է:

Բջջային տեսու-  
 թյան ստեղծողը իրա-  
 վամբ համարվում է  
 Թեոփոր Շվանը՝ Մյուլ-  
 լերի ամենաաղան-  
 դավոր աշակերտներից

մեկը: Շատ հետաքրքրական գիտական ուղի է անցել Շվանը՝  
 Աշխատելով իր ուսուցչի հետ միասին, նա սկզբում հետազոտել  
 է մարսողական պրոցեսը և հայտաբերել է ստամոքսի ֆիրմենա  
 պիտինը: Այնուհետև նա սկսել է ուսումնասիրել ինքնածնու-  
 թյան հարցը և հետազոտել է նիխման ու խմբման պրոցեսները:  
 Այդ աշխատանքի ժամանակ նա հայտաբերել է շաքարանկերը



Նկ. 2. Թեոփոր Շվան:

(գրոժ) և ապացուցել, որ զբանք խմբածան պրոցեսի մասնակիցներ են։ Հետո նա ձեռնարկել է ուսումնասիրելու մկանների միկրոսկոպիական կազմությունը և մկանի կծկման ֆիզիոլոգիան, ապա նրա հետաքրքրությունը դարձել է դեպի նյարդային սիստեմը, որտեղ նա հայտաբերել է մի հատուկ թաղանթ, որը հենց նրա անունով էլ կոչվում է։ Բայց հետագայում Շվանը տարգում է միկրոսկոպիական հետազոտություններով և որպես ուսումնասիրության օբյեկտ ընտրում է զորտի շերեփուկների քորդան և կոճիկը։ Այդ երկու մասերում էլ բջիջները խիստ վակուուցած են և շատ նման են բուսական բջիջներին։

1837 թվականի հոկտեմբերին Շվանը և Շլեյդենը հանդիպում են։ Շլեյդենը պատմում է նրան իր գիտողությունների մասին կորիզի վրա և արտահայտում է իր կարծիքը նրա գերի մասին բուսական բջիջների առաջացման մեջ։ Պատմածի աղջեցության տակ Շվանը հիշում է, որ ինքն էլ նման պատկերներ տեսել է կենդանական բջիջներում։ Այդ զրույցն ազդակ է հանդիսանում, որ Շվանը զբաղվի նույն հարցով՝ վերանայելով մինչ այդ հայտնի փաստերը։ Եվ ահա 1838 թվին Շվանը բջջային կազմության մասին երեք հաղորդում է հրատարակում։ Դրանք հիմք են դասնում նրա հայտնի զրքի համար, որը լույս է աեսել 1839 թվականին «Միկրոսկոպիական հետազոտություններ կենդանիների և բույսերի կազմության» ու ամեան համապատասխանության մասին» վերնագրով։ Այդ աշխատառությունը կազմված է երեք մասից։ Առաջին մասում Շվանը նկարագրում է քորդան և կոճիկը, ցույց է տալիս, որ զրանց բջիջները նույն կազմությունն ունեն և նույն կերպ են զարգանում, ինչպես և բուսական բջիջները։ Այսպիսով կենդանական և բուսական օրգանիզմերի ներքին կազմությունների մեջ մի անքակտելի կամուրջ է ձգվում, Կիրառելով նույն գենետիկ մեթոդը՝ իր զրքի երկրորդ մասում Շվանն ապացուցում է, որ կենդանական օրգանիզմի բոլոր մասերն ու հյուսվածքները նույնպիսի բջիջներից են կազմված։ Հայացած որ առաջին հայացքից գա պարզ կերպով չի երևում, նախ, այն պատճառով, որ կենդանական բջիջների մեծ մասը թաղանթ չունի, բացի դրանից, որող հյուսվածքներ նույնիսկ բջջային կազմություն չեն ցույց տալիս, առաջն անկասկած է, որ զրանք ևս բջիջներից են առաջացել

և իրենց զարգացման սկզբնական շրջանում բջջային կազմություն են ունեցել: Այդ ի նկատի ունենալով՝ Շվանը բոլոր կենդանական հյուսվածքները հինգ խմբի է բաժանում, համաձայն բջիջների զարգացման աստիճանի, սկսած ազատ ինքնուրույն բջիջներից մինչև այն վիճակը, երբ բջիջներն իրար միանալով կորցնում են իրենց ինքնուրույնությունը և բջջային կազմության գլխավոր հատկությունները: Շվանը այս հարցում կարողաց զգալի հաջողությունների հասնել նախ այն պատճառով, որ Շլեյդենի հետևողությամբ լայն կերպով կիրառեց զենետիկ մեթոդը, մյուս կողմից, զարձյալ Շլեյդենի հետևողությամբ սկզբունք ընդունեց հետեւել կորիդին, որովհետև սա շատ երկար է մնում բջիջների և դրանցից առաջացած մկանային թելիկների ու այլ մասերի մեջ և համեմատաբար քիչ է փոփոխվում: Իր աշխատության երրորդ մասում Շվանը ի մի է բերում բոլոր դիտողությունները, մանրամասն կանգ է առնում բջջառաջացման պրոցեսի վրա և ապա ձեակերպում է բջջային տեսությունը:

Շվանի կատարած աշխատանքը կարող ենք համառոտակի ամփոփել հետևյալ կերպու: Նա վերջնականապես ապացուցեց, որ բուսական և կենդանական աշխարհները կապողը, բոլոր օրգանիզմների համար ամենաընդհանուրը բջիջն է: Ըստ Շվանի, բջջառաջացման պրոցեսը զարգացման ընդհանուր սկզբունքն է: Նա գրում էր նաև, որ յուրաքանչյուր բջիջ որոշ սահմաններում ինքնուրույն է, նա որոշ իմաստով անհատ է: Դրանից բխում է Շվանի այն դրույթը, որ օրգանիզմը նրա կազմող միավորների բջիջների մի գումար է:

Շվանից առաջ էլ նրա այդ մտքերը այս կամ այն կերպ արտահայտել են ուրիշները: Նրա աշխատանքի առանձին մասերը կազմող փաստերի մեծ մասը նկարագրել և հաստատել են նրա նախորդները: Նրա աշխատանքի մեթոդներն ու սկզբունքները նույնպես մշակված են եղել այլ գիտնականների կողմից: Սակայն նրա նախորդներից և ոչ մեկը այնքան համոզիչ կերպով, փաստական մեծ նյութի վրա հիմնված, բոլոր հայտնի տվյալների օգտագործմամբ և հետևողական կերպով չի ապացուցել, որ բջիջը բոլոր օրգանիզմների կազմության ընդհանրական միավորն է, ինչպես այդ արել է Շվանը: Հենց այդ է Շվանի մեծ աբժանիքը:

Այս համառուտ նկարագրությունից երեսում է, որ բջջային տեսությունը՝ մինչև որպես մի ամբողջական ուսմունք ձեռվորվելը ավելի քան մեկ և կես դար տեսող նախապատրաստական շրջան է ունեցել Բայց այս ոչ միայն հանդիսացել է հարյուրավոր հետազոտությունների բաղմաթիվ աշխատանքների արդյունքը, այլ և իր հերթին մի անկյունաքար է դարձել ավելի մեծ թվով գիտնականների նորանոր խորացրած հետազոտությունների համար: Էնգելսը գրում է, որ միայն բջջի գյուտի շնորհիվ է, որ բնության կենդանի առարկաների հետազոտությունը, համեմատական անառողջիան և ֆիզիոլոգիան, ինչպես և սաղմաբանությունը ամուր հիմքի վրա կանգնեցին, քանի որ օրգանական բջիջն այն միավորն է, որի բազմացման ու տարրի բիրացման հետևանքով առաջանում և աճում են բոլոր օրգանիզմները: Էնգելսի միտքը մենք տեսնում ենք իրականացած բիոլոգիայի բաղմաթիվ մասնաճյուղերի և առաջին հերթին հետազության մեջ:

Բջջի պարունակության վերաբերյալ առանձին գիտողություններ արգել են արգեն 19-րդ դարի սկզբում: Օրինակ, Դյուժարգենը միաբջիջների մարմնում տհսել է պրոտոպլասման և սարկոդ և անվանել Ավելի ուշ պրոտապլասմա տեսել է Պուրկինյեն և անվանել ցիտոբլաստեմ: Սկսած Շլեյդենից ու Շվանից, և մասնավանդ Պուրկինյեից, ավելի ու ավելի մեծ ուշադրություն են դարձնում բջջի մեջ գանգող մասերի վրա: Հետզհետեւ պարզվում է, որ բջջաթաղանթը համեմատաբար երկրորդական դեր է խաղում, և որ գլխավոր կենսական ֆունկցիաները կատարում են կորիզը և պրոտապլասման:

Հուգո Փոն Մոլը 1846 թվականին հայտաբերեց պրոտոպլասման բուսական բջիջների մեջ և վերջնականապես հաստատեց՝ որ պրոտոպլասման բջջի գլխավոր մասերից մեկն է:

Դեռ Շլեյդենից առաջ՝ 1835 թվին նույն ինքը Մոլը նկարութել էր բջիջների բաղմացումը բաժանման եղանակով, սակայն Շլեյդենի հեղինակությունն այդ ժամանակ ավելի մեծ էր և այդ պատճառով էլ նրա ցիտոբլաստի տեսությունն ավելի տածված էր:

Շլեյդենի տեսության դեմ դուրս են դալիս սկզբում Աւնգերը 1841 թվականին և տպա ավելի վճռական կերպով Նեգելին:

1844—48 թվականներին. Նրանք ցույց են տալիս, որ բջիջները ոչ թե լորձից են առաջանում աղասի բյուրեղացմամբ, այլ աբդին գոյություն ունեցող բջիջների կիսվելու կամ բողոքներու եղանակով: Նեզելին նկարտգրում է արմատի ծայրի և ծաղկափոշու մայրական բջիջների բաժանումը: Այդ գրությունը 1855 թվականին վերջնականապես հաստատում է հոչակալոր Ռուղողի Վերխովը, որն ապացուցում է, որ յուրաքանչյուր բջիջ առաջանում է մի այլ բջիջից:

Այդ խոշոր գյուտերին զուգընթաց շաբունակվում է կատարելագործվել միկրոսկոպը: Վերջինս ավելի հարմար ձև է ընդունում և հարստանում է մի շարք հարմարանքներով՝ պտուտակներով, սեղանիկի անցքով, հայելիով, լուսավորիչով, նոր խոցորացնող սիստեմներով, որոնց շնորհիվ առարկայի պատկերը կարելի է մեծացնել ավելի քան 1000 անգամ:

Առանձնապես մեծ կատարելության է համառմ միկրոսկոպը առաջնակարգ ֆիզիկոս Էրնստ Արբեի աշխատանքների շնորհիվ, Արբեն կառուցել է յուղային իմերսիոն օրեկտիվ: Դրա էությունն այն է, որ առարկայի վրա մի կաթիլ կեղրի բուսական կամ այլ յուղ են դնում և ստորին ապակիների սիստեմը՝ օրեկտիվը ընկդմում են այդ կաթիլի մեջ: Դրա շնորհիվ պատկերը խիստ պարզվում է: Բայց մեծացնելու հետ պատկերը մթնում է, և Արբեն դրա հետ կապված մի հատուկ լուսավորիչ գործիք է սարքել, որը սեղավորում են սեղանիկի տակը՝ լույսի աղբյուրի և առարկայի միջև: Այդ գործիքը հավաքում ու խտացնում է լույսը և ուժեղ լուսավորում միկրոսկոպի տեսադաշտը: Արբեն մի շարք այլ կատարելագործումներ էլ է արել:

Մշակվում է նաև միկրոսկոպիական տեխնիկան: Առաջանում և օրըստօրե բազմազան են դարնում ֆիքսացիայի եղանակները: Ֆիքսացիան կիրառում են ոչ միայն այն նպատակով, որ բջիջն արագ մեղցնեն, և այդ ընթացքում որևէ արհեատական փոփոխություն տեղի չունենա, այլ և նրա համար, որ նետո բջիջի զանազան մասերը լավ ներկվեն ընտրած ներկերով: Կառուցվում է մի հատուկ գործիք՝ միկրոտոմ (նրբանատ), որի միտքը տվել էր Պուրկինյեն: Միկրոտոմի միջոցով կարելի է առարկան վերածել շատ բարակ շերտերի, մինչև 1—2 միկրոն (միլիմետրի հազարերորդական մասը) հաստությամբ: Բայց այդ

գործիքով կտրելու համար առարկան պետք է ամուր լինի, և  
ահա մշակվում է պարագինելու մեթոդը, օգտագործվում է տեր-  
մոսատարը, որի մեջ կարելի է ջերմությունը ցանկալի աստիճա-  
նի վրա պահել երկար ժամանակ: Մեծ ծավալ է ստանում ներ-  
կերք գործածությունը: Այնուհետև պատրաստի կտրվածքը ու-  
ղույն եղանակներով պարզեցնում և ընկզմում են հատուկ նյու-  
թի մեջ՝ գլիցերին, գլիցերին-ժելատինի, կանաչական բալասա-  
նի և այլն, առաջ ծածկում են բարակ ապակով ծածկապակով:  
Այդպիսի պրեպարատը կարելի է պահել շատ երկար ժամանակ:

Թէ միկրոսկոպը և թէ  
միկրոսկոպային տեխ-  
նիկան շարունակում  
են զարգանալ նաև  
մերօրերում: Միկրոս-  
կոպի և միկրոսկոպիա-  
կան տեխնիկայի բուռն  
զարգացումը և մեծ հա-  
ջողություններն ար-  
դեն 19-րդ դարի վեր-  
ջերում հնարավորու-  
թյուն տվին տեսնելու  
բջջի մեջ այն, ինչ  
Շվանի ժամանակա-  
շրջանի միկրոսկո-  
պիստները նույնիսկ  
երազել չեն կարող:  
Դրա շնորհիվ 19-րդ  
դարի կեսից սկսած  
բջջի ուսումնասիրու-  
թյունը հսկայական  
թափ է ստանում, բջջի



Նկ. 3. Իվան Զիստյակով:

կազմության ու կյանքի հարցերը, Փիզիոլոգիայի, գենետի-  
կայի, սիստեմատիկայի և այլ մասնաճյուղերի հետ ունեցած  
կապերը չափաղանց խորն ու բոլվանգակալից են գառնում: Առա-  
ջանում է բիոլոգիայի մի նոր մասնաճյուղ՝ բջջաբանություն,  
ցիտոլոգիա:

**Մենք** անհրաժեշտ ենք համարում ընտրել բազմահազար փաստերից մեկը՝ վերջին մի քանի տասնամյակների համար ամենաէականը և մի քանի պատմական կարևոր տեղեկություններ հաղորդել դրա մասին։ Այդ փաստը ըջջի անուղղակի բաժանման կամ կարիոկինեղի գյուտն է։

**Առաջինը** Անտոն Շնայդերը 1873 թվականին տեսավ և նկարագրեց կարիոկինեղը որդերի ըջիչներում, բայց նա այդ երկույթին առանձին կարևորություն չտվեց։

**Երկրորդ** գիտնականը Օտտո Բյուչին էր, որը 1874 թվականին նկարագրեց կարիոկինեղը դարձյալ կենդանական օբեկտների վրա։

Կարիոկինեղը բուսական բջիջներում առաջին անգամ հայտաբերեց և 1874 թվականին բավականին գով նկարագրեց ուսւանութեալի գիտնական իվան։ Զիսայակովը, Նա որոշակի տարբերում էր մայր և զուստր աստղերը, այսինքն՝ մետաֆազը և անաֆազը, կարիոկինեղի փազերից երկուսը։

Երրորդ Ստրասբուրգի երկրորդ անդամ գտավ կարիոկինեղը բուսական բջիջներում և այսուհետեւ իր հետագա երկարաժամկան գործունեության մեծ մասը նվիրեց այդ երեսույթի ուսումնասիրությանը։ Ստրասբուրգի հետազոտությունները մեծ հետաքրքրություն առաջացրին բջջի բաժանման պրոցեսների վերաբերյալ։ Պարզվեց, որ կարիոկինեղը, որ մինչ այդ նկատվել էր միայն բազմացման բջիջներ՝ սպոր և զամետ առաջացնող հյուսվածքներում, իրականում շատ ավելի լայն է առ-




Նկ. 4. Սերգեյ Նավաշին։

բածված. այն հատուկ է նաև բույսի մյուս բոլոր բջիջներին։ Այստեղից, ինչպես և բազմաթիվ ստորակարգ բույսերի ուսումնասիրության տվյալների հիման վրա, հետեւցնում են, որ կարիոկինեղը բջիջի բաժանման ոչ թե մի մասնիկի ձև է, այլ ամենասովորական եղանակը։ Վերջապես Վալթեր Ֆլեմինգը 1879 թվականին մանրամասն նկարագրեց կարիոկինեղի ընթացքը իր

բոլոր ֆագերով։ Նա մտցըրեց նաև միտոզ և ամիտոզ տերմինները, որոնցից առաջինը նշանակում է կարիոկինեղ կամ անուղղակի բաժանում, իսկ երկրորդը՝ ուղղակի բաժանում։

Այնուհետև հարյուրավոր գիտնականներ ուսումնասիրել և շարունակում են ուսումնասիրել կարիոկինեղը և այդ պրոցեսի ընթացքում կազմվող մարմնիկները՝ քրոմոսոմները։ Այդ գիտնականներից պետք է հիշատակել Օսկար Հերավիդին, որը պարզեց բեղմնավորության բջջային էությունը, նա ցույց տվեց, որ այդ պրոցեսի ժամանակ միանում են երկու սեռական բջիջներ՝ գամետները



Նկ. 5. Արդի միկրոսկոպ

և նրանց կորիզները։ Այդ փաստից նա հետեւթյուն արեց, որ կոլիզը ժառանգական հատկությունների կրողն է։

Բույսերի բեղմնավորության էությունը պարզեցին երկու սուս տաղանդավոր բուսաբաններ։ Դրանցից իվան Գործանկինը 1880 թվականին ցույց տվեց, որ բույսերի բեղմնավորության ժամանակ ևս կորիզները միանում են։ Ավելի ուշ՝ 1898 թվականին Սերգեյ Նավաշինը ցույց տվեց, որ ծաղկավոր բույսերի մեջ տեղի է ունենում կրկնակի բեղմնավորություն։ Նա-

վաշինը մեծ աշխատանք կատարեց նաև քրոմոսոմների ուսում-նասիրության ասպարեզում:

Թեոդոր Բովերին մի շարք տարիների ընթացքում՝ 1887—1907 թվականներին ուսումնասիրել է քրոմոսոմները և այն նզ-քակացության է եկել, որ զբանք ունեն անհատականություն, որով հիմք է գրվում ժառանգականության բջջաբանական տես-սությանը:

1896 թվականին լույս է տեսնում գենետիկ բջջաբանու-թյան առաջին մեծ ընդհանրացումը, որը պատկանում է ամերի-կացի ականավոր բիոլոգ Էդմոնդ Վիլսոնի զբչին:

Բջջի մեջ տեղի ունեցող պրոցեսները կապվում են ոչ միայն ժառանգականության հետ, այլև ֆիզիոլոգիայի, հիվանդաբա-նության, սիստեմատիկայի, ֆիլոգենիայի հետ:

## ԲՉԻՃԸ ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ

... Կյանքի համարյա ամեն մի (Փիզիոլոգիական) զարգացման հիմնական ձևը բջիջն է ...  
Ֆ. Լիգելս

Նախորդ գլխում ասել ենք, որ բջջի ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի բիոլոգիայի մյուս մասնաճյուղերի համար և որ բիոլոգիական շատ հարցերի լուծումը բջջի հետ է կապված: Դրա պատճառն այն է, որ բջիջը հիմնական կենսական միավորն է:

Ամենից առաջ, բջիջը կենդանի օրգանիզմների կազմության հիմնական միավորն է: Դա կնշանակի, որ բոլոր կենդանի էակները՝ բույսերը, կենդանիները, մանրեները կազմված են մեկ կամ մի քանի (երբեմն շատ մեծ թվով) բջիջներից: Բարձրակարգ օրգանիզմի որ մասն էլ վերցնելու լինենք՝ միայն բջիջների կհանդիպենք: Ճիշտ է, որոշ հյուսվածքներ բոլորովին բըջջային պատկեր չեն ունենում, բայց, ինչպես արդեն ասել ենք, եթե դրանց զարգացմանը հետևենք, կտեսնենք, որ այդ հյուսվածքները նույնպես բջիջներից են առաջանում և վազ բրջաններում որոշակի բջջային կազմություն են ունենում: Այդպես են, օրինակ, բույսի ջուր փոխազրող հյուսվածքներից շտաները՝ երբեմն էլ հյուսվածքը սկզբում կարծես բջիջներից չի կազմված, բայց ավելի ուշ պարզ երևում է նրա բջջային կազմությանը, օրինակ, որոշ բույսերի սերմերի սպիտակուցը՝ էնդոսպերմը իր զարգացման սկզբում բջջային կազմություն չի ցույց տալիս: Միայն ավելի ուշ նրա մեջ միջապատեր են առաջ գալիս և այդ ամբողջ մասը պարզ տեսանելի բջիջների է վերածվում:

Հարցը բարգանում է, իրբ մենք դասնում ենք նախէակներին, որոնց մեջ, ի գեղ ասած, կազմության բազմազան ախապեր կոն: Նախէակների կամ մանրեների մեծ մասը տիպիկ բըջիջներից է կազմված՝ կորիզով և պրոտոպլասմայով: Մակայն

կան և այնպիսի մանրեներ, որոնց մեջ բջջի այդ հիմնական մասերը լրիվ ներկա չեն; Օրինակ, լավ արտահայտված կորիկ չենք տեսնում բակտերիաների և կապտականուշ ջրիմռոների մեջ։ Բակտերիաների մասին այն կարծիքն է տիրապետում, որ դրանք կորիկ ունեն, բայց ոչ թե մի ամփոփ մարմնի ձեռվ, այլ մանր հատիկներով՝ ցրված պրոտոպլասմայի մեջ։ Ըստ երկույթին, դա կորիզի զարգացման և ձևավորման ավելի պարզ աստիճանն է։ Մի նման կարծիք կա նաև կապտականաչ ջրիմռոների մասին, որ սրանք ևս կորիկ ունեն, սակայն հատուկ տիպի։

Կան բազմաթիվ մանրեներ, օրինակ, վիրուսները և բակտերիոֆագները, որոնք, բակտերիաների հետ համեմատած, շատ ուշատ մանր են և նույնիսկ միկրոսկոպով անտեսանելի։ Շատ հավանական է, որ սրանք ևս տիպիկ բջջային կտղմություն չունեն։ Այս փաստերը մեղ ասում են, որ բջիջը, ինչպես և ամեն մի կենդանի օրգանիզմ, ունեցել է իր զարգացումը, որը շատ հազարամյակներ է տևել։ Գիտության արդի վիճակում դեռևս հնարավոր չեն ճշդրիտ կերպով գծել զարգացման այն ուղին, որով անցել է առաջին ամենապարզ օրգանիզմը՝ չափազանց փոքր և պարզ կենսակիրը մինչև որոշակի ձևավորված բջիջ օրգանիզմը։ Ներկայումս հայտնի փաստերը հնարավորություն են տալիս միայն ենթադրություններ անելու։ Մտկայն կասկածից գուրս է, որ առաջին պարզագույն օրգանիզմից մինչեւ առաջին բջիջ-օրգանիզմը շատ ավելի երկար ժամանակ է անցել, քան առաջին բջիջը մինչեւ ամենաբարդ կենդանիներն ու բույսերը կորիզավոր բջիջն այն շրջադարձային աստիճանն է, որը մի կողմից հանդիսանում է պարզագույնների պատմական զարգացման պըսսակը, մյուս կողմից՝ բազմաբջիջ բարդ օրգանիզմների առաջացման ելակետը։

Այսպիսով, քննելով մի շարք բացառիկ գեղքեր, մենք կարող ենք վերստին պնդել, որ իսկապես բջիջը կենդանի օրգանիզմների կազմության հիմնական միավորն է։

Որոշ գիտնականներ, հատկապես Վիրխովը և ապա Հեկենլը այն կարծիքն էին պաշտպանում, որ բազմաբջիջ օրգանիզմը բջիջների մի պետություն է, որը կազմող բջիջ քաղաքացիները թե՛ն համաձայն փունկցիաների բաժանման սկզբունքի որոշ

առանձնահատկություններ ունեն և մեկն առանց մյուսի չեն կարող ապրել, այնուամենայնիվ ինքնուրույն անհատներ են:

Բջիջը միենուույն ժամանակ ֆիզիոլոգիական միավոր է, քանի որ բոլոր կենսական ֆունկցիաները կապված են «կենդանի նյութի»՝ պրոտոպլասմայի և կորիզի հետ և դրանց մեջ են կատարվում: Բջջի մեջ են կատարվում անդառության, շնչառության, աճման, շարժման, զգացողության, բազմացման և այլ կենսական ֆունկցիաների բուն պրոցեսները: Ականավոր դիտնական ֆերվորնը ասել է, որ ընդհանուր ֆիզիոլոգիան բջջի ֆիզիոլոգիան է:

Սակայն թե «օրգանիզմի բջիջների պետություն» և թե «բջջային ֆիզիոլոգիան որպես ընդհանուր ֆիզիոլոգիա» գաղափարների մեջ խիստ կերպով շեղում է բջջի անհատականությունը, բայց անտեսվում է այն կարևոր փաստը, որ բազմաբջիջ օրգանիզմը բջիջների սոսկ գումար չէ, այլ մի ուրիշ կարգի ամբողջություն՝ մորֆոլոգիական և ֆիզիոլոգիական բազմաթիվ այնպիսի հատկություններով, որոնք առանձին բջիջները բոլորովին չունեն:

Բջիջը նաև գենետիկական միավոր է: Միաբջիջ օրգանիզմի անումը և զարգացումը նույնն են, ինչ որ բջջի անումը և զարգացումը՝ Բազմաբջիջ օրգանիզմների անումը պայմանավորվում է արդեն ոչ միայն նրա կազմության մեջ մտնող բջիջների աճմամբ, այլև գերազանցապես դրանց բազմացմամբ. բարդ օրգանիզմը մեծանում է, որովհետև նրա կազմող բջիջները շատանում են: Բացի դրանից, մենք գիտենք, որ բազմաբջիջ բարդ բույսի մարմնի զանազան մասերը նույնանման ներքին կազմություն չունեն. սա պայմանավորվում է բջիջների տարրերացմամբ՝ դիֆերենցիացիայով: Սկզբում՝ զարգացման առաջին աստիճաններում օրգանիզմի բոլոր բջիջները համարյա միանման են լինում, ունակայն դրանցից հետպատճե առաջանում են իրարից տարրեր և զանազան ֆունկցիաներ կատարող բջիջներ, որոնք կազմում են զանազան հյուսվածքներ: Այսպիսով, բարդ օրգանիզմի մասը զառնալով՝ բջիջը շարունակում է իր զարգացումը՝ փոփոխվելով և նորանոր ձևեր ընդունելով:

Արգեն այն փաստը, որ բոլոր կենդանի էակները կազմված

են բջիջներից, մի հզոր ապացույց է, որ բարդ օրդանիզմը միաս  
բջիջ օրդանիզմից է առաջացել: Մենք այդ նույնն ավելի ցայ-  
տուն կերպով կտեսնենք, եթե հետևենք բարդ օրդանիզմի ան-  
հատական զարգացմանը, որը մեկ բջջից՝ բեղմնավորված ձվաբըշ-  
ջից է սկսվում: Այդ նույնն է ապացուցում նաև այն երեսոյթը,  
որ բույսի յուրաքանչյուր կենդանի բջիջ ընդունակ է որոշ պայ-  
մաններում մի նոր ամբողջական օրդանիզմ տալու:

Ամփոփելով ասածներս՝ կարող ենք եզրակացնել, որ իսկա-  
վես բջիջը հիմնական կենսական միավոր է և որ բոլոր օրդա-  
նիզմների զարգացումը պայմանավորվում է բջիջների բազմաց-  
մանը ու տարբերացմանը:

## ԲԶՃԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

...Անձեւ սպիտակուցից՝ կորիզի և թաղամթը  
ձեավորման շնորհիվ առաջացակ առաջին բջիջը  
Ֆ. Էնգելս

Ինչպես առաջին դիմում ասված է, սկզբում հայտաբերենք  
են բջջի թաղանթը և կարծել են, որ դա է նրա գլխավոր մասը՝  
Այդ պատճառով էլ Հուկը տվիլ է բջիջ<sup>1</sup> (խորշ) անունը՝ միտն-  
դամայն համապատասխան դոյցություն ունեցող պատկերաց-  
մանը:

Զնայած հետագայում գիտնականները փոխել են բընց  
կարծիքը և սկսել են բջջի դիմավոր մասը համարել կորիզը և  
պըստոպլասման, որոնց համար նոր անուն են առաջարկել՝ պըստ-  
ոպլաստ, այնուամենայնիվ բջիջ անունը մնացել է, նոր բովան-  
դակության է ստացել և լայն կերպով գործ է ածվում պըստո-  
պլաստ բառի փոխարեն:

Եթե մենք համեմատենք կենդանիների, բույսերի և նախէակ-  
ների տարրեր բջիջները, աղա մեծ բազմազանություն կտևանենք։  
Ամենից առաջ բջիջներն իրարից տարրերվում են մեծությամբ։  
բջիջները մեծ մասամբ փոքր են և չափվում են միլիմետրի հա-  
զարերորդական մասերով՝ միկրոններով, որոնց նշելու համար  
գործ են ածում հունարեն մի կոչված տառը լի։ Սովորաբար բջիջ-  
ները լինում են 15—30 միկրոն և ավելի մեծ՝ մինչև մի քանի  
միլիմետր ու սանտիմետր, և կամ թե ավելի փոքր։ Մեծ բջիջնե-  
ները երկում են առանց խոշորացույցի։ Օրինակ, բամբակի սեր-  
մերի վրա գտնվող մաղիկները մեկական բջիջ են, բայց հաս-  
նում են մինչև 5 սմ երկարության և ավելի։ Էլ ավելի երկար  
են կտավիատի թելիկները, որոնք նույնպես խիստ երկարացած  
բջիջներ են։ Այդքան մեծ չեն, բայց ուժեղ լույսի տակ պարզ

<sup>1</sup> Լատիներեն՝ ցելե հունարեն՝ կիտոս կամ ցիտոս։

Եղեռում են հասած ձմերուկի փիբուն պատղամասի բջիջները, հասած առմատի բջիջները, կենդանու մարմնում ևս կան այդպիսի հօկա բջիջներ. օրինակ, ձվարջիջները, նյարդային բջիջները։ Դրան կից մենք տեսնում ենք նաև շատ փոքր բջիջներ, որոնց երկարությունը 1—2 միկրոնից չի անցնում։ Այդպիսի չափերունեն բակտերիաներից շատերը։


Բջիջները տարբերվում են նաև ձևով։ Նրանց մի մասը կայուն ձև չունի և անընդհատ փոփոխում է այն. օրինակ, ամյոբաները, լորձնայորները, Սակայն նախէակների մեջ ավելի շատ են կայուն ձև ունեցողները։ Մրանց բջիջները ևս բազմաձև են՝ գնդաձև, ձվաձև, նավակաձև, թելաձև, հողաթափաձև, զանգակաձև և այլն։ Բազմազան ձևեր ունեն նաև բարձրակարգ օրգանիզմների բջիջները։ Բջջի ձևը կախված է միջավայրից, բազմաբջիջ մարմնի վրա բռնած տեղից, կատարած ֆունկցիայից, զարգացման աստիճանից և այլն։

Բջիջներն իրարից տարբերվում են նաև առանձին մասերով։ Կորիզի կազմությամբ և զարգացման եղանակով, պրոտոպլասմայի կազմությամբ և հատկություններով, նրա կազմող մասերով, արագագրուկներով։ Այդ բազմազանությունը էվոլուցիայի լավագույն ապացույցներից մեկն է, մասնավանդ որ այստեղ մենք հանդիպում ենք նաև բազմաթիվ միջանկյալ ձևերի։

Պրոտոպլասմայի արտադրուկներից մեկն էլ թաղանթն է, որը հատուկ է բուսական բջիջներին և կենդանական որոշ բջիջների։ Պատմականորեն թաղանթը համեմատաբար ուշ է ձևավորվել, և թաղանթավոր բջիջները ծագել են անթաղանթ բջիջներից։ Այդ է պատճառը, որ ստորակարգ շատ բռնյաերի բազմացման բջիջները սկզբում մերկ են լինում և միայն հետագայում են ծածկվում թաղանթով։

Ինարկե, թաղանթավոր բջիջներն իրենց որոշ ֆունկցիաներում սահմանափակված են։ Այսպես, բարձրակարգ բռնյայի բջիջը չի կարող աղատ կերպով մի տեղից մյուսը անցնել, գրահետ կապված՝ չի կարող ունենալ զգացող և զգացողությունը փոխադրող զարգացած մասեր, քանի որ շարժունությունից և զբարին պատասխանելու հնարավորությունից զուրկ լինելու պայմաններում ուժեղ զգացողությունը իմաստ չէր ունենալ։ Միևնույն ժամանակ, թաղանթը բռնական բջջի և ամբողջ բռնյայի

Համար կմախքի դեր է կատարում: Դրա շնորհիվ բույսի առանձին մասերը կայունանում են տարածության մեջ՝ հողում և օգում, բույսը կարողանում է թափանցել հողի մեջ ու ամրանալ մեծ տարածություն գրավել հողի երեսին և արեի շատ լույս կլանել: Այսպիսով ապահովվում է բույսի հանքային և օդային սննդառությունը:



Նկ. 6. Բուսական բջիջներ:

Բայց չպետք է կարծել թե բույսի պրոտոպլաստները բացարձակ մեկուսացած են իրարից: Բջջաթաղանթների մեջ տեղ-տեղ ջատ նուրբ անցքեր կան, որոնց միջով մի բջջի պրոտոպլաստն բարտկ թելիկներով կապվում է մյուսի հետ: Պրոտոպլաստայի այդ նրբին թելիկները կոչվում են պլասմոդեսմիներ: Ուրեմն, ինչպես կենդանական, այնպես էլ բուսական բջիջների պրոտոպլաստներն անժիջապես կապված են իրար հետ, բայց վերջիններու շատ ավելի սահմանափակ կերպով:

Բջջի հիմնական մասերն են պրոտոպլաստը և թաղանթը: Պրոտոպլաստն իր հերթին բաժանվում է երկու գլխավոր մասերի՝ պրոտոպլաստ և անդամական կորի զինչպես հետագա զլուխներում կտեսնենք, այս երկու զլխավոր մասերը միատարր չեն և, խայած բջջի տեսակին և կատարած ֆունկցիային, զանազան մա-

սեր են պարունակում, որոնք փոփոխվում են բջջի դարձացման  
աստիճանին և միջավայրին համապատասխան։ Պրոտոպլասմայի  
մեջ լինում են հատիկներ, քոնդրիոսոմներ, պլաստիզներ, կորիզին  
մեջ՝ կորիզակ, քրոմատինային հատիկներ, աքրոմատինային  
թելիկներ և այլն։ Կենսական ֆունկցիաները որոշ չափով բա-  
ժանված են այս մասերի միջև։ Դրանք բջջի մեջ նույն դերն են  
կատարում, ինչ որ բարդ օրգանիզմի առանձին օրգանները և  
դրանց նմանությամբ կոչվում են օքանելիքներ։ Դրանց երբեմն  
անվանում են նաև օրգանոիզներ (օրգանանմաններ)։

## ՊՐՈՏՈԳԼԱՍՄԱՆ

Կյանքը սպիտակուցային մարմիններին զոյլության մի ձևն է,

Յ. Էֆելյան

Պրոտոպլասման կամ պլասման բջջի այն մասն է, որտեղ տեղի է ունենում ամենահիմնական կենսական ֆունկցիան՝ նյութերի փոխանակությունը: Վերջինս կազմված է երկու իրար հաւաքակիր պրոցեսներից՝ նոր նյութերի յուրացում կամ տախիլացիա և իր նյութերի ծախսում կամ գիտմիլացիա:

Պրոտոպլասման կիսանեղուկ, մածուցիկ և թափանցիկ կամ կիսաթափանցիկ մարմին է, ջրից մի փոքր ծանր՝ մոտավորապես  $1,02 - 1,09$  տեսակաբար կշռով (մեկ լիտրը կշռում է  $1020 - 1090$  գրամ):

Երիտասարդ բուսական բջիջն ամբողջովին լցված է պրոտոպլասմայով: Սակայն մեծանալու հետ միասին բջջի մեջ երեսն են գալիս մանր խորշեր, որոնք լցվում են բջջայութով, այդ խորչերը կոչվում են վակուուներ: Սրանք հետզհետե մեծանում են և իրար միանում, որի հետեւանքով վակուուների թիվը ըջի մեջ աստիճանաբար փոքրանում է: Ի վերջո, բջջի մեջ մնում է մեկ, բայց շատ մեծ վակուուլ, իսկ պրոտոպլասման կազմում է մի բարակ շերտ բջջաթաղանթի տակ, մի փակ պարկ՝ լցված բջջայութով:

Շատ զժվար է ուսումնասիրել պրոտոպլասմայի քիմիական բաղադրությունը՝ նրա մեջ մտնող քիմիական տարրերը և միացությունները: Դրա պատճառն այն է, որ անալիզի համար մեծ քանակությամբ մաքուր պրոտոպլասմա է հարկավոր, իսկ շուտ և մաքուր պրոտոպլասմա ունենալ հնարավոր չէ: Ինչպես արդեն ասել ենք, ըջի մեջ բացի պրոտոպլասմայից էլի շատ ուրիշ մարմիններ կան, որոնց անշատելը շատ զժվար է: Սովորաբար անալիզի համար վերցնում են լորձնաբույսերի մարմինը (պլաս-

մռղիումը), որը կազմված է իրար կպած բազմաթիվ անթաղանք քջիջներից: Ի հարկէ, պլասմոգիումը զուտ պրոտոպլասմա չէ, բայց ամենից քիչ է խառնուրդ պարունակում: Կան և այնպիսի քիմիական մեթոդներ, որոնց գեպքում քիչ պրոտոպլասման էլ բաժական է անալիզի համար:

Կառարված անալիզներից պարզվել է, որ պրոտոպլասմայի մեջ (կորիզի հետ խառը) հանդիպում են շատ քիմիական տարրեր՝ մոտավորապես 40 տեսակ: Սակայն գրանք բոլորն էլ անհրաժեշտ չեն բույսի համար: Դրանցից տասը անպայման լինում են: Գրանք են՝ ածխածին, ջրածին, թթվածին, ազոտ, ծծումբ, ֆոսֆոր, կալիում, կալցիում, մագնիզիում և երկաթ, որոնք կոչվում են օրգանոգեն տարրեր: Բացի դրանցից, բավական հաճախ են հանդիպում թլուր, սիլիցիումը, նատրիումը և մանգանը: Պրոտոպլասմայի մեջ այդ տարրերը հանդիս են գալիս բարդ միացություններով, որոնք բազմաթիվ տեսակների են լինում: Դրանց մեծ մասը օրգանական է և փոքր մասը՝ անօրգանական: Օրգանական են կոչվում ածխածնի և ջրածնի միացությունները, որոնց հետ կարող են և այլ տարրեր լինել իսկ անօրգանական նյութերի մեջ ածխածնի և ջրածնի կապ չկա:

Որպես օրինակ, բերենք Լեպյոշինի կտտարած անալիզի արդյունքները: Պարզվել է, որ ամենից առաջ, պրոտոպլասմայի մեծ մասը ջուր է, տվյալ անալիզում ստացվել է 82,6%: Իսկ մնացածը չոր նյութեր՝ 17,4%: Եթե բոլոր չոր նյութերն ընդունենք 100%: ապա սպիտակուցները և հարակից նյութերը կտպում են 68,8%, ածխաջրերը 14,2%, ճարպերը և ճարպանման նյութերը 11,3%, անօրգանական աղերը 2 9%: զանազան այլ նյութերը 3,5%: Այլ բույսերի (և կենդանիների) պրոտոպլասմայում այդ նյութերն ուրիշ քանակություններով են լինում:

Այսպիսով, անալիզներից երկում է, որ պրոտոպլասմայի չոր նյութերի ամենամեծ մասը սպիտակուցներն են: Տեսնենք թե ինչ նյութեր են գրանք: Վերևում հիշատակված երեք խումբ օրգանական նյութերից երկուսը՝ ածխաջրերը և ճարպերը կազմված են ածխածնից, ջրածնից և թթվածնից տարրեր հարցերություններով: Իսկ սպիտակուցները, բացի այդ երեք տարրերից, պարունակում են նաև ազոտ, ծծումբ, հաճախ ֆոս-

Գոր և այլ տարրեր: Սպիտակուցների մեջ ազոտը կապված է ջրածնի հետ:

Սպիտակուցները բնորոշվում են նաև նրանով, որ սրանց մասնիկը կազմված է լինում հարյուրավոր և հազարավոր ատոմներից և համեմտտած այլ նյութերի մասնիկների հետ շատ խոշոք է:

Սպիտակուցների մասնիկը բարդ է և այն տեսակիակից, որ բաղադրված է այլ ավելի պարզ սպիտակուցներից, սրանք էլ ավելի պարզերից: Սպիտակուցների ամենապարզ կազմող միացություններն են ամինոթունները և թթունների ամինները, որոնք շատ բազմազան են լինում: Տարրեր ամինոթթուններ և թթունների ամիններ զանազան քանակություններով միանալով տալիս են շատ տեսակի պարզ սպիտակուցներ: Դրանք էլ խմբեր կազմելով ավելի բարդ սպիտակուցներ են առաջնացնում: Այսպես ստացվում են այն բազմատեսակ սպիտակուցները, որոնք հանգիպում են տարրեր բույսերի բջիջներում:

Պրոտոպլասմայի քիմիական բաղադրության այս շատ համառոտ նկարագրությունից երևում է հետևյալը: Նախ բջջի մեջ չկա մի այնպիսի տարրը, որ միայն նրա մեջ հանդիպի: Բջջը բոլոր քիմիական տարրերը ստանում է շրջապատող միջավայրից: Դրանք բոլորը կան անօրգանական աշխարհում: Բույսի մննդառության մեջ բնորոշ հենց այն է, որ նա շրջապատից՝ ջրից և օդից վերցնում է իրեն անհրաժեշտ մննդանյութերի համար անօրգանական հումքը՝ ջուր, ածխաթթու գազ, զանազան աղեր և գրանցից բարդ օրգանական նյութեր է պատրաստում:

Հետաքրքրական է, որ պրոտոպլասման շրջապատից ամեն նյութ չի վերցնում, այլ ընտրում է իրեն անհրաժեշտը և հարկավորը: Բայց նա գտնվում է այդ շրջապատի ազդեցության տակ, որովհետև կարող է վերցնել միայն այն, ինչ կա այնտեղ: Միջավայրում նվազագույն պայմանների բացակայության դեպքում պրոտոպլասման, հետեւապես և բռյալը, ապրել չի կարող, մինչև որ նրա մեջ նոր հարմարանքներ չառաջնանան:

Պրոտոպլասմայի նյութափոխության հետևանքով փոխվում է շրջապատող միջավայրը: Բայց վերջինիս փոխվելու հետ փոխվում է ինքը՝ պրոտոպլասման:

Քանի որ պրոտոպլասմայի ամենամեծ մասը սպիտակուց-

Ներն են, մասամբ որոշ ճարպանման նյութեր, ապա հենց դրանք էլ նամարվում են կյանք կրողները: Այս գլխի սկզբում որպես գեղիք բերված էնդեևսի խօսքերը՝ «Եյանքը սպիտակուցների գոյության մի ձեռն է», լրիվ արտահայտում է այդ միտքը:

Երբ ցանկանում են որոշել, թե թջի մեջ պրոտոպլասմա կա թե ոչ, սովորաբար սպիտակուցի ռեակցիա են կատարում, այսինքն, հատուկ նյութերով ազդում են և դիտում հետևանքը: Հեղենք սպիտակուցի ռեակցիաներից մի քանիսը: Եթե փորձանոթի մեջ 1—2 խամ ազոտաթթվական մնդիկի լուծույթ (Միլոնի ռեակտիվ) լցնենք և մեջը բռայսի ծիլեր դնենք ու եռացնենք, ապա պրոտոպլասմայով հարուստ արմատիկների ծայրերը կկարմրեն: Եթե պղնձի արջասպի և կծու նատրոնի լուծույթի մեջ մի փոքր սպիտակուց (օրինակ, ձվի սպիտակուց) լցնենք ու եռացնենք, մանուշակագույն կղառնա (բլուրեայան ռեակցիա): Եթե սպիտակուցը թունդ ազոտաթթվի մեջ եռացնենք, նա կդեղնի:

Մեծ նշանակություն ունի այն հանգամանքը, որ պրոտոպլասմայի մեջ ջրի տոկոսը շատ մեծ է, պրոտոպլասմայի ավելի քան չորս հինգերորդ մասը ջուր է: Ջրի շատրնիվ քիմիական պրոցեսները կատարվում են արագ և ամենափառ: Ջուրը հնարավորություն է տալիս նյութերի լուծվելուն, ավելի շարժուն դառնալուն և աշխատույթ նյութափոխանակություն կատարվելուն: Առանց ջրի պրոտոպլասման կենսական պրոցեսներ կատարել չի կարող: Օրինակ, օդային չոր, բայց կենդանի, սերմերում շնչառությունը չափազանց թույլ է կատարվում, և յուս պրոցեսները նմանապես խիստ ձնշված են: Հայտնի է, որ սերմերի ծլերու անհրաժեշտ պայմաններից մեկը ջուրն է:


Պրոտոպլասմայի մեջ մտնող համարյա բոլոր օրգանական նյութերը կուլուկի դեռ, այսինքն այնպիսի նյութեր են, որոնք հեղուկի մեջ ոչ թե ամենափոքը մասնիկների են վերածվում, ինչպես իսկական լուծույթ առաջացնող նյութերը, այլ համեմատաբար ավելի խոշոր՝ 1—100 միլիմետրոն (միլիմետրի միլիոներորդ) մասերի: Դրանք հեղուկի մեջ գտնվում են կախված վիճակում: Կոլլոիդ նյութերը որոշ թաղանթներով չեն անցնում: Եթենց մասնիկների խոշորության պատճառով: Դրանցից շատերն ընդունակ են ոչ միայն հեղուկ՝ դոլ վիճակում լինելու, այլ և հեշտությամբ անցնում են ավելի խիտ, դոնդող՝ գել (ժել) վիճակի:

Վերջին գեղքում նյութի մասնիկները իրար մոտենալով է՛ւ ա-  
վելի խոշոր կնծիկներ են կազմում Հետաքրքրական է, որ եթե  
նյութը զու վիճակումն է, ապա նրա մասնիկներն անընդհատ  
շարժման մեջ են: Այդ շարժումը կոչվում է Բրունյան մոլիկու-  
լային շարժում: Գելի մեջ այդպիսի շարժում չկա: Հաճախ կոլ-  
լոփիդ լուծույթը ոչ թե ամբողջովին է գելի վերածվում, այլ  
միայն մակերեսին: առաջանում է մակերեսային թաղանթ: Կոլ-  
լոփիդ նյութերը, մանավանդ գել վիճակում, մի հետաքրքրական  
հատկություն էլ ունեն—զրանք կարողանում են հեղուկ ներ-  
ծել և ուռչել: Եթե մի կտոր ժելատին կամ չոր սոսինձ զնենք  
գոլ ջրի մեջ, ապա կարճ ժամանակից հետո կուռչի: Բանի որ  
պրոտոպլասման կոլլոփիդ վիճակումն է գտնվում, այդ պատճառով  
էլ նկարագրված բոլոր երկույթները աեղի են ունենում նրա  
մեջ. պրոտոպլասմայի որոշ մասերը կարող են անցնել զոլից  
պելի և ընդհանականը, նրա երեսին կարող է թաղանթ առա-  
ջանալ, նա կարող է ջուր ծեծել և ուռչել, ջուր պահել կամ նո-  
րից ջրազրկվել և այլն:

Պրոտոպլասման արտաքին միջավայրից կարող է ջուր կամ  
լուծույթներ ներծծել ոչ միայն կոլլոփիդների ջուր քաշելու և  
ռւաչելու հետեւնքով, այլ և օսմոսի շնորհիվ:

Հայտնի է, որ ընդհանրապես նյութերն իրար խառնվելու  
ընդունակություն ունեն: Օրինակ, եթե ամանի մեջ մի շերտ  
ներկված ջուր լցնենք և զրա վրա զգուշությամբ մի շերտ  
ժաքուր ջուր ավելացնենք, այնպես որ շերտերը չխառնվեն, և  
մի հանգիստ տեղ դնենք, կտեսնենք, որ ժամանակի ընթացքում  
այդ երկու շերտերը խառնվում են: Այս երկույթը կոչվում է  
պիֆուզիա: Իսկ եթե երկու հեղուկների միջև որևէ կենդանա-  
կան կամ արհեստական կիսաթափանցիկ թաղանթի լինի, ապա  
հեղուկները կխառնվեն անցնելով թաղանթի միջով: Այս երե-  
մույթն էլ կոչվում է օսմոս: Սակայն թաղանթի միջով բոլոր  
հեղուկներն էլ հավասար արագությամբ չեն անցնում: Եթ-  
ուագագիտական թաղանթը կոչվում է նյութերը չեն անցնում:  
բարձր կոնցենտրացիայի լուծույթները, որոնց մեջ շատ նյութեր  
կան լուծված, գանդաղ են անցնում, իսկ փոքր կոնցենտրացիայի  
լուծույթներն՝ ավելի արագ: Բնական պայմաններում բուսական  
բջիջի վակուուներում գտնվող բջջահյութը ավելի բարձր կոնցեն-

արացիա ունի, քան միջավայրի լուծույթը։ Դրա հետևանքով ջուրը և նրա մեջ լուծված նյութերը գրսից ավելի հեշտ են անցնում պրոտոպլասմայի շերտով՝ գեպի ներս, քան թե ըսդհակառակը։ Այդ պատճառով էլ բուսական բջիջները միշտ լցված են լինում ջրով և անլոնդաս զրաից նոր ջուր են ստանում։ Բջջի մեջ կուտակված լուծույթը ճնշում է պրոտոպլասմայի և թաղանթի վրա և ձգում է զրանց։ Որքան բջջի մեջ հեղուկ շատ կա և հետևապես որքան թաղանթը շատ է ձգված, այսքան բջջի ներքին ճնշումը մեծ է։ Այդ ճնշումը կոչվում է օսմոտիկ ճնշում, իսկ բջջի ձգված վիճակը՝ տուրգոր



Ֆի. 7. Պլասմոլիզ:

ինչ կկատարվի, եթե օսմոտիկ ճնշումը թուլանա և բջջի ձգված վիճակը՝ տուրգորը վերանայ։ Այդպիսի վիճակ ստեղծելու համար պետք է ըջիջը, հակառակ բնական պահանջին, տեղափորել ավելի բարձր կրնցենտրոցիայի լուծույթի մեջ։ Դրա համար գործ են ածում 5—8% աղի կամ շաքարի լուծույթ։ Այս գեպքում ներսից ավելի շատ հեղուկ է դուրս գալիս, քան գեպի ներս գնում, և բջիջը թուլանում է։ Ասկայն բջջաթաղանթը և պրոտոպլասման նույն կայունությունը չունին։ Քջաթաղանթն ավելի կայուն է և պակաս առածգական, քան պրոտոպլասման։ Դրա հետևանքով պրոտոպլասման ավելի շատ է կծկվում, քան թաղանթը, և անջատվելով գերջինից գունդ է դառնում բջջի ներսում։ Բջջի այս վիճակը կոչվում է պլասմոլիզ։

Եթե բջիջը նորից տեղափոխենք նորմալ պայմանների մեջ, այսինքն գնենք ցածր կոնցենտրացիայի լուծույթի մեջ, աեղբ կունենա հակառակ պրոցես՝ գեպլասմոլիզ։ Ե բջջի տուրգորը կվերականգնի։ Որոշ գեպքերում, երբ պլասմոլիզը շատ հեռան է գնում, բջիջն այլևս չի կարողանում վերականգնել իր նորմալ վիճակը և ոչնչանում է։

Մենք կարող ենք որոշել բջջահյութի կոնցենտրացիան։ Դրա համար պետք է պատրաստել աղի զանազան, բայց որոշակի

հայտնի լուծույթների մի շարք՝ 0,5, 1,  $1\frac{1}{2}$ ,  $2\frac{1}{2}$ ,  $3\frac{1}{2}$  ապա  
պեաք է բջիջը հերթով պահել դրանց մեջ՝ սկսած ամենաթույ-  
լից, Մի որևէ լուծույթի մեջ կակսի պլասմոլիզ կատարվել-  
մուտավրապես հենց այդքան էլ կլինի բջջահյութի կոնցենտրա-  
ցիան:

Բջջի օսմոտիկ երկույթներին ծանոթանալուց հետո մեզ  
համար պարզվում է, թե ինչու աղուտներում ամեն բույս չի ա-  
ճռւմ: Հողն այդտեղ շատ աղեր է պարունակում, լուծույթի կոն-  
ցենտրացիան բարձր է, և այդտեղ կարողանում են անել միայն  
այն բույսերը, որոնց բջջահյութի կոնցենտրացիան շատ ավելի  
բարձր է, այդպիսի բույս է, օրինակ, օշանը կամ շորանը:

Մեզ համար պարզ է նաև, թե ինչու չի կարելի հանգային  
պարարտանյութերը միանգամից մտցնել հողի մեջ: Վերջին դեպ-  
քում հողի լուծույթի կոնցենտրացիան խիստ կբարձրանա  
և կչռացնի բույսի արժատները:

Մեզ համար հասկանալի է, թե ինչից են բույսերը թառա-  
մում և ինչ կնշանակի թառամում: Թառամումը բջջի տուրքորբ  
վերացումն է և առաջանում է ջրի պահասից: Մենք գիտենք նաև,  
որ թառամած բույսերը կարելի է վերականգնել, բայց որոշ  
դեպքերում դա մեղ չի հաջողվում:

Վերջապես պարզ է նաև այն, որ բույսի թարմ վիճակը ոչ  
միայն թաղանթով է պայմանավորված, այլև տուրքոր վիճակով,  
դրա շնորհիվ է, որ տերմները և դալար ճյուղերը կարողանում են  
պահել իրենց դիրքը տարածության մեջ, իսկ տուրքորն ընկնե-  
լու դեպքում կախվում են:

Կենդանի պրոտոպլասման համասեռ մարմին չէ, մեծ խո-  
շորացմամբ մանրամասն դիտելով կարելի է տեսնել, որ նըա  
տարքեր մասերը միանման կազմություն չունեն: Ամենից առաջ  
պրոտոպլասմայի մակերեսային շերտը միշտ էլ տարբերվում է  
ներքին մասից և կոչվում է կաշեկերպ շերտ կամ էկտոպլասմա:  
Այս շերտն ավելի խիստ է, մեծ մասամբ համասեռ և թափանցիկ,  
մինչդեռ ներքին պլասման կամ էնդոպլասմա ավելի նորը է:  
Հատիկավոր և ավելի մուգ: Պրոտոպլասմայի այդ ելքու մասե-  
րը էկտոպլասման և էնդոպլասման խիստ տարբերացված չեն:  
Դրանք նույն պրոտոպլասմայի երկու վիճակն են: Եթե մի որևէ

Քնիջ արհեստական կերպով երկու մասի բաժանենք, ապա կը տրած մասում էնդոպլասման կփոխվի էկտոպլասմայի:

Պրոտոպլասման իր ներսում գտնվող ոչ կենդանի մարմինների շուրջը հատուկ բարակ թաղանթ է առաջացնում՝ նժան էկտոպլասմային: Այդպիսով, պրոտոպլասման հատուկ շերտով անջատվում է թե իրենից դուրս և թե իր ներսում գտնվող օտար մարմիններից:

Պրոտոպլասման շատ բարդ կազմություն ունի: Մի շարք գիտականներ այն կարծիքն են արտահայտել, որ պրոտոպլասման երկու տիպի նյութերից է կազմված՝ նուր և խիտ, ըստ որում վերջինը զանազան ձևերով է լինում՝ թելիկների, հատեկների, փրփուրի և այլն: Հետագայում այդ կարծիքը խիստ քննադատեցին, պարզվեց, որ այդպիսի կազմություն հաճախ առաջանում է անկատար միկրոսկոպիական տեխնիկայի հետևանքով: Մյուս կողմից տեսան, որ այդպիսի մասեր, մանավանդ հատիկներ և թելիկներ պրոտոպլասմայի մեջ լինում են և բավական հաջուկ, Պրոտոպլասմայի կազմությունը շատ ավելի բարդ է, քան պտուկերացրել են գիտականները: Նրա մեջ կան զանազան ձևեր ու մեծության և թելիկներ, և հատիկներ, և ցանց ու բջակներ: Շատ հաճախ միննույն ձևի և մեծության մարմնիկները տարբեր ֆիզիկական հատկություններ և քիմիական բաղադրություն են ունենում, հետևապես՝ տարբեր ֆիզիոլոգիական դեր են կատարում:

Պրոտոպլասմայի կազմության մեջ մտնող մարմնիկներից հատկապես աչքի են ընկնում քոնդրիոսոմները: Դրանք զանազան մեծության հատիկներ ու թելիկներ են, փոքր կամ մեծ թվով, որոնք երբեմն համարյա լցնում են ամբողջ թիջը: Քոնդրիոսոմներին շատ գերեր են վերագրում՝ շնչառության մեջ, որպես նյութերի փոխանակության դրդիչներ, պլաստիզների առաջացման մեջ և այլն:

Պրոտոպլասմայի մեջ լինում են նաև վակուոնների սկըզբնակներ՝ գնդաձև կամ երկարավուն փոքր մարմնիկները ձևով: Հետագայում սրանք մեծանում, լցվում են բջջահյութով:

Պրոտոպլասմայի մեջ կատարված բազմաթիվ կենսական ֆունկցիաներից երկուսը համեմատաբար հեշտ է հետազոտել: Դրանցից մեկը նյութերի ել ու մուտն է բջջի մեջ, որ կատար-

վում է օսմոսի շնորհիվ. այդ երեսոյթը մենք համառոտակիր նը-  
կարագրել ենք: Մյուս ֆունկցիան շարժումն է: Մնացած ֆունկ-  
ցիաները հետազոտելու համար լաբորատորական բարդ պայ-  
մաններ են պահանջնում:

Շարժումը պրոտոպլասմայի հիմնական հատկություններից  
մեկն է. յուրաքանչյուր բջիկ պրոտոպլասմա կարող է շարժվել  
Սակայն այդ շարժումը մեծ մասամբ այնքան զանգաղ է կա-  
տարվում, որ միկրոսկոպով անգամ շենք կարողանում նկատել:   
Մի շարք բույսեր կան, որոնց հատուկ բջիջներում պրոտոպլաս-  
մայի շարժումը բավական արագ է կատարվում և լավ տեսանե-  
լի է, նույնիսկ հնարավոր է արագությունը չափել: Որպես օրի-  
նակ, կարող ենք հիշել՝ տրաղեսկանցիք կոչվող բույսի մտ-  
զիկները, խարս ջրիմուսի, էլոգեա և վալիսների ջրարույսերի  
բջիջները: Շարժումն առանձնապես լավ է նկատվում այն բջիջ-  
ներում, որոնց պրոտոպլասմայի մեջ լավ տեսանելի հատիկներ  
կան՝ անգույն կամ գունավոր: Շարժվում է էնդոպլասման իսկ  
էկտոպլասման չի շարժվում: Նայած թե բջիջն ինչ աստիճանի  
է վակուոլավորված, պրոտոպլասմայի շարժումը տարրեր բնույ-  
թի է լինում: Եթե բջիջը ծերացած է, մեկ կենտրոնական վա-  
կուոլ ունի և պրատոպլասման գտնվում է միայն պատերի տակ,  
ապա շարժումը շրջանաձի է միայն պատերի տակով: Ավելի  
երիտասարդ բջիջում՝ պրոտոպլասմայի շերտը պատից պատ միա-  
ցած է լինում պլասմոյի թելերով: Այս գեպքում շարժումը ոչ  
միայն պատերի տակով է կատարվում, այլև պատից գեղիներա  
և ընդհակառակը, պրոտոպլասմայի այսպիսի շարժումը կոչվում  
է ցայտավոր:

Պրոտոպլասմայի շարժման արագությունը կախված է ար-  
տաքին պայմաններից, որոնց թվում նաև ջերմությունից: Ջեր-  
մության մի ինչ որ նվազագույն (մինիմում) աստիճանի դեպ-  
քում պրոտոպլասմայի շարժումը լինում է ծայր աստիճան զան-  
դագ: Որքան ջերմաստիճանը բարձրանում է, այնքան պրոտո-  
պլասմայի շարժումն արագանում է: Համեմով մի ինչ որ ջերմ-  
աստիճանի, որը կարելի է անվանել լավագույն (օպտիմում)  
ջերմաստիճան, նրա շարժումն ամենից արագ է կատարվում:   
Այնուհետև ջերմաստիճանի բարձրանալուն գույկընթաց շարժու-  
մը ոչ թե արագանում է, այլ հետզետե դանդաղում: Մի որոշ

բարձր ջերմաստիճանում՝ առավելագույն ջերմաստիճանում  
(մաքսիմում) շարժումը դադարում է։ Օրինակ, վալիսներիա ջրա-  
ռույսի պրոտոպլասման սկզբում է շարժվել համարյա Յ աստիճա-  
նին մոտ՝ մի փոքր բարձր, դա կլինի նվազագույնը, այդ շարժ-  
ման լավագույն աստիճանն է 31, և առավելագույնը մոտավո-  
րագես 36, որից բարձր պրոտոպլասման այլևս չի շարժվում։

Եարժումը պրոտոպլասմայի կենդանի լինելու նշաններից  
մեկն է։ Պրոտոպլասմայի կենդանի լինելը որոշվում է նաև ռո-  
մուսի շնորհիվ։ Ինչպես ասել ենք, կենդանի պրոտոպլասման ա-  
մեն նյութ չի անցկացնում, իսկ մեռնելուց հետո նա լրիվ թա-  
փանցելի է զառնում։ Օրինակ, եթե գունավոր ճակնդեղը կամ  
կաղամբը կտրածնք, լվանանք և դնենք սառը ջրի մեջ, երկար  
ժամանակ ջուրը պարզ կմնա ու չի ներկվի։ Բայց բավական է,  
որ ճակնդեղի կամ կաղամբի կտրոները խաշենք, պրոտոպլասման  
կմեռնի, գունանյութը հեշտությամբ դուրս կգա, և ջուրը կը-  
ներկվի։

Այս գեղքում, երբ բջջի մեջ գունանյութեր չկան, պրո-  
տոպլասմայի կենդանությունը ստուգելու համար դիմում ենք  
պլասմոլիզի։ Բջիջները տեղափորում ենք շաքարի կամ աղի 5—  
8 տոկոս լուծույթի մեջ։ Եթե 20 րոպեի ընթացքում պլասմո-  
լիզ չկատարվեց, կնքանակի պրոտոպլասման ազատ անց է կաց-  
նում բոլոր լուծույթները, հետեապես նա կենդանի չի։ Ըստիա-  
կառակը, պրոտոպլասմայի կծկվելը՝ պլասմոլիզը, նրա կենդանու-  
թյան ապացույցն է, այս գեղքում նա ամեն լուծույթ չի անց-  
կացնում, այլ ընտրողաբար։

Պրոտոպլասման կարող է մեռնել ոչ միայն բարձր ջերմ-  
աստիճանից, այլև ծանր մետաղների աղերից, թունավոր նյու-  
թերից, որոնցից պրոտոպլասմայի սպիտակուցները մակարդվում  
են և ընդհանրապես նրա մեջ մի շաբթ անհետադարձ պրոցես-  
ներ են կատարվում։

## Կ Ո Ր Ի Զ

....սովհտակուցի մեջ ձեավորվում է կորիզը  
կորիզակով... այնունեաւ աբագ ձեառաջացում է  
ոկավում:

Թ. Էթելիս

Պրոտոպլաստի երկրորդ գլխավոր մասը կուրիզն է, որը միշտ  
էլ տեղավորված է պրոտոպլասմայի մեջ:

Յուրաքանչյուր բջջի մեջ լինում է մեծ մասամբ մեկ կո-  
րիզ, բայց կան և բազմակորիզ բջիջներ: Օրինակ, ստորակալո-  
ւակերը և որոշ խմբի ջրիմուներ ունեն այնպիսի մալժին, որ  
բջիջների չի բաժանված, և պրոտոպլասմայի մեջ բազմաթիվ՝  
հաղարների հաօսնող կորիզներ կան:

Կորիզն ավելի խիտ է և մուգ, քան պրոտոպլասման, և միկ-  
րոսկոպով նկատվում է նաև առանց նախնական մշակման: Կո-  
րիզն ավելի լավ է ներկվում, քան պրոտոպլասման, մանավանդ  
որոշ ներկերով: Դրանք կոչվում են կորիզային ներկեր:

Կորիզի հիմնական նյութերը դարձյալ սպիտակուցներն են,  
միայն թե այստեղ կանակ նուկլեին կոչված՝ ֆոսֆոր պարու-  
նակող բարդ օրգանական նյութը, որը պրոտոպլասմայի մեջ  
սովորաբար չի հանդիպում:


Կորիզի մեծությունը տարբեր է լինում. նայած հյուսված-  
քին և բույսի տեսակին կորիզը կարող է ունենալ 1—600 միկ-  
րոն տրամագիծ, մեծ մասամբ այն հավասար է 5—25 միկրոնի:  
Կորիզի մեծությունը կայուն չէ. նա փոփոխվում է բջջի զար-  
դացման ենու:

Կորիզը շատ տարբեր ձեեր է ունենում. կան կորիզներ եր-  
կարավուն, թելաձե, ճյուղավոր և այլն, բայց դրանք մեծ մա-  
սամբ գնդաձե են կամ մի փոքր ձգված:

Կորիզը բջջի մեջ սովորաբար կենտրոնական դիրք է գրա-  
վում, եթե բջիջը երկասարդ է և դեռ մեծ վակուուներ չունի:

Թիստ վակուոլացած բջիջներում կորիզը պրոտոպլասմայի հետ շնուռմ է պատի տակ: Բայց էլի կորիզը երբեմն պահպանում է իր կենտրոնական գիրքը շնորհիվ պատից պատ ձգվող պրոտոպլասմայի թելիկների: այս դեպքում կորիզը սարդի նման կախված է լինում թելերի վրա:


Կորիզն ունի իր սեփական շատ նուրբ թաղանթը: Նրա ներսում աչքի է ընկնում կորիզակը, որը սովորաբար մեկ հատ է լինում, սակայն կարող են մի քանի կորիզակներ լինել: Հաճախ մի շազի կորիզակները միևնույն քիմիական բաղադրությունը չեն ունենում: Բացի դրանից, կորիզի ներսում նկատվում են զանադան հատիկներ: ու թելիկներ: Դրանց մի մասը հիմնական ներկերից լավ ներկվում է, այդ մասին կիսերը կոչվում են քրոմատինային մարմնիկներ: Զներկվողները կոչվում են աքրոնատինային կոմբինային մարմնիկներ: Դրանց արանքներում գտնվում է հեղուկ կորիզակի կատարությունը: Դա մենք առաջ նշելի է այն փաստը, որ բոլոր բջիջները կորիզ ունեն: Արդեն այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ կորիզը պետք է որ անհրաժեշտ օրգաննել լինի: Սակայն այս անուղղակի փաստը գեռ բավական չէ և վերջնական ապացույց չի կարող համարվել: Երկրորդ, նրա մեջ կատարվում են մի շարք բարդ պրոցեսներ՝ միանման թե բուսական և թե կենդանական բջիջներում: Սա ևս մտածել է տալիս նույնը, սակայն այս փաստը ևս չի սպառում հարցը: Երրորդ փաստն ավելի համոզիչ է: Բջիջը մեջ կորիզը շարժվում է գեղի այն մասը, որտեղ ուժեղ տնում է տեղի ունենում: Օրինակ, եթե բջջապատերն անհամաչափ են հաստանում, ապա կորիզը միշտ գտնվում է առավել չափով հաստացող պատի մոտ: Մի այլ օրինակ, ծաղկափոշու հատիկը ձևիրով մի երկար խողովակ է առաջացնում, որի մեջ կորիզը



նկ. 8. Բջջակորիզ:

կորիզը շատ կարևոր զեր է կատարում բջջում: Դա մենք առաջ նշելի է այն փաստը, որ բոլոր բջիջները կորիզ ունեն: Արդեն այս հանգամանքը ենթադրել է տալիս, որ կորիզը պետք է որ անհրաժեշտ օրգաննել լինի: Սակայն այս անուղղակի փաստը գեռ բավական չէ և վերջնական ապացույց չի կարող համարվել: Երկրորդ, նրա մեջ կատարվում են մի շարք բարդ պրոցեսներ՝ միանման թե բուսական և թե կենդանական բջիջներում: Սա ևս մտածել է տալիս նույնը, սակայն այս փաստը ևս չի սպառում հարցը: Երրորդ փաստն ավելի համոզիչ է: Բջիջը մեջ կորիզը շարժվում է գեղի այն մասը, որտեղ ուժեղ տնում է տեղի ունենում: Օրինակ, եթե բջջապատերն անհամաչափ են հաստանում, ապա կորիզը միշտ գտնվում է առավել չափով հաստացող պատի մոտ: Մի այլ օրինակ, ծաղկափոշու հատիկը ձևիրով մի երկար խողովակ է առաջացնում, որի մեջ կորիզը

միշտ էլ զտնվում է ծայրին՝ աճող մասում։ Նույնն ենք տեսանում արժատամազիկների աճման ժամանակ։ Եթե աճումն ավարտվում է, արժատամազիկի մեջ կամ բջջապատն անհամաչափ հաստատող բջջում կորիզը հեռանում է այդ տեղից և իր սկզբնական դիրքն է ընդունում բջջի կենտրոնում։ Վիրավորված բջջի մեջ ևս կորիզը մոտենում է մնասված տեղին և մնում է այդտեղ մինչև որ վերքը ծածկվի։ Չորրորդ, նկատված է, որ



Նկ. 9. Կորիզի դիրքը  
արժատամազիկի  
աճող բջիջներում։

Ներ կամ էնզիմներ, գիտամիններ, հորմոններ։

Յերմենտները կամ էնզիմները շատ մեծ նշանակություն ունեն նյութերի փոխանակության մեջ։ Դրանց միջնորդ պրո-

եթե բջիջը արհետական կերպով կիսվում է այնպես, որ կորիզն ամրողապես մնա մի կետում, ապա այդ մասը վերականգնում է պակասը և շարունակում է աճել։ Անկորիզ մնացած մասը հաճախ էկտոպիլասմա չի առաջացնում, չի աճում, ընդհակառակը, որոշ ժամանակից հետո սկսում է քայլայիլել և ոչնչանում է։ Վիրջապես, բջջի բաժանումը միշտ սկսվում է կորիզի բաժանումով և առանց գրա տեղի չի ունենում։ Այս և մի շարք ուրիշ փաստեր մեզ բերում են այն իզրակացության, որ կորիզը բջջի մեջ դեկավարող դեր է կատարում։ Ներկայութեան շատ գիտնականներ այն կարծիքն են պաշտպանում, որ կորիզը էնզիմներ կամ ֆերմենտներ առաջացնելու միջոցով դեկավարում է պրոտոպլասմայի ամենահիմնական կենսական ֆունկցիան՝ նյութերի փոխանակությունը։

Կենդանի պրոտոպլաստը, այսինքն պրոտոպլասման և կորիզը միասին, արտադրում են հատուկ օրգանական նյութեր, որոնք մեծ դեր են խաղում բջջի մննացության, շնչառության, աճման և այլ կենսական ֆունկցիաների կատարման ժամանակ։ Այդ նյութերն են՝ ֆերմենտներ կամ էնզիմներ, գիտամիններ, հորմոններ։

տոպլաստը կարծես զեկավաբում է այդ հիմնական կենսական պրոցեսները: Ֆերմենտները հանդես են գալիս շատ փոքր քանակություններով, բայց շատ մեծ ուժով են գործում: Նրանք արագացնում են նյութերի փոխարկումը: Հետաքրքրական է, որ ֆերմենտները խիստ սպեցիալացված են, նրանցից յուրաքանչյուրը միայն մի տեսակի փոխարկմանն է ազդակում, իսկ մյուսները՝ ոչ: Օրինակ՝ դիաստազ ֆերմենտը օսլան վեր է աճում շաքարի, բայց աղդել ճարպերի կամ սպիտակուցների վրա չի կարող: Ինվերտազը քայլքայում է եղեգնաշաքարը, բայց ռուլյի վրա չի ազդում: Այստեղից, բնականաբար, պետք է եղբակացները որ ֆերմենտները շատ տեսակների են լինում: Ել իսկապես, բջջում կատարվող նյութափոխության և այլ կարգի բարձր պրոցեսներն ունեն իրենց ֆերմենտները կամ այլ ազդակող նյութերը: Սննդառության պրոցեսի համար բազմաթիվ ֆերմենտներ կան, բայցի հիշատակած դիաստազից և ինվերտազից, պետք է հիշատակել պրոտեազները, որոնք սպիտակուցներն են քայլքայում, և լիպազները, որոնք ճարպերի վրա են ազդում: Ենչառության համար ևս կան հատուկ ֆերմենտներ՝ պերօքսիդազ, կատալազ, որոնց շնորհիվ օրգանական նյութերի այրումը մաքնում պահանջում է ոչ թե 600 և ավել ջերմաստիճան, այլ 20—35 և նույնիսկ ավելի ցածր:

Ընդհանրագույն այդ պրոցեսներն առանց ֆերմենտների էլ են կատարվում, բայց ֆերմենտները տաս միլիոն անգամ ուժեղացնում են դրանք:

Վիտամինները ևս շատ տեսակների են, նրանց անվանումն են լատինական այբուբենի գլխատառերով՝ A, B, C, և այլն: Վիտամիններ առաջանում են միայն բույսի մեջ: Դեռ ևս ստույգ հայտնի չեն, թե դրանք ինչ գեր են կատարում բուսական ըջիկ մեջ, սակայն արգեն լավ հայտնի է գրանց արժեքը մարդու և այլ կենդանիների սննդառության ու աճման համար: Նկատված է, որ այս կամ այն վիտամինների բացակայության գեպքում առաջանում են զանազան ծանր հիվանդություններ՝ լողաբար (ցինգա), ուկրախտ (ուսխիտ), նաև կուրություն և այլն: Վիտամիններով հարուստ են տոմատի պտուղները, մասուրը՝ նախքան լըիվ հասնելը, գազարը, կանաչեղինը, թարմ բանջարեղինն ու

պատուղները և այլն, Դրանք շատ կարևոր են միև առողջության համար:

Պրոտոպլաստն արտագրում է նաև հատուկ օրգանական նյութեր, որոնք ծծվելով բջջից բջիջ, փոխադրվում են բույսի դանաղան մասերը և տյղտեղ աղդակում են այս կամ այն ֆիզիոլոգիական պրոցեսը. այդ աղդակող նյութերը կոչվում են հորմոններ:

Բույսի մեջ կան աճման, վիրքի, սեռական և այլ հորմոններ: Առանձնապես լավ ուսումնասիրված է աճման հորմոնը՝ առւքսինը Ներկայումս պատրաստում են նաև արհեստական աճման հորմոն, որը կոչվում է հետերոտրոփին:

Այժմ առևտինները օգտագործում են զյուղատնտեսության մեջ՝ արմատակալման, աճումն ուժեղացնելու, պատվաստի հաջողությունն ապահովելու և այլ նպատակների համար:

## Պ Լ Ա Ս Ի Դ Ն Ե Ր

Կարելի է ասել, որ բնության բոլոր օրդանական նյութերի մեջ՝ քլորոֆիլն առենից հետաքրքրականն է:

Զ. Գարվին

Բուսական բջջում՝ պրոտոպլասմայի մեջ կան մի քանի տեսակ կենդանի մարմնիկներ, որոնք հայտնի են պլաստիդներ անունով: Դրանք մեծ դեր են կատարում բույսի կյանքում, հատկապես սննունդ պատրաստելու և փոխարկելու պրոցեսներում: Մի քանիսը նաև այլ ֆունկցիաներ ունեն:

Պլաստիդները շատ բազմազան են. դրանք տարբերվում են թե մեծությամբ, թե ձևով, թե գույնով և այլ հատկություններով:


Ստորագրագ բույսերի՝ ջրիմուռների պլաստիդները կոչվում են քրոմատոֆոր: Դրանք սովորաբար մեկ կամ մի քանի հատ են լինում յուրաքանչյուր բջջում: Քրօմատոֆորները մեծ մասամբ բավականին մեծ են, երբեմն ամբողջ բջիջովը մեկը դրանք լինում են կանաչ և այլ գույների և բազմազան ձևերի՝ թիթեղաձեւ, աստղաձեւ, բաժակաձեւ, գոտիձեւ, սպիրալաձեւ, տանձաձեւ, մաղանման, թելաձեւ և այլն: Քրօմատոֆորի վրա լինում է մեկ կամ մի քանի հատ պիրենոփոք՝ անգույն հատիկ:

Բարձրագարգ բույսերի բջիջներում պլաստիդները յուրաքանչյուր բջջում սովորաբար մեծ թվով են և, իհարկե, շատ պիլի մասնը, քան քրօմատոֆորները, Ձեռվ էլ դրանք այնքան բազմազան չեն, մանավանդ կանաչ պլաստիդները:

Պլաստիդները կարելի է բաժանել երկու խմբի՝ անգույն և գունավոր: Գունավոր պլաստիդների մեջ առանձնացնում են կանաչ պլաստիդները, որովհետեւ որանք հատկապես մեծ դեր են խաղացնում բույսի կյանքում: Անգույն պլաստիդները կոչվում են լեյկոպլաստ, կանաչ պլաստիդները՝ քլորոպլաստ կոմ-

Քլորոֆիլային հատիկներ, մնացած գունավոր պլաստիդները՝ քրոմոպլատատու Սրանք իրարից տարբերվում են ոչ մեջն գույնով, այլև կատարած ֆունկցիաներով:

Անգույն պլաստիդները կամ լեյկոպլաստները մեծ մասամբ դժոնվում են արմատների, պալարների և հողում զարգացող այլ օրգանների թղիջներում: Դրանք հանդիպում են նաև վերերկրյա օրգաններում, բայց ավելի քիչ: Օրինակ՝ լեյկոպլաստ կա տեղեւի միաշերտ անգույն վերնամաշկի թղիջներում, նաև մազիկներում: Լեյկոպլաստներն անգույն հատիկներ են, սկզբում շատ մտնում, բայց որոնք հետագայում որոշ չափով աճում են: Հաճախ դրանք մինչև բռնյախ կյանքի վերջը մնում են լեյկոպլաստ Բայց շատ զեղչերում էլ լեյկոպլաստները փոխարկվում են այլտեսակի պլաստիդների:



Նկ. 10. Վերնամաշերի թղիջներ  
լեյկոպլաստներով:

Դրանք մինչև բռնյախ կյանքի վերջը մնում են լեյկոպլաստ Բայց շատ զեղչերում էլ լեյկոպլաստները փոխարկվում են այլտեսակի պլաստիդների:

Լեյկոպլաստների

գլխավոր զերնայն է,  
որ լուծվող շաքա-

րը դարձնում են օսլա և ընդհակառակը Օրինակ, կարտոֆիլի պլատրներում, հացարույսերի սերմերում լեյկոպլաստները իրենց ներսում շաքարը օսլա են դարձնում և հատկանում աճեցնում են այն իրենք էլ հետները ձգվելով ու խոշորանալով: Այսպիսի լեյկոպլաստները կոչվում են նաև օսլա կուտակող կամ ամիլոպլաստ:

Քլորոպլաստը կամ քլորոֆիլային հատիկը իր զարգացման սկզբում չի տարբերվում լեյկոպլաստից, բայց հետագայում լույսի տակ նրա մեջ գունանյութեր՝ պիգմենտներ են առաջանում, որոնցից և նա կանաչ գույն է ստանում: Այդ պիգմենտները հեղառությամբ լուծվում են սպիրտի մեջ: Եթե մենք բռյախ մի կանաչ կտոր, օրինակ, մամուռի մի փոքր տերև, որը մի շերտ թղիջներից է կազմված, զիտենք միկրոսկոպով, յուրաքանչյուր քջում մինչև մի քանի տասնյակ քլորոպլաստ կտեսնենք: Մրանք մի կողմից կլոր են երեսում, իսկ մյուս կողմից՝ սեղմածած, ընդհանրապես սկավառակի կամ ոսպնյակի ձև ունեն: Մի կաթիլ սպիրտ կաթեցնենք այդ տերևի վրա, ծածկապակով

ժամկենք և շարունակենք գիտողությունը, Մենք կտեսնենք, թե  
ինչպես կանաչ գույնը թուլանում է, պիգմենտները լուծվում  
են սպիրալի մեջ և, ի վերջո, հատիկները գունազրկվում են, բայց  
դրանց թիվը ու մեծությունը չի փոխվում: Քլորովլաստի մա-  
սան մասը, որը ստորոտ է կոչվում, սպիտակուցային կազ-  
մություն ունի և շատ նման է լեյկոպլաստի: Քլորովլաստի գու-  
նազրկումն արագացնելու համար հարկավոր է մասունք մի քա-  
նի բոպե եռացնել ջրի մեջ:


Եթե սերմերը ծեցնենք լիակատար մթության մեջ, առա-  
պերս եկած ծիլերը կլինեն դեղնավուն կամ սպիտակ, բայց ոչ  
կանաչ: Սակայն դրանց թիվներում արդեն պատրաստի են  
ստրոմաները և այն սկզբնական նյութերը, որոնցից քլորոֆիլ է  
առաջանում: Բավական է, որ մի այդպիսի նիհար ու տժգույն  
(էտիոլացած) ծիլ մի քանի բոպե պահենք լույսի տակ, այ-  
նուհետև նա կսկսի կանաչել:

Նման փորձ կարող ենք կարտոֆիլի պալարի վրա:  
Եթե կարտոֆիլի պալարը, որն իր զարգացումն անց է կացնում  
հողի տակ, բացենք, որ վրան լույս ընկնի, նա կսկսի կանաչել:  
Եթե բույսը պալարի լեյկոպլաստները կփոխարկվեն քլորո-  
վլաստների: Լույսն է պատճառը, որ քլորովլաստները զարգա-  
նում են միայն վերերկրյա լույսի տակ գտնվող օրգանների բը-  
թիջներում:

Մեծ է քլորովլաստների նշանակությունը ոչ միայն իրեն,  
կանաչ բույսի, այլև ամբողջ կենդանի աշխարհի համար: Կ. Ա.  
Տիմիրյազեն ասում է, որ քլորոֆիլը տիեզերական գեր է կա-  
տարում: Տեսնենք թե ինչ է նշանակում դա:

Վերցնենք լույսի տակ գտնված մասունի թարմ տերե,  
ոչնենք ապակու վրա, մի կաթիլ ջուր ավելացնենք, ծածկենք  
ժամկապակով և դիտենք միկրոսկոպի մեծ խոշորացմասր: Մենք  
կարող ենք տեսնել որ քլորովլաստների մեջ ինչ որ հատիկներ  
կան, մեկ կամ մի քանի հատ: Եթե մենք մի կաթիլ յոդ լցնենք  
տերեի վրա, այդ հատիկները կդառնան մասուշակ սպույն: Թանի  
որ կանաչ գույնը խանգարում է հատիկների ներկվելը լավ տես-  
նելուն, կարելի է յոդ ավելացնելուց առաջ տերեը սպիրով  
դունապրկել մաքուր ջրով լվանալ և նոր միայն փորձել յոդով:  
Այս գեպօւմ շատ պալզ կերեա, թե ինչպես ստրոման յոդից

թուխ գույն է սահնում, իսկ հատիկները՝ մանուշակագույն և նազառնում: Այդ հատիկները օսլայի հատիկներ են: Մեր նկարագրած փորձը կոչվում է Սաքսի փորձ, Սաքս գիտնականի անօւնով, որն առաջարկել է այդ եղանակը՝ ստուգել՝ տերենի մեջ օսլա կա թև ոչ:



Նկ. 11. Էլողեա բույսի բջիջները բլուրապլաստներով, որոնց մեջ երեսում են օսլայի հատիկները:

կան նյութ պատրաստել, այն էլ առանց լույսի, մացած բլուր կենդանի էակները՝ կենդանիները, ոչ կանաչ բույսերը (սնկեր, բակտերիաներ) չեն կարող անօրգանական նյութերից օրգանական նյութ պատրաստել, Միայն կանաչ բույսերն են, որ կարող են ապրել՝ ստանալով բացառապես անօրգանական նյութեր, նըանք իրենց անհրաժեշտ օրգանական նյութերը իրենք են:

Եթե մամուռը մի քանի օր պահենք մինում և ապա միայն դունապղկենք և փողձինք յողով, մենք քլորոպլաստների մեջ օսլա չենք տեսնի: Այստեղից մենք կարող ենք հետեցնել, որ օսլան ստիղծվում է միայն լույսի տակ, իսկ այսուհետեւ անընդհատ ծախսվում է բույսի ներսում:

Գիտնականները ճշգրիտ կերպով ցույց են տվել, որ քլորոպլաստների մեջ օսլան առաջանում է երկու անօրգանական նյութերից՝ ջրից և ածխաթթու գաղից՝ լույսի ներկայությամբ: Բույսի մեջ այդ պրոցեսը անդքի է ունենում միայն քլորոպլաստների մեջ: Զհաշված մի քանի տեսակի բակտերիաները, որոնք նույնական կարողանում են անօրգանական նյութերից օրգանա-


պատրաստում: Նրանք օրդանական նյութ են պատրաստում նաև մնացած բոլոր օրդանիզմների համար, որոնք չունեն կանաչ բույսերի այդ հատկությունը:

Ինչպես կենդանիները, այնպես էլ բուսական աշխարհին պատկանող որոշ խմբեր՝ մնկերը, բակտերիաները, ոչ կանաչ ծաղկավոր բույսերը (գաղձը կամ գայլախոտը, ճրագախոտը) կարող են ապրել միայն պատրաստի մննդանյութերով: Բույսերի մի մասը այդ օրդանական նյութերը վերցնում է կենդանի օրդանիզմներից. այդպիսի բույսերը կոչվում են պարագիտ: Մյուս մասն էլ ապրում է՝ սնունդ վերցնելով փառող, քայլքայվող մարմիններից մեռած բույսերից և կենդանիներից, նրանց արտաթուրություններից և մնացուկներից, որանք էլ կոչվում են ստպրոֆիտ:

Դարձյալ կանաչ բույսերն են, որ մեր լայնարձակ դաշտերում, այդիներում և անտառներում ստեղծում են բերքը՝ պատուղների, սերմերի, թելի, յուղի, անասնակերի տեսակների մեջ մասը, փայտի անհրաժեշտ օրդանական նյութերը:

Ինչպես բջջի մյուս կենդանի մասերը՝ այնպես էլ քլորոպլաստները շարժվելու ընդունակություն ունեն: Ուժեղ լույսի ժամանակ նրանք դեպի ճառագայթներն են դառնում նեղ կողմով, իսկ թույլ լույսի ժամանակ՝ լայն կողմով: Դա կարելի է տեսնել միկրոսկոպով: Այդ երկույթը կարելի է դիտել և այլ կերպ: Որևէ սենյակային բույս (խորդենի, սենյակի հինածաղիկ) մի քանի ժամ պահենք ստվերում կամ կիսամութ տեղ, ապա դրա որևէ տերեկի մի մասը երկու երեսից ծածկենք սկ թղթով և կեսօղվա ժամերին տեղափոխենք ուժեղ լույսի տակ: Եթե այնուհետեւ, մի 20—30 րոպե անց, տերեկը ծածկող թուղթը վերցնենք, կտեսնենք հետեւյալը. տերեկի այն մասը, որ թղթով ծածկված է եղել լույսից, մուգ կանաչ է, իսկ ուժեղ լույսի տակ գտնվածը՝ բաց կանաչ: Մի քանի րոպե ուժեղ լույսի տակ մնալով՝ մուգ մասը ևս շուտով կդառնա բաց կանաչ: Դրա բացատրությունն այն է, որ ստվերում քլորապլաստները լայն կողմով են դարձած դեպի լույսը և մուգ կանաչ գույն են հաղորդում տերեկին: Լույսի տակ նրանք նեղ կողմով են դեպի դուրս դարձած, այդ պատճառով էլ նրանց միջի անզույն տարածություններն ավելի շատ են, և տերեկն էլ բաց կանաչ է երկում:

Քլորոպլաստներն ավելի մեծ շարժումներ էլ են կատարում: Ուժեղ լույսի տակ կամ մթնում երբեմն դրանք շարվում են կողքի պատերի տակ, իսկ նորմալ լույսի ժամանակ նորից գալիս են դեպի դուրս գարձած պատի տակ, առաջին դեպքում տերևն, իհարկե, ավելի բաց գույն ունի, քան երկրորդ դեպքում:



Նկ. 12. Բջիջներ քլորոպլաստներով.  
Վերին մասը գտնվում է մթնում,  
ստորին մասը՝ ցըված լույսի տակ:

Հետո, երբ սպիրտը կկանաչի, սպիտակ ծծան թղթով քամինքը կստացվի զեղեցիկ գույնի պարզ հեղուկ, որը լույսի դիմաց ըլլունած նայելիս, այսիքն՝ անցնող լույսի տակ, զմրուխտի կանաչ գույն ունի, իսկ լույսի կողմից վրան նայելիս, այսինքն անդրադարձող լույսի տակ, աղյուսի կարմիր գույնի է. Վերջինս առանձնապես լավ է երկում, եթե սպիրտի լուծույթը բռնենք և գույնի առարկայի դիմաց:

Սպիրտի կանաչ լուծույթը լցնենք փորձանոթի մեջ 1—

Քլորոպլաստի մեջ, բացի կանաչ պիգմենտից, կան և ուրիշ գույների պիգմենտներ, միայն թե դրանք քողարկված են կանաչ գույնով: Այդ պիգմենտներն իրարից բաժանելը դժվար չէ: Ինչպես վերևում ասացինք, սպիրտը լուծում է քլորոպլաստի պիգմենտները. պլաստիգները գունազրկվում են, դառնում են անգույն, իսկ սպիրտը զըմքուխտի կանաչ գույն է ստանում:

Պատրաստենք պիգմենտների մի քանի խոր սև լուծույթ: Դրա համար վերցնենք մի քանի կանաչ տերև, եռացնենք կամ սանդղ մեջ ջարդենք և վրան սպիրտ լցնենք: Որոշ ժամանակից

Զ խոր սմ և վրան նույնքան մաքուր բենզին ավելացնենք ու  
թափահարենք: Որոշ ժամանակ հանգիստ թողնելուց հետո  
կտեսնենք, որ փորձանոթի մեջ երկու շերտ է կազմվում՝ վերե-  
վում ընդդինը՝ կանաչ գույնի, տակը սպիրտը՝ դեղին գույնի:  
Պարզվում է, որ քլորապլաստի մեջ մեկ պիզմենտ չէ, այլ ավելի:

Բազմաթիվ փորձերով ցույց է արված, որ քլորոպլաստի  
մեջ իրեք պիզմենտ կա, որոնցից քլորոֆիլը կանաչ է, քանի-  
տու փիլը՝ ոսկեղեղին, կարոտինը՝ նարնջագույն: Կարոտինից  
առաջանում է Ա վիտամինը:

Ջրիմուռների զանազան խմբերում բացի քլորոֆիլից լի-  
նում են նաև այլ պիզմենտներ՝ թուխ կարմիր, կապույտ և այլն:


Քրոմոպլաստները գեղին, նարնջագույն, կարմիր պլաստիդ-  
ներ են: Դրանք ըստ ձևի ավելի բազմազան են, քան լեյկո-  
պլաստները և քլորոպլաստները. լինում են կլոր, ձողածե, իլի-  
կածե, եռաճյուղ, մանգազածե և այլն:

Քրոմոպլաստները սովորաբար առաջանում են քլորոպլաստնե-  
րից: Այդ ժամանակ քլորոֆիլը քայլայվում է, իսկ մյուս պիզ-  
մենտները մնում են, կամ էլ՝ սրանք ևս քայլայվում են և միանգա-  
մայն նորերն են առաջանում: Օրինակ, աշխանը տերեների քլորո-  
ֆիլը քայլայվում է, զրա հետ ոչնչանում են նաև մյուս երկու գե-  
ղին պիզմենտները և պլաստիդների մեջ նոր պիզմենտներ են առա-  
ջանում—քլորոպլաստները վեր են ածվում քրոմոպլաստների: Նման  
երեսույթ է տեղի ունենում նաև պտուղների մեջ: Օրինակ՝ տո-  
մատի պտուղը սկզբում կանաչ է, այդ ժամանակ նրա բջիջնե-  
րում քլորոպլաստներ են գտնվում: Պտուղը հասունանալիս քլո-  
րոֆիլը քայլայվում է, և նոր կարմիր պիզմենտ է առաջանում՝  
Եթ կոպին: Նույն կարմիր լիկոպինն է առաջանում նաև ձմե-  
րուկի պտուղներում:

Քրոմոպլաստները կարող են առաջանալ նաև լեյկոպլաստ-  
ներից: Օրինակ, գաղարի արմատները նարնջագույն են, որով-  
հետև նրանց բջիջներում կան կարոտին պարունակող քրոմո-  
պլաստներ: Այդ է պատճառը, որ գաղարի արմատները հարուստ  
են Ա վիտամինով:

Ինչպես տեսնում ենք, քլորոպլաստները և քրոմոպլաստնե-

բը կարող են լեյկոպլաստներից առաջանալ: Երբեմն էլ հակառակն է տեղի ունենում: Լեյկոպլաստներն առաջանում են քլորոպլաստներից: Այդ երեք տեսակի պլաստիդները իրենց առաջացմամբ կապված են միամյանց հետ՝ նրանք ունենք գենետիկական կապ:



Նկ. 13. Քրոմոպլաստներ. С—մասուրի պատուղներում, D—գազարի արմատում, E—վարդկակաչի պսակաթեթերում:

Են գտնվում: Խնչպես նրանց ձևերից երեսում է, պլաստիդները կիսվում են ուղղակի կերպով՝ ձգվելով և մեջտեղից բարակած պլաստիդներ, դըրանք կիսվելու վիճակում:

Բազմթիվ գիտնականներ այն համոզում ունեն, որ պլոտոպլաստմայի մեջ կան հատուկ տեսակի թելաձե քոնդրիոսոմներ, որոնցից պլաստիդներ են սկզբնավորվում: Այդ քոնդրիոսոմներից կամ նրանց որոշ մասերից առաջանում են մանր լեյկոպլաստներ, որոնք մեծանալով՝ որոշ դեպքերում փոխվում են քլորոպլաստների և քրոմոպլաստների:

## Օ Ս Լ Ա.

Օ ս լ ա ն բուսական աշխարհի ամենատարածված նյութերից մեկն է։ Օսլա կա բոլոր բույսերի մեջ, բայց սնկերից և ոչ կանաչ ջրիմուռներից։ Մենք արդեն նկարագրել ենք օսլայի առաջացումը քլորոպլաստների մեջ ջրից և ածխաթթու գաղից։ Բույսի մեջ օսլա կարող է առաջանալ նաև առանց լույսի և ոչ քլորոպլաստների մեջ, բայց այս անգամ օրդանական նյութից, օրինակ, շաքարից։

Տարբեր տեղերում և տարբեր եղանակով առաջացած օսլան այլ անուններ ունի։ Քլորոպլաստների մեջ, անօրգանական նյութերից առաջացած օսլան կոչվում է առաջնային կամ ասիմիլացիոն օսլա։ Առաջնային է կոչվում, որովհետև նա որպես օրգանական նյութ նոր է ստեղծվել։ Երկրորդ անունը ցույց է տալիս, որ նա բույսի կողմից ածխաթթու գաղի յուրացման՝ ածխաթթվի ասիմիլացիայի արդյունքն է։ Առաջնային օսլան երկար չի մնում քլորոպլաստի մեջ և այդտեղ չի կուտակվում, այլ ծախսվում է և բույսի այլ մասերն է տեղափոխվում։ Օսլան պինդ նյութ է, այդ պատճառով էլ բջջից դուրս գալ չի կարող։ Նախապես նա մի հատուկ ֆերմենտի՝ դիաստազի շնորհիվ վեր է ածվում լուծվող նյութի՝ շաքարի։ Վերջինս լուծված վիճակում անցնում է պրոտոպլասմայի և բջջաթաղանթի միջով և տեղափոխվում է բույսի մյուս մասերը՝ ցողունը, արմատները, պալարները, սերմերը և այլն։

Այստեղ այդ շաքարը կամ ծախսվում է կամ թե լեյկոպլաստների միջոցով նորից օսլա է գառնում և սկսվում է կուտակվել։ Այս օսլան արդեն ուրիշ անուն ունի՝ կոչվում է երկուրդային կամ պահեստի օսլա։

Երբեմն շաքարը դեռ տեղ չհասած օսլայի է փոխարկվում, այդ դեպքում կոչվում է փոխադրական օսլա։ Առաջնային կամ ասիմիլացիոն օսլան սովորաբար պարզ հատիկների ձևով է,

կազմվում է առավելապես տերեներում, բայց կարող է առաջանալ նաև բույսի մյուս կանաչ մասերում՝ գալար ցողուններում՝ պտուղներում և այլն՝ դրանց քլորոպլաստների մեջ:


Եթերորդային կամ պահեստի օսլան բազմագան ձեւերի. հատիկներով է: Ամենից առաջ, պահեստի օսլայի հատիկները լինում են պարզ և բարդ: Պարզ են համարվում օսլայի այն հատիկները, որոնք մեկ առաջացման կենտրոն ունեն. օրինակ, ցորենի հատիկների մեջ գտնվող օսլան, կարտոֆիլի պալարի օսլայի հատիկների մեծ մասը: Այդ պարզ հատիկները նույն բույսի բջիջներում լինում են մանր և խոշոր. դրանց մեջ անցումներ չեն լինում: Դա ցույց է տալիս, որ դրանք իրար նման չեն առաջացել: Այդ մանր և խոշոր հատիկներն առաջանում են տարբեր տիպի պլաստիկներից, օսլայի խոշոր հատիկներն առաջանում են մեծ լեյկոպլաստների մեջ, իսկ մանրերը՝ փոքր լեյկոպլաստների մեջ, իսկ սրանք քոնկրետումներից համարյա չեն տարբերվում:

Օսլայի խոշոր հատիկները շերտավոր կազմություն ունեն: Այդ շերտերն առանձնապես լավ երևում են, երբ մի փոքր թուլացնում են միկրոսկոպի լույսը: Իրար հաջորդող շերտերը թույլ կերպով տարբերվում են իրարից՝ ավելի խիտ և պակաս խիտ կազմությամբ: պակաս խիտ շերտն ավելի շատ ջուր է պարունակում և ավելի մուգ գույն ունի: Շերտերը տարբեր են ստացվում նայած թե օրվա ու ժամանակին են կազմվում՝ ցեղեկը թե գիշերը, երբ բույսի մեջ ավելի շատ ջուր կա: Դրա հիման վրա կարելի է շերտերը հաշվելով որոշել՝ թե քանի օրում է կազմվել օսլայի հատիկը:

Օսլայի բարդ հատիկը մի քանի առաջացման կենտրոն ունի և փաստորեն մի քանի պարզ հատիկներից է կազմված: Այդպես են, օրինակ, վարսակի, բընձի օսլայի հատիկները:

Գոյություն ունեն նաև օսլայի կիսաբարդ հատիկները: Այդպես են ստացվում օսլայի հատիկներն այն դեպքում, երբ բարդ հատիկի շուրջն ընդհանուր շերտեր են կազմվում: Կիսաբարդ հատիկներ հանդիպում են կարտոֆիլի պալարներում: Երբեմն պարզ թվացող հատիկները իրոք կիսաբարդ են, այսինքն մեջտեղում մի քանի պարզ հատիկներից են կազմված, որոնք արտաքին շերտերով քողարկված են:

Զանազան բույսերի պահեստի օսլայի հատիկներն իրարից տարբերվում են ոչ միայն բարդ կամ պարզ լինելով և շերտավորությամբ, այլև մեծությամբ, ձևով և ռուաջացման կինտրոնի գիրքով։ Օրինակ, կարտոֆիլի օսլայի հատիկները համապատասխան են մին-



Նկ. 14. Օսլայի հատիկներ. 1—ցորենի, 2—անոսայի, 3—գարու, 4—եղիպտացորենի, 5—հնդկացորենի, 6—վորսակի, 7—ծլած ցորենի, 8—ոլոսի, 9—լոբու, 10, 11, 12—կարտոֆիլի (պարզ, բարդ, կիսաբարդ):

չե 100 միկրոն երկարության, իսկ բրնձինը սովորաբարար 10 միկրոնից չեն անցնում։ Օսլայի հատիկները լինում են գնդաձև, էլիպսաձև, ձվաձև, երկարուկ, ձողաձև, ազդրոսկրի ձևով և այլն։ Առաջացման կինտրոնը կարող է գտնվել հատիկի

կենտրոնում կամ մի ծայրին ավելի մոտ Բացի դրանից, հաճախ օսլայի հասունացած հատիկների մեջ երկարավուն ճեղք կամ խռոոչ է առաջանում:

Օսլան ածխաջուր է. նա կաղմված է ածխածնից, ջրածնից, և թթվածնից, իս բաղադրությամբ շատ մոտ է կանգնած սովորական շաքարին և հենց ինքն էլ բաղմաշաքար է (պոլիսախարեղ): Այդ է պատճառը, որ որոշ ֆերմենտների ազդեցությամբ ձևափոխվելիս օսլան առաջն հերթին և շատ հեշտությամբ շաքարների է վերածվում:

Չոր վիճակում տաքացնելիս օսլան դառնում է մի այլ բաղմաշաքար, որը կոչվում է դեքստրին. սա սոսնձանման է, փխրուն և ջրում հեշտությամբ լուծվում է: Խակ եթե օսլան երկար ժամանակ ջրում եռացնենք, վեր է ածվում նախ երկշաքարի (ածիկաշաքար) և ապա միաշաքարի (խաղողաշաքար): Սովորական ջերմաստիճանի տակ օսլան ջրում չի փոփոխվում, միայն ջուր ծծելով մի փոքր ուռչում է, խակ ջուր ծծող նյութի մեջ (օրինակ, գլիցերին) ընդհակառակը, թեթևակի սեղմվում է: Ջրում տաքացնելիս օսլայի հատիկները խիստ ուռչում են և տալիս են շոն (կլեյստեր):

Սերմերի ծլման ժամանակ պահեստի օսլան դիաստաղ ֆերմենտի ներգործության տակ վեր է ածվում շաքարների: Այդ ժամանակ ծլող սերմերը բաղցրանում և ածիկ են տալիս: Եթե ծլող սերմերից մի փոքր կաթնանման նյութ հանենք և միկրոսկոպով դիտենք, մենք կտեսնենք թե ինչպես օսլայի հատիկներից շատերը որոշ տեղերում քայքայված և կերպած են: Այդ մասն սերում օսլան փոխարկվել է շաքարի:

Օսլայի հատիկները բյուրեղային կաղմություն ունեն և բյուրեղների հատկություններ:

Ինչպես արդեն ասել ենք, օսլան հայտաբերելու համար գործ ենք ածում յոդի թույլ լուծույթ (մուգ թեյի գույնի): Այդ լուծույթից օսլան մանուշակագույն է գառնում, իսկ եթե յոդն ավելի խիտ է, կապտում է: Յոդի ուժեղ լուծույթից օսլան համարյա սեանում է:

## Յ Ա Խ Դ Ե Բ

Բուսական որոշ բջիջներ շատ հարուստ են լինում յուղեառով: Դրանք առանձնապէս շատ լինում են զանազան բույսերի սերմերում: Այդպիսի յուղառատ սերմեր տվող բույսերը կոչվում են յուղատու բույսեր: Օրինակ, արևածաղիկը, կանեփը, քնջութը, տիղանեփը, ընկույյզը, տկողինը, բամբակը և այլ բույսեր, որոնց սերմերում մինչև 40—50 տոկոս յուղ կա:

Յուղը բուսական բջջում երևում է դեղին կամ անգույն փայլուն կաթիլների ձևով: Յուղը բջջում լավ տեսնելու համար սերմի կարվածքը պետք է դիտել անպայման ջրի կաթիլի մեջ:

Յուղերը բաժանվում են երկու խմբի՝ ճարպայուղերի և եթերայուղերի: Դրանց ճանաչելը և տարբերելը դժվար չէ: Յուղը որոշելու համար պետք է սերմը ճզմել ծալած սպիտակ թղթի արանքում — կստացվի յուղարիծ: Եթե այդ բիծը երկար ժամանակ մնում է թղթի վրա, կնշանակի դա ճարպայուղ է: Իսկ եթե յուղարիծը շատ արագ ցնդում է և ուժեղ հոտ ունի, ուրեմն եթերայուղ է: Թե ճարպայուղը և թե եթերայուղը լավ լուծվում են եթերի մեջ, բայց սպիտի մեջ ճարպայուղերը չեն լուծվում, իսկ եթերայուղերը լուծվում են:

Բջջի մեջ յուղի կաթիլը որոշելու համար պետք է սերմից շատ բարակ կարվածքներ պատրաստել: Նախ պետք է մի կտըրվածքի վրա մի քանի կաթիլ եթեր ավելացնել: Եթե կաթիլը սկսեց հետզհետե փոքրանալ և վերջում անհետացավ, կնշանակի յուղ է: Այնուհետև պետք է մի այլ կտըրվածքի վրա մաքուր սպիտ կաթեցնել: Եթե այս անգամ կաթիլը լուծվեց, կնշանակի եթերայուղ է, իսկ եթե անփոփոխ մնաց, ապա ճարպայուղ է:

Ճարպայուղերի մեջ մտնում են ածխածին, ջրածին և թըթվածին: Վերջինս յուղերի մեջ շատ փոքր մասն է կազմում, շատ ավելի քիչ, քան օսլայի կամ շաքարի մեջ:

Ճարպայուղերը կազմված են գլիցերինից և ճարպաթթուներից: Երբ ճարպի վրա կծու՝ հիմք ենք ավելացնում, այն քայլում է: Ճարպաթթուն միանում է հիմքի հետ և դառնում է օճառ: Իսկ գլիցերինը մնում է աղատ: Այս պրոցեսը կոչվում է օճառ առ ացում: Երբեմն օճառը բյուրեղանում է, և միկրոսկոպով կարելի է տեսնել, թե ինչպես հիմքի ազդեցության տակ ճարպայուղի կաթիլը սկսում է հետզհետեւ անհետանալ և դրա փոխարեն մի կոյտ ասեղնաձեւ բյուրեղներ են հայտնվում:

Ճարպայուղերը մեծ մասամբ սննդապաշար են հանդիսանում, ինչպես և օսլան: Սակայն ճարպայուղերը քիչ թթվածին պարունակելու պատճառով ավելի քան երկու և կես անգամ շատ ջերմություն են տալիս, քան օսլան կամ սպիտակուցները:

Եթերայուղերը՝ ճարպայուղերի համեմատությամբ ավելի քիչ են տարածված: Դրանք հատուկ են որոշ բուսական ընտանիքներին՝ շրթնածաղիկներին, հովանոցավորներին, բարդածաղիկներին և այլն: Եթերայուղերը կուտակվում են թե բջջի մեջ և թե բջիջների արանքներում: Դրանց դերը դեռևս լրիվ հայտնի չէ: Ենթադրում են թե զրանք բջջի թափուկներ են, կամ թե պաշտպանողական նյութեր են: Կան և ուրիշ ենթադրություններ:

Որոշ բույսերի բջջիջներում կուտակվում են ձյութ և կառոչուկ, որոնք նյութերի յուրահատուկ խումբ են կազմում: Մրանք լինում են թե բջիջների մեջ և թե զրանց արանքներում՝ կաթիլների, թելերի կամ զանգվածների ձեռվլ: Դրանք որոշ կողմերով նման են յուղերին, նույն հեղուկների մեջ լուծվում են, նույն ներկերով ներկվում: Ձյութ են արտադրում բազմաթիվ վիշտերև ծառերը, իսկ կառոչուկ կա շատ բույսերի մեջ, օրինակ, իշակաթնուկ, խոնդրիլա կամ խիճաճարճատուկ, տառուսագըգ, հելեա (ամենագլխավոր կառոչուկատու ծառը) և այլն:

Մի ժամանակ կարծում էին, որ պրոտոպլասմայի մեջ՝ գտնվող խորշերը դատարկ տարածություններ են, այդ պատճառով էլ վակուուլ են անվանել (վակուում—դատարկ տարածություն): Հետագայում պարզվեց, որ այդ խորշերը լցված են բջջայութով, բայց վակուուլ բառը մնաց և այժմ էլ գործ է ածախում:

Բջջահյութը խիստ բազմազան նյութերի ջրային լուծույթ է: Դրա մեծ մասը ջուր է, իսկ նրա մեջ լուծված բազմազան նյութերը կազմում են տոկոսի մի փոքր մասը (միայն որոշ դեպքերում մինչև 20—25 տոկոս և ավելի):

Բջջահյութը սովորաբար թեթևակի թթու է և այդ տեսակետից պրոտոպլասմայի հակապատկերն է, որը հիմքային է:

Բջջահյութի մեջ կան և՛ սննդապաշարներ, և՛ շնչառության հետևանքով առաջացած թափուկներ, և՛ աղանյութեր ու թույներ, և՛ անօրգանական նյութեր, և՛ պիզմենտներ և էլեկտրիչ նյութեր:

Բջջի մեջ կուտակված ջուրը մեծ դեր է կատարում: Ամենից առաջ, բուսական բջջին միշտ ջուր է հարկավոր թե սնունդ պատրաստելու և թե գորորշիացնելու համար: Բացի ջրանից, ինչպես արդեն նկարագրել ենք, այդ ջրի շնորհիվ բջիջը միշտ տուրգոր վիճակում է գտնվում, որը բուսական բջջի համար նորմալ վիճակ է: Վերջապես, նրա մեջ են լուծվում բջջի շատ տեսակի նյութեր:

Սննդանյութերից բջջահյութի մեջ ամենից շատ ամբարված են՝ զանազան ածխաջրեր, որոնք դյուրամարս սնունդ են հանդիսանում բջջի համար: Բջջահյութի մեջ գտնվող ածխաջրերը կարելի է բաժանել երեք խմբի՝ միաշաքարներ կամ մոնուպախարիդներ, երկշաքարներ կամ դիսախարիդներ և բազմաչափարներ կամ պոլիսախարիդներ:

Միաշաքարները կամ մոնուախարիդները այդ երեք խմբերից ամենապարզն են, Սրանց մի մասնիկի մեջ կա 6 ատոմ ածխածին, 12 ատոմ ջրածին և 6 ատոմ թթվածին: Մոնուախարիդները գտնվում են զանազան պառւղներում՝ խաղողի, խնձորի, ինչպես նաև կոճղեղներում և այլ ստորգետնյա օրդաններում:

Երկաշաքարների կամ դիսախարիդների մասնիկը կաղմված է մոտավորապես երկու մասնիկ մոնուախարիդից: Սրանցից ամենից շատ տարածված է եղեղնաշաշաքարը կամ սախարողը: Այն կաշաքարեղեղի մեջ, ճակնդեղի արմատներում: Մեր գործածած շաքարը հենց սախարող է:

Պոլիստխարիդներն ել ավելի բարդ կաղմություն ունեն: Սրանց մի մասնիկը կաղմված է մի քանի մոնուախարիդի մասնիկներից, միայն թե պակաս է պարունակում ջրածին և թթվածին: Բջջահյութի մեջ լուծված մի պոլիստխարիդ կա, որ հանդիպում է որոշ բույսերի ստորգետնյա օրդաններում, օրինակ, գետնախճնձորի պալարներում, գափնուլինն է: Ինչպես արգեն ասել ենք, օսլան և գեքստրինը պոլիստխարիդներ են: Սընկերի բջիջներում օսլա չկա, դրա փոխարեն գտնվում է զլիկոգեն, որը նույնպես պոլիստխարիդ է և լայն տարածված է կենդանիների բջիջներում: Այսեղ կան նաև այլ տեսակի շաքարներ ու շաքարանման նյութեր:

Բջջահյութի մեջ կան և լուծվող սպիտակուցներ, ինչպես նաև գրանց կաղմող մասերը՝ ամինոթթուներ և թթուների ամիդներ: Վերջիններս հայտնվում են սպիտակուցների քայլայան հետևանքով և մասամբ նորից օգատագործվում են պրոտոպլասմայի կողմից:

Բուսական բջիջներում լուծված վիճակում հանդիպում ենք հատուկ նյութերի՝ գլյուկոզի գլյուկոզի և բարդ օրգանական նյութեր են, որոնց քայլայան ժամանակ առաջանում է նաև շաքար: Գլյուկոզիդներից մի քանիսը խիստ թունավոր են, օրինակ, կորիզապտուղների սերմերում հաճախ գտնվող ամիգագլյուկոզը, որը քայլայլելիս տալիս է մի խիստ թունավոր նյութ, ցիանաթթու կամ կապտաթթու: Գլյուկոզիդներին շատ մոտ են կանգնած աղաղանյութերը կամ տաննի գները: Սրանց որոշելը հեշտ է: Դրա համար պետք է ունենալ երկաթի եռքլորիդ կոչված աղի լուծույթ, որի մեջ ընկղմում ենք

բույսի կտրվածքը Եթե վերջինիս մեջ աղաղանյութեր կանց ապա կտրվածքը դառնում է մուգ-կապույտ կամ մուգ-կանաչը: Աղաղանյութերը ոչ միայն լուծված վիճակում են գտնվում, այլև բաց գույնի յուղանման զանգվածներով: Աղաղանյութերը մեծ մասմասը մնում են երկար, սակայն կան դեպքեր, երբ դրանք որոշ ժամանակ մնալուց հետո քայլայվում և անհետանում են, օրինակ, տանձի պտուղներում: Այս դեպքում աղաղանյութերը հարմարանք են հանդիսանում, որ չհասունացած պտուղները կենդանիները չուտեն, քանի դեռ սերմերը պատրաստ չեն:

Արդեն մի անգամ ասել ենք, որ բջջահյութը թթու է. լակումուսը նրանից կարմրում է: Դրա պատճառն այն է, որ նրա մեջ մի շարք օրգանական թթուներ կան, ապատ կամ որպես թթու աղեր: Ամենից հաճախ հանդիպում են հետեւյալ թթուները՝ թրթնջկաթթու, խնձորաթթու, զինեքարային թթու, կիտրոնաթթու: Սրանք առանձնապես շատ են որոշ բույսերի կանաչ մասերում (թրթնջուկի տերևներում և դալար ընձյուղներում, խաղողի շիվերի ծայրում) և մանավանդ պտուղներում (չհասած խաղող, չհասած լինոր, հասած կիտրոն): Այդ թթուներից մի քանիսը միանալով կալցիումի հետ աղեր են տալիս:

Բջջահյութի մեջ աղոտ պարունակող մի խումբ նյութեր էլ կան, որոնք ալ կալո ի դեն կոչվում: Համարյա բոլոր ալկալիդները թունավոր նյութեր են: Ալկալիդներ են ծխախոտին ի կոտինը, խինինը, ստրիխինինը և այլն:

Բջջահյութի մեջ լուծված վիճակում կան նաև պիգմենտներ: Ամենից հաճախ հանդիպում է անտոցիանը: Սա միշտավայրի աղղեցության տակ հեշտությամբ փոխում է իր բաղադրությունը և դրա հետ էլ գույնը՝ լակմուսի նման, թթու միշտավայրում անտոցիանը կարմիր է, չեղոք միջավայրում՝ մանուշակագույն, հիմքային միջավայրում՝ կապույտ: Անտոցիանը շատ աղաղանքած է բուսական աղխարհում: Օրինակ, ծաղիկների գույների մեծ մասը անտոցիանից է, որը շատ հաճախ գտնվում է պսակաթերթերի բջջահյութի մեջ: Նա լինում է նաև ընձյուղներում, տերևներում, ծիլերում և այլն: Օրինակ, ծիլանի ճյուղերի դալար ծայրերը և տերևները, կոլիուս սենյակային բույնը, գունավոր կաղամբը, ցորենի որոշ սորտերի ծիլերը, գունավոր ճականդեղի արմատները անոցիտան են պարունակում:

Եթե որևէ ծաղկի կապույտ պսակաթերթերը հավաքենք և  
քիչ ջրով եռացնենք, անտոցիանը կանցնի ջրի մեջ: Քամենք  
այդ գունավոր հեղուկը և լցնենք փորձանոթի մեջ: Այժմ շատ  
զգուշությամբ որևէ թթվի թույլ լուծույթի ավելացնենք կա-  
թիլներով՝ հեղուկը կկարմրի: Այնուհետև սկսենք կաթիլներով  
հիմքի թույլ լուծույթ ավելացնել: հեղուկը նորից կկապտի:

Նույն արդյունքը կստացվի, եթե բույսից կտրած կարմիր  
ծաղիկները կոթով գնմնք հիմքի թույլ լուծույթի մեջ, իսկ կա-  
պույտ ծաղիկները՝ թթվի թույլ լուծույթի մեջ: Որոշ ժամանա-  
կից հետո ծաղիկները կփոխեն իրենց գույնը:

Բացի անտոցիանից բջջահյութի մեջ կա էլի մի տարածված  
պիզմենտ, դա անտոքլորն է՝ գեղին գույնի: Սա համեմատած անտո-  
ցիանի հետ, ավելի կայուն նյութ է և հեշտությամբ գույնը չի  
փոխում:

Գլխավորապես այս երկու պիզմենտների շնորհիվ է առա-  
ջանում ծաղիկների երփներանդ գունավորումը, որովհետև այս  
պիզմենտները ներկա են լինում առանձին կամ համատեղ, խիս-  
կամ նոսր, մեկ կամ մյուս միջավայրում:

Ինչով է պայմանավորվում սպիտակ գունավորումը: Սպի-  
տակ գույնի համար պսակաթերթերում հատուկ պիզմենտ չկա: Այդ գույնը ստացվում է շնորհիվ այն հանգամանքի, որ պսակա-  
թերթերի մեջ բջիջները նոսր են դասավորված և այդտեղ բազ-  
մաթիվ միջբջիջային տարածություններ կան: Դրա շնորհիվ  
լույսն անդրագարձնող մեծ մակերես է ստեղծվում, որի հետե-  
վանքով և սպիտակ է ստացվում: Եթե սպիտակ պսակաթերթը  
մաքուր մատների կամ ապակիների արանքում սեղմենք, ապա  
բջիջները խիստ կմոտենան, միջբջիջային տարածությունները  
կվերանան, և պսակաթերթերը կկորցնեն իրենց սպիտակու-  
թյունն ու կդառնան թափանցիկ: Այդ նույն պատճառով է, որ  
ձյունը սեղմելիս նույնպես կորցնում է սպիտակ գույնը և թա-  
փանցիկ սառույց է դառնում: Վերջապես, նույնն է տեղի ունե-  
նում, երբ թափանցիկ ապակին սանդի մեջ մանրացնում ենք,  
նա սպիտակում է, ապա երբ վրան ջուր ենք ավելացնում, նորից  
թափանցիկ է դառնում: Հայտնի է նաև, որ երբ ցանկանում են  
թուղթը թափանցիկ դարձնել, յուղուում են, որ թղթի մաղիկ-  
ների արանքները լցվեն:

Բջջահյութի մեջ կան նաև հանքային նյութեր, որոնք մեծ  
մասամբ դալիս են հողից:

Այս համառոտ նկարագրությունից երևում է, որ բջջահյութը  
շատ կարեռ է բջջի համար և մեծ զեր է խաղում նրա կյանք  
քում: Բջջի մեծանալու հետ, բջջահյութն էլ շատանում է և  
ավելի մեծ չափով քան մյուս մասերը: Հետզհետեւ նա հարստա-  
նում է այնպիսի նյութերով, որոնք բջջի համար այլևս պետք  
չեն: Բջիջն աստիճանաբար ծերանում է: Բջջահյութի մեջ հա-  
ճախ կուտակվում են նաև մննդանյութեր հաջորդ տարվա կամ  
նոր սերնդի համար: Դրանցից մի քանիսը հետագայում բյուրե-  
ղանում կամ կարծը մարմիններ են դառնում:

ԱԼԵՅՐՈՆԻ ՀԱՏԻԿՆԵՐ ԵՎ ԶԱՆԱԶԱՆ ԲՅՈՒԹԵՐՆԵՐ


Թե ալեյրոնի հատիկները և թե բյուրեղներն առաջանում են բջջահյութի մեջ լուծված նյութերից:

Ալեյրոնի կամ պրոտեինյան հատիկները կազմված են սպիտակուցներից և մեծ մասամբ հանդիպում են սերմերում: Օսլայով հարուստ սերմերում գրանք շատ մանր են, գտնվում են բուլոր պահեստաբջիջներում, բայց առանձնապես շատ են գտնվում հատուկ ալեյրոնի շերտի բջիջներում: օրինակ, ցորենի, գարու հատիկների մեջ: Յուղառատ սերմերում ալեյրոնի հատիկներն ավելի խոշոր են և դիտելուն հարմար, օրինակ, տեղկանեփի կամ գինագերչակի սերմերում:

Ալեյրոնի հատիկը չորացած վակուոլ է, որի մեջ սպիտակուցներ են եղել: Երբ սերմը ծլելուց առաջ ջուր է վերցնում և ուռչում է, ալեյրոնի հատիկները նորից դառնում են վակուուներ: Եթե տեղկանեփի սերմից մի բարակ շերտ կտրենք և ջրեկ կաթիլի մեջ տեղավորելով՝ միկրոսկոպով դիտենք, ապա ալեյրոնի հատիկների մեջ երկու տիպի մարմնիկներ կտեսնենք՝ փոքր, դնդան գլոբուլիներ և ավելի մեծ սպիտակուցային բյուրեղներ: Գլոբուլիները կազմված են կալցիումից, մագնեզիումից, ֆոսֆորաթթվից և օրգանական նյութից: Գլոբուլիները


երկում են նաև չոր պրեպարատի վրա: Սպիտակուցային բյուրեղները երկում են միայն ջուր ավելացնելուց հետո, դրանք միշտ չեն լինում: Երբեմն ալեյրոնի հատիկներում լինում են թրթնջկաթթվական կալցիումի բյուրեղներ:

Բջջահյութի մեջ որոշ նյութեր այնքան շատ են կուտակվում, որ նստվածք են տառիս, մեծ մասամբ բյուրեղների ձևով: Բուսական բջիջներում շատ տարածված են թրթնջկաթթվական կալցիումի բյուրեղ-



Նկ. 15. Ալեյրոնի հատիկ տիղկանեփի սերմերի բջիջներում:

Ները: Դրանք լինում են պարզ և մի քանիսն իրար հետ համաձած, վերջինները կոչվում են դրուզներ, երբեմն էլ այդ բյուրեղաները լինում են բարակ ասեղների ձևով՝ սովորաբար շատ և մի խրձով դասավորված: Ասեղնածեւ բյուրեղները կոչվում են ուափիդներ: Այս բյուրեղները հեշտությամբ լուծվում են աղաթթվի մեջ:



Նկ. 16. Բյուրեղներ. 1—երեք բջիջ պարզ բյուրեղով և գրուզներով, 2—6—զանազան ձևի բյուրեղներ, 7—բջիջ առանձին խրձով, 8—առանձին ուափիդ, 9—սփերու կրիստալ:

Թրթնջկաթթվական կալցիումը համարվում է բջջի թափուկ, այն մի անգամ բյուրեղանալուց հետո ընական պայմաններում այլևս նորից չի լուծվում: Եթե բույսը բազմամյա է, ապա այդ նյութը թափվող տերևների հետ հեռանում է: Միայն ուափիդներն են են որոշ պաշտպանողական գեր կատարում: Երբ մանր կենդանիները (օրինակ, խմունջները) ուտում են տերևներ, ուափիդները խրցում են գրանց բերանի պատերի մեջ և անախորժություն են պատճառում:

Բացի թըթնջկաթթվական կալցիումից, բջջահյութի մեջ  
երբեմն լինում է նաև սիլիցիում օքսիդ (ավագանյութ), որը  
երբեմն լցնում է ամբողջ բջիջը:

Շատ հաղվագյուտ դեպքերում բջիջներում կուտակվում են  
կրաքար և ուրիշ հանքային նյութեր:

... Բջիջներից մի քանիսը... շնորհիվ ամբացած  
թաղանթի դարձան առաջին բուսական բջիջները:  
Է, Հեկել

Թաղանթը բուսական բջջի արտաքին կմախքն է: Նա սահմանափակում է բջջի ուռչելը, պրոտոպլասմայի շերտը պաշտպանում է օսմոսի հետևանքով պատռվելու վտանգից և միաժամանակ նպաստում է տուրպորի առաջանալուն:

Բջջաթաղանթը հատուկ է բույսերի մեծ մասին: Թաղանթչունին լորձնաբույսի մարմնական բջիջները, մյուս բույսերի միայն բազմացման բջիջները զոսովորները և սեռական բջիջները կամ գամետները սկզբում:

Բջջաթաղանթը երիտասարդ վիճակում մի նուրբ, բարակ թափանցիկ, ձգվող, բայց բավական կայուն պարկանման շերտ է: Բույսերի մեծ մասի բջջաթաղանթը կազմված է մի հատուկ նյութից, որ կոչվում է թաղանթան յութ կամ ցելուլոզ: Վերջինս իր քիմիական բաղադրությամբ բազմաշաքար է և շատ մոտ է կանգնած օսլային: Բոլոր կանաչ բույսերի բջջաթաղանթները ցելուլոզից են կազմված: Ինչ վերաբերում է ոչ կանաչ բույսերին, ապա բակտերիաների բջջաթաղանթը կազմված է պեկտինային նյութերից, որոնք մոտ են շաքարներին, իսկ սընկերի բջջաթաղանթը՝ արդեն ազոտ պարունակող նյութից, որն եր քիմիական բաղադրությամբ շատ նման է կենդանական և իտինին (իտինից է կազմված միջատների, խեցգետինների արտաքին կարծը շերտը):

Պետք է ասել, որ նույնիսկ ամենաերիտասարդ բջջաթաղանթը միայն ցելուլոզից չի լինում կազմված. Նրա հետ քեզ թե շատ լինում են և ուրիշ նյութեր, մեծ մասամբ և առաջին հերթին՝ պեկտինային նյութեր: Սրանք միշտ գտնվում են բջիջների արանքում և իրար են կպցնում հարեան բջիջների պա-

տերը: Բացի դրանից, պեկտինային նյութերը ներծծվում են նաև թաղանթի մեջ՝ տեղափորվելով նրա մասնիկների արանք՝ ներում: Այդ նյութերը չեն խանգարում ցելուլոզը որոշելուն: Վերջինս յոդից դեղնում է, իսկ եթե յոդը գործ ենք ածում ցինկի քլորիդի հագեցած լուծույթի կամ ծծմբաթթվի հետ, ապա ցելուլոզը օւլայի նման կապում է:

Ցելուլոզը կայուն նյութ է, թույլ թթուներից և հիմքերից չի փոխվում, հայտնի լուծիչների մեջ (սպիրտ, եթեր և այլն) չի լուծվում: Նա լուծվում է մի հատուկ հեղուկի մեջ, որ պատրաստում են՝ պղնձի օքսիդը լուծելով ամոնիակի մեջ: Սա մի երկնագույն հեղուկ է, կոչվում է Շվեյցերի սեակտիվ:

Ցելուլոզի թաղանթը մի անգամ առաջանալով բջջի շուրջը՝ նորմալ պայմաններում այլևս չի քայքայվում: Միայն որոշ գեղեցիկ լուծույթի փոխվում: Օրինակ, որոշ սերմերի ծելու ժամանակ ցելուլոզը լուծվում է, այդ ցելուլոզը պահպատի սննդի գեր է կատարում (հնդկական արմավի սերմերը):

Բջջաթաղանթը մեռած մարմին է: Նա աճում է պրոտոպլասմայի շնորհիվ: Բջջաթաղանթն աճում է երկու եղանակով՝ ներդրման և շերտադրման: Առաջին եղանակի էությունն այն է, որ պրոտոպլասմայի առաջացրած ցելուլոզի նոր մասնիկները տեղադրվում են հին մասնիկների արանքներում և դրա հետեւ վանքով թաղանթը մեծանում է, աճում է նաև բջիջը: Սկզբում կարծում էին, թե այդ պրոցեսում տուրգորը մեծ դեր է կատարում: Տուրգորի հետևանքով բջջաթաղանթը ձգվում է, նրա մասնիկներն իրարից հեռանում են և տեղ է բացվում նոր մասնիկների համար: Բայց հետո պարզվեց, որ զա այդպես չի կատարվում: բջջաթաղանթն աճում է նաև տուրգորն ընկած ժամանակում: Բացի դրանից, բջջաթաղանթը հաճախ իր սոլոր մասերով հավասար չի աճում: Ահա այս և ուրիշ փաստեր հիմք հանդիսացան եղանակացներու, որ բջջաթաղանթի աճումը ներդրման եղանակով կատարվում է որոշ հորմոնների (առևքսինների—աճման հորմոնների) ազդեցության տակ: Ներդրման եղանակով բջջաթաղանթն աճում է միայն երիտասարդ ժամանակ:


Բջջաթաղանթը հաստությամբ սկսում է աճել այն ժամանակը, երբ նրա մակերեսային աճը զադարում է, և բջիջը հասնում է իր վերջնական մեծության: Թաղանթը կարողանում է հաստանալ:

թե արտաքուստ և թե ներքուստ: Բջջաթաղանթը դրսից հաստանում է այն դեպքում, երբ բջիջն ազատ է: Օրինակ, դրսից է հաստանում ծաղկի փոշեհատիկի, շատ բռյամերի սպորների թաղանթը, որովհետև այդ բջիջները խիտ հյուսվածքից առաջանալով՝ դեռ փոշանոթում կամ սպորանոթում իրարից անջատվում են: Արտաքուստ հաստանալ կարող են և ուրիշ բջիջներ, եթե դրանք օրգանի մակերեսին են գտնվում: Ի հարկի, արտաքուստ հաստանալ կարող է միայն դրանց դրսի ազատ պատը: Արտաքուստ կատարված հաստացումը հաճախ նկատվում է, որովհետև սովորաբար անհամաշափ է կատարվում. օրինակ, ծաղկի փոշեհատիկների վրա առաջանում են փշիկներ, ցցվածքներ, ակոսներ, փոսիկներ, զանազան քանդակներ և այլն: Նման երեսույթ կարելի է տեսնել նաև սպորների վրա: Քանի որ այս դեպքերում բջջաթաղանթի վրա նոր շերտն ավելանում է դրսից, այդ պատճառով էլ բջջի խոռոչը չի փոքրանում:

Այլ պատկեր ենք տեսնում, երբ բջջապատը հաստանում է ներքուստ, Բջջաթաղանթը մեծ մասամբ այդ եղանակով է հաստանում: Սակավ է պատահում, որ բջջապատը ներքուստ հաստանա համարյա համաշափ: Սովորաբար, ներսից ևս հաստացումն անհամաշափ է կատարվում, և հաճախ զանազան քանդակներ են ստացվում: Օրինակ, այն բջիջներում, որոնք հետագայում ջրատար խողովակներ են գտնում, հաստացումը ներսից մինում է սպիրալաձև, օղակներով, աստիճաններով, ցանցաձև կամ կետանման՝ փոսիկներով: Այդ հաստացումների դերն է ամսություն տալ բջջապատերին և հնարավորություն՝ շրջապատղ հյուսվածքների ճնշմանը դիմադրելու: Ջրատար անոթները ներքին ճնշում՝ տուրքոր չունեն, որովհետև իրենց զարգացման վերջում կենդանի չեն, նույնիսկ նրանց մեջ բացասական ճնշում կա, այսինքն ճնշումն ավելի պակաս է, քան սթնոլորտում: Եթե որևէ բույսի ցողուն կտրենք, նրա անոթների մեջ անմիջապես ոդ կմտնի: Փորձն ակնառու կլինի, եթե ցողունը ծռենք, ընկըռմենք մսդիկի մեջ և այնտեղ կտրենք: Այս դեպքում սնդիկը կմտնի ջրատար անոթների մեջ: Ոյնուհետև մենք կարող ենք մի բարեկ շերտ կտրել և միկրոսկոպով դիտել անոթների մեջ կտեսնենք սնդիկի կաթիլներ: Ուրեմն ընդհանրապես այդ բջիջները պետք է ամուր պատեր ունենան, այլապես կճզմվեն, մանավանդ

որ նրանց շուրջը կան կենդանի բջիջներ շատ ուժեղ տուրգորով և իրենց հերթին ճնշում են այդ անկենդան բջիջների վրա:

Նույնիսկ այն դեպքերում, երբ թվում է թե բջջապատը ներքուստ համաչափ է հաստանում, այնուամենայնիվ, ցելուզի այդ նոր շերտում միշտ անցքեր կան, որոնք կոչվում են ողոք կամ ծակոտի: Շերտը հաստանալուն զուգընթաց ծակոտին էլ երկարում է, որովհետև հենց այդ տեղում ցելուզի չի դրվում: Հետաքրքրական է, որ եթե հարեան բջջի թաղանթն էլ է հաստանում, ապա ծակոտին ընկնում է մյուս բջջի ծակոտիի դիմաց: Սակայն բջջեց բջիջ անընդհատ անցք չկա, որովհետև բջիջների



Նկ. 17. Քարային բջիջներ  
հաստացած պատերով և  
ծակոտիներով:

անցքերի են փոխվում, որովհետև այդ մասերում սկզբնական թաղանթը քայլայվում է:

Հաստացած բջջաթաղանթի մեջ երկու գլխավոր շերտ ենք տարբերում՝ առաջնային և երկրորդային: Դրանցից առաջինը կազմվում է բջջի կիսվելու ժամանակ, հետագայում աճում է ներդրման եղանակով: և հատուկ է բույսի բոլոր բջիջներին: Երկրորդը հետո ավելացած դրսի կամ ներսի շերտն է, որը ներկա է միայն հաստացած բջջաթաղանթներում: Սա համեմատաբար ուշ է առաջնային և հաճախ մի քանի բարակ շերտերից է կազմված լինում:

Ցույց է տրված, որ բջջաթաղանթը կազմված է ցելուզի շատ փոքր բյուրեղանման մասերից, որոնք կոչվում են մի-

սկզբնական թաղանթները տեսանելի անցքեր չունեն: Այդ մասում կան շատ նուրբ անցքեր, նույնիսկ միկրոսկոպով սովորական ձեռվ դիտելիս անտեսանելի: Ինչպես արդեն ասել ենք, այդ նրբին անցքերով ձգվում են պրոտոպլասմայի շատ բարակ թելիներ՝ պլասմոդիումներ:

Ծակոտիները շատ տիպերի են լինում՝ հասարակ, բարդ, եղերված և այլն: Որոշ տեսակի բջիջներում՝ (ժաղանման, ջրատար) հաճախ ծակոտիները լրիվ

ցելներ։ Սըանք խմբավորվելով խուրձեր են կազմում, որոնք  
և մտնում են բջջաթաղանթի կազմության մեջ։

Բույսի որոշ մասնութմ բջջաթաղանթն, ինչպես որ կազմը  
վում և ձեռավորվում է, այդպես էլ մնում է և նոր փոփոխու-  
թյունների չի հնաթարկվում։ Սակայն շատ հյուսվածքներում  
բջջաթաղանթը հետագայում փոփոխվում է։ Այդ փոփոխություն-  
ները երկու կարգի են՝ լինում—կամ թաղանթի մեջ ներծծվում  
են որոշ նյութեր, այլ խոսքով, ցելուլոզին ավելանում է մի  
նոր նյութ, կամ թե ինքը ցելուլոզը փոխարկվում է այլ նյութի։

Բարձրակարգ բույսերի մեջ բջջաթաղանթի ամենից հա-  
ճախ կատարվող փոփոխությունը փայտացումն է։ Դրա էությունն  
այն է, որ բջջաթաղանթի մեջ ներծծվում է մի հատուկ նյութ,  
որը կոչվում է լիգնին։ Փայտացումը երբեմն անվանում են  
նաև լիգնինացում։

Փայտացման հետեւանքով բջջաթաղանթները դառնում են  
ամուր, բայց ավելի փխրուն։ Լիգնինով ներծծված թաղանթը  
ջուր ծծելու վերաբերմամբ կայուն է և չի ոռչում։ Լիգնինը  
ածխաջուր չի և ազոտ էլ չի պարունակում, նրա մեջ թթվա-  
ածխաջուր մի նյութ չէ, այլ մի քանի նյութերի խառնուրդ։ Լիգն  
լիգնինը մի նյութ չէ, այլ մի քանի նյութերի խառնուրդ։ Լիգն  
նինը լուծվում է հատուկ հեղուկների մեջ, օրինակ, Շուլցեի  
խառնուրդի մեջ, որը կազմված է աղոտական թթվից և բերառո-  
լիտյան աղից, նաև կծու կալիի մեջ և այլն։ Լիգնինը որոշելու  
համար գործ են ածում որոշ նյութեր, որոնցից նա կարմրում  
կամ դեղնում է։

Լիգնինին մեծ մասամբ մեխանիկական՝ ամրություն տա-  
լու դեր են վերագրում։ Բացի զրանից, ընդունում են, որ լիգ-  
նինը բարձրացնում է փայտի գիմագրականությունը զանազան  
միկրոօրգանիզմների հանդեպ։ Հայտնի է, որ բույսի ամենա-  
կայուն հյուսվածքները ենց լիգնինով են ներծծված։ Դրանք  
շատ երկար են դիմանում՝ դարձնով և հաղարամյակներով և  
նույնիսկ ջրում ուշ են փոռում։

Բույսի երիտասարդ մասերի ամենաարտաքին շերաբ կոչ-  
վում է վերնամաշկ կամ էպիդերմիս։ Այդ շերտի բջիջների ար-  
տաքին՝ օդի հետ շփող պատը սրվորաբար ավելի հաստ է լի-  
նում, քան կողքի և ներքին պատերը, և ներծծված է լինում մի

հատուկ յուղանման նյութով, որը կոչվում է կուտին, էպիդերմիսի երեսին կուտինը մի շերտ է կաղզում, որն այդ անունից կոչվում է կուտի կուլա: Վերջինը ջուր և օդ համարյա չի անց կացնում և ներքին շերտերը պաշտպանում է չորանալուց: Բացի դրանից, կուտիկուլան երեսն փայլուն է լինում՝ մանտվանդ լուսառատ վայրերի բույսերի վրա. այդտեղ նա անդրադարձնում է լույսի մի մասը և այդպիսով թուլացնում է խիստ ուժեղ լույսի կործանարար աղղեցությունը: Կուտիկուլան կարող է պաշտպանել նաև այլ աղղեցություններից՝ շատ տեսակի հիվանդաբեր միկրոօրգանիզմներից, ոչ ուժեղ հարվածներից և այլն:

Բազմամյա բույսերի երկարակյաց մասերը կարճ ժամանակից հետո դրկվում են էպիդերմիսից, Դրան փոխարինում է խցանային շերտը: Սա բարակապատ բջիջներից կազմված բազմաշերտ հյուսվածք է, որի բջջաթաղանթները ներծծվում են կուտինի նման յուղանման մի նյութով, որը կոչվում է սուբերին: Սա անթափանց է ջրի և օդի համար: Սուբերինը ներծծվում է ամբողջ թաղանթի մեջ՝ բոլոր մասերում և ամեն կողմից մեկուսացնում է պրոտոպլաստը: Հետեանքն այն է լինում, որ դեռևս մատադ բջիջը զրկվում է սնունդ, ջուր և օդ ստանալու հնարավորությունից և մեռնում է: Խցանային շերտը բույսի ներքին մասերը լավ պաշտպանում է արտաքին աղղեցություններից:


Եթե մատադ բջջաթաղանթն այրենք, նրանից ոչինչ չի մնա. դա նշանակում է, որ այդ ժամանակ թաղանթը բացառապես օրգանական նյութերից է կազմված և հանքային նյութեր չեն պարունակում: Ավելի մեծ բջիջների թաղանթն այրելիս արդեն որոշ չափով մոխիր է մնում: Վերջինս կամ ածխաթթվական կալցիում է (կրաքար) կամ սիլիցիում օքսիդ (ավագանյութ): Առաջինը ներծծվում է առավելապես ներքին հյուսվածքների բջջապատերի մեջ, իսկ երկրորդը՝ արտաքին: Շատ ավաղանյութ է լինում ներծծված մանավանդ ձիաձետների և ցորենազգի բույսերի արտաքին շերտում, որի պատճառով այդ բույսերը կարծր են և կտրող: Իսկ դիատոմներ կամ երկիրեղկանիներ կոչված միաբջիջ ջրիմուռների թաղանթներում այնքան շատ ավաղանյութ է կուտակվում, որ գրանց փեղկերն ամուր զրահ են գտնում: Այդ

Չրիմուռների մեռնելուց հետո դրանց փեղկերը չեն քայքայվում, այլ իշներով ջրի հատակը՝ կուտակվում են այդուղի և հատուկ հանգ են կաղմում՝ դիատոմիտ:

Սակավ դեպքերում ծերացած բջջի թաղանթի մեջ երևում են թրթնջկաթթվային կացիումի բյուրեղներ՝ կամ հատիկներ:

Բջջաթաղանթի մինչև այժմ նկարագրած փոփոխությունները ներծծվելու արդյունք են: Բայց երբեմն ինքը ցեղուղոն է փոփոխվում և այլ նյութի է վերածվում: Այդ տիպի փոփոխություն է լորձնացումը: Ցեղուղողը փոխվում է այլ նյութի, որը ջրեց ուռչելու հատկություն ունի: Երբեմն բջջաթաղանթը ըստ բուրովին քայքայվում և լորձի կամ խեժի է վերածվում: Վերջինս ածխաջրային նյութ է՝ նման շաքարներին:

Լորձնացումը կարող է նորմալ լինել և վերաբերվել որոշ բջջների, օրինակ որոշ բույսերի սերմեր ջրեմեջ ընկնելով արտաքինից լորձնանում են (կտավնատ, կոտեմ և այլն): Սակայն հաճախ լորձնացումը հիվանդագին երևոյթ է և կարող է վնասել բույսին: Օրինակ, բալենու, սալորենու և այլ կորիզավոր պտղատու ծառերի գումողի սեժացումը նեժը դուրս է:



Նկ. 18. Ցիստոլիտ:

Ֆորում և կեղկի վրա չորանում է սոսնձի նման:

Որոշ ընտանիքների (եղինձաղգիներ, թթաղգիներ) պատկանող բույսերի բջիջներում հաճախ բջջաթաղանթը դեպի ներս ելուստ է տալիս, որն ունենում է մի լայն մաս՝ կոթով միացած թաղանթին: Այս ելաստը կաղմված է ցեղուղողից՝ ներծծված

ածխաթթվական կալցիումով (կըաքարով): Վերջինս ցելուլոզային  
մարմնի վրա ելունդներ է տալիս, ստացվում է խիտ ողկույզի  
նման մի մարմին, որը կոչվում է ցիստոլիտ: Ցիստոլիտը դա-  
նաղան ձևեր է ունենում և հաճախ այնքան մեծ է լինում, որ  
բռնում է ամբողջ բջիջը: Եթե որևէ թթվով ազդենք ցիստոլիտի  
վրա, ապա հանքային մասը կլուծվի և կմնա ցելուլոզային կը-  
մախքը:

## ԲՅՋԻ ԲԱԶՄԱԾՈՒԾԸ

Յուրաքանչյուր բջիջ առաջանում է մեկ ուրիշ բջիջ  
(Omnis cellula e cellula)

Ա. Վիրապի

Յուրաքանչյուր օրգանիզմ հասունանալով սկսում է բազմանալ: Աղատ ապրող բջիջը՝ միաբջիջ օրգանիզմը, նույնպես բազմանում է, Բաղմաբջիջ բարդ օրգանիզմի յուրաքանչյուր առանձին բջիջն ևս շաբունակում է պահպանել իր բազմանալու ընդունակությունը:

Բջիջը բազմանում է շատ եղանակներով: Այդ բոլոր եղանակների մեջ էլ հիմնականն այն է, որ բջիջը բաժանվում է մասերի, և զրանք դառնում են ինքնուրույն միավորներ:

Բջիջի բազմացման բոլոր դեպքերում նաև բաժանվում է կորիզը, ապա պրոտոպլասման: Բացի զրանից, կորիզը միշտ էլ բազմանում է կիսվելով, միշտ պրոտոպլասման՝ մի քանի եղանակներով:

Կորիզը կիսվում է շատ եղանակներով: Այդ եղանակներն աստիճանաբար բարդանում են սկսած ամենապարզ միաբջիջ օրգանիզմներից մինչև բարձրակարգ բույսերն ու կենդանիները: Որոշ տարբերություններ կան նաև բարձրակարգ բույսերի և կենդանիների կորիզների կիսվելու մեջ: Մենք կնկարագրենք կորիզի կիսվելու ամենապարզ եղանակը և բարձրակարգ բույսերի բարդ եղանակը: Կորիզի կիսվելու ամենապարզ եղանակը կոչվում է ուղղակի, իսկ բարդը՝ անուղղակի բաժանում: Կորիզի ուղղակի կիսումը կոչվում է նաև ամիտող, իսկ անուղղակին՝ միտող կամ կարիոկինեղ:

Ամիտողը կամ կորիզի ուղղակի բաժանումը շատ պարզ կերպով է կատարվում: Նաև կորիզը ձգվում է, ապա մեջտեղից բարակում և ութ թվանշանի տեսք է ընդունում և վերջապես բարակած մասում կարվում է, այսպիսով մի մայր կորիզից



ստացվում են երկու փոքր դուստր կորիզներ: Ամիտողը հատուկ է միայն այն բջիջներին, որոնք տեսական բազմացման և նոր սերունդ տալու ընդունակություն չունեն, ծերացած և կամ հիվանդ հյուսվածքներին են պատկանում: Ամիտողը հատուկ է նաև մի քանի նախէակների՝ միաբջիջ պարզագույն օրդանիղմների:

Միտողը կամ կարիսկինեղը երկու բնորոշ կողմ ունի. առաջին, կորիզի բաժանման ժամանակ առաջանում են հատուկ մարմնիկներ՝ քրոմոսոմներ, որոնք բաժանման պրոցեսի ընթացքում մի շարք փոփոխություններ են կրում, համաշափ կիսվում և բաշխվում են դուստր կորիզների միջն, երկրորդ, առաջանում է աքրոմատինային իլիկ, որը նպաստում է այդ պրոցեսներին: Միտողը կատարվում է չորս ֆազերի ընթացքում:

Ամենից առաջ, հենց որ բջիջը սկսում է նախապարաստվել բաժանվելու, կորիզի մեջ զանվող ցանցը վեր է ածվում բարակ թելիկների, որոնք ճետպհետե կարճանում ու հաստանում են: Նկատվում է, որ դրանք կրկնակի են, այսինքն երկարությամբ բաժանված են: Դրանք աչքի են ընկնում նրանով, որ շատ լավ ներկվում են, մանավանդ՝ հիմնական ներկերով: Այդ նույն ժամանակի ընթացքում կորիզակն աստիճանաբար լուծվում, փոքրանում է և վերջում բոլորովին անհետանում է: Բացի դրանից, այդ ֆազի վերջում կորիզաթաղանթը լուծվում է: Այս առաջին ֆազը կոչվում է պլուֆազ, երբեմն անվանում են կծիկի ֆազ: Պրոֆազը տևում է բավական երկար՝ 30—60 րոպեն և ավելի: Պրոֆազի ընթացքում պրոտոպլասմայի մեջ անգույն թելիկներ են հայտնվում. սկսվում է ձեռվորվել աքրոմատինային իլիկը երկում է, թե ինչպես իլիկի երկու ծայրերի միջն բազմաթիվ չներկված թելիկներ են անցնում՝ միջին մասում իրարից հեռացած: Ստացվում է մի պատկեր հիմքերով իրար կպած երկու կոների ձևով: Իլիկի ծայրերը կոչվում են բենեներ, իսկ միջին ամենալայն մասը՝ հասարակ կած:

Հաջորդ ֆազում քըռմոսոմները դասավորվում են հասարակածում՝ մի հարթության վրա: Միայն այսաեղ են քըռմոսոմները մի հարթության վրա գտնվում. այս պատկերը կոչվում է կորիզաթիթեզ: Այս երկրորդ ֆազի անունն է մետաֆազ, երբեմն էլ ասում են մեկ աստղի ֆազ: Կորիզաթիթեղը բնեսի կողմից դիտելիս՝ պարզ երկում են քըռմոսոմները և դրանց

կարելի է համարել: Կողքից դիտելիս զրանք իրար ծածկում են և մի շերտ են կազմում: Մետաֆազը տևում է 2-ից մինչև 10 րոպե կամ մի փոքր ավելի:



Նկ. 10. Միտոզ (պատկերված է միայն կորիզը) 1—հանգստի վըշան,  
2, 3, 4—պրոֆազ, 5—մետաֆազ, 6—անաֆազ, 7, 8, 9—տելոֆազ:

Արդեն պրոֆազում երևում է, որ քրոմոսոմները երկարությամբ ճեղքված են: Այդ ֆազի շարունակությունը կազմող անաֆազում քրոմոսոմների երկարական կեսերը իրարից սկսում

նն հեռանալ և ուղղվել դեպի հակառակ բևեռները: Դրանց ձգում  
ան հատուկ թելիկներ, որոնք ամրացած են քրոմոսոմների  
սեղմվածքին: Անաֆազը տևում է 2—3 րոպե:

Վերջապես, չորրորդ ֆազում բևեռներում խմբված քրո-  
մոսոմները նորից ձգվում են, բարակում, իրար խառնվում:  
Այդ ժամանակ առաջանում է կորիզակ: Այդ բոլորի շուրջը  
ձևավորվում է կորիզաթաղանթ: Մի խոսքով տեղի են ունենում  
նույն պրոցեսները, ինչ որ պլրոֆազումն էին կատարվել, միայն  
թե հակառակ ուղղությամբ: Այս ֆազը կոչվում է տելոֆազ:  
Տելոֆազի վերջում արդեն երեխում են երկու դուստր կորիզները:  
Տելոֆազը տևում է 3—12 րոպե:

Կորիզի կիսվելուց հետո բաժանվում է բջջի պրոտոպլաս-  
ման իր զանազան մասերով՝ մանրահատիկներով, քոնդրիսոմ-  
ներով, պլաստիզներով:

Բջիջը բաժանվում է մեծ մասամբ կիսվելով: Նրա մեջտե-  
ղում, որտեղ կորիզաթիթեղն էր գտնվում, սկզբում հասարա-  
կածային հարթության վրա ցըված հատիկներ են առաջանում:  
Մրանք մեծանալով և իրար միանալով մի թիթեղ են կազմում,  
որը կիսում է բջիջը երկու դուստր բջիջների:

Որոշ դեպքերում բջջի բաժանումն անմիջապես չի հաջոր-  
դում կորիզի բաժանմանը: Այս դեպքերում կորիզը հաջորդաբար  
կիսվում է մի քանի անգամ, ստացվում է մի բջջում 2, 4, 8  
կամ ավելի շատ կորիզներ: Այնուհետև պրոտոպլասման հավաք-  
վում է այդ կորիզների շուրջը, ծածկվում է թաղանթներով և  
ստացվում է այնքան բջիջ, որքան կորիզ կար: Այսպես են առա-  
ջանում որոշ սնկերի սպորները հատուկ պարկերում:

Որոշ ստորակարգ բույսերի՝ հատկապես շաքարանկերի  
(դրոժ) և մի քանի այլ օրգանիզմների բջիջները բազմանում են  
բոլորշամբ: Օրինակ, շաքարանկի մակերեսին ուռուցք է առա-  
ջանում, որը հետպհետեւ մեծանում է: Այդ նույն բջջի կորիզը կիս-  
վում է և մի կետ անցնում է ուռուցքի մեջ: Կազմվում է դուստր  
բջիջ, որը որոշ ժամանակից հետո անջատվում է մայր բջջից:

Հաճախ նախքան դուստր բջջի անջատվելը, թե մայր բջջի  
և թե դուստր բջջի վրա նոր բոլորջներ են առաջանում և բջիջ-  
ներ գառնում. ստացվում է իրար միացած զանազան մեծության  
բջիջների մի ճյուղավոր շղթա:

## Ք Ր Ո Մ Ո Ս Ո Մ Ն Ե Ր

Քրոմոստմերը մի շաբթ հետաքրքրական հատկություններ ունեն: Այդ պատճառով էլ բաղմաթիվ գիտնականներ արդեն մի քանի տասնյակ տարի զբաղվել են և այժմ էլ շարունակում են զբաղվել դրանց ուսումնասիրությամբ:

Սկզբում կարծում էին, թե քրոմոսոմները բոլորն էլ մի ձեր են և պատկերում էին որպես պայտաձև թելիկներ: Միայն երեսուն և հինգ տարի առաջ հայտնի ուսու գիտնական Ս. Նավաշենը ցույց տվեց, որ քրոմոսոմները միաձև չեն և իրարից տարբերվում են մեծությամբ և անդամատությամբ: Այնուհետև Նավաշենի և նրա աշակերտների աշխատանքների շնորհիվ ուսումնասիրվել են քրոմոսոմների զանազան ձերը: Դրանից մի փոքր առաջ արդեն պարզվել էին, որ քրոմոսոմների թիվը բույսի յուրաքանչյուր տեսակի համար կայուն է և միշտ զույգ: Նույնն է և կենդանական բջիջներում:

Զանազան բույսերի կորիզաթիթեղները գիտելով՝ կարելի է տեսնել երկար և կարճ քրոմոսոմներ: Դրանք բոլորն էլ անխտիք ունեն առնվազն մեկ սեղմվածք, որտեղից ամբանում են գեղի ընեռ ձգող թելիկները: Այդ սեղմվածքը կարող է լինել մեջտեղում կամ մի ծայրին ավելի մոտ: Եթե սեղմվածքը մեջտեղն է գտնվում, քրոմոսոմը կոչվում է և ավագ արաթ և: Իսկ եթե սեղմվածքը մեջտեղում չէ, այլ մի ծայրին ավելի մոտ, ապա քրոմոսոմը կոչվում է անհավաք արաթ, որովհետև սեղմվածքի մեկ և մյուս կողմերն ընկնող մասերը՝ թելերը հավասար չեն: Հաճախ թելերից մեկն այնքան կարճ է լինում, որ գնդիկի տեսք է ստանում: Կարճ թել կոչվում է գլխիկ, իսկ այսպիսի քրոմոսոմները գլխիկավոր են: Բացի զբանից, թելի վրա կարող են լինել՝ և ըստ դաշտի և սեղմվածքների, որոնց թելերը չեն ամբանում: Վերջապես, թելերի ծայրերին կարող են ամրացած լինել և ավելի յաղաքական մասեր և արբանյակներ: Վերջինները փոքր կամ մեծ գնդիկներ են՝ քրոմոսոմին միացած բարակ թելիկով:

Այն պատկերը, որ մենք տեսնում ենք կորիզաթիթհղը  
բնեռի կողմից դիտելիս, կոչվում է կա ը ի ո ա ի պ: Կարիոտիպ  
ասելով մենք հասկանում ենք որևէ բույսի քրոմոսոմների թիվը՝  
մեծությունը և ձեզ: Բազմամյա դիտողություններով ցույց է  
տրված, որ կարիոտիպը համեմատաբար կայուն է տեսակի հա-  
մար և միայն որոշ գեղքերում է փոփոխվում: Դրա շնորհիվ  
կարիոտիպը որոշ նշանակություն ունի բույսերի դասակարգման  
համար, որևէ այլ տեսակին մոտիկ լինելը որոշելու համար,



Նկ. 20. Խաղողի կարիոտիպը:

ճիշտ այնպես, ինչպես այդ նույնի  
համար նշանակություն ունեն տերե-  
ների ձեզ և գասավորությունը, ծաղ-  
կի մասերի թիվը և մյուս հատկա-  
նիշները: Օրինակ, խաղողն ունի 38  
քրոմոսոմ, որոնք մեծ մասամբ մանր  
են, դրանցից մեկ զույգ քրոմոսոմները  
մի փոքր ավելի մեծ են, քան մնացած-  
ները, և կը կնակի սեղմակածք ունեն,  
իսկ մեկ զույգն էլ՝ արբանյակներ են  
կրում: Ցորենի քրոմոսմների թիվը  
տարբեր է ըստ տեսակների. Փափուկ  
ցորենն ունի 42 քրոմոսոմ, կարծը  
ցորենը՝ 28, իսկ միահատ ցորենը՝

14: Ցորենի քրոմոսոմները մեծ են և համարյա հավասա-  
րաթեւ: Խնձօրենու և տանձենու քրոմոսոմների թիվը է 34 և այն:

Եթե մենք համեմատում ենք մոտ տեսակների կարիոտիպ-  
ները, նրանց մեջ ոչ միայն տարբերություններ ենք տեսնում,  
այլև ընդհանուր գծեր: Մոտ տեսակների կարիոտիպների նմա-  
նությունը ցույց է տալիս, որ դրանք ընդհանուր ծագում ունեն,  
բայց ժամանակի ընթացքում փոփոխվելով իրարից տարբերվել  
են: Օրինակ, ցորենի զանազան տեսակների կարիոտիպերի մեջ  
կան հետեւյալ ընդհանուր կողմերը. դրանք ունեն նույն հիմնա-  
կան թիվը—14 կամ 7, և քրոմոսոմները բոլոր տեսակների մոտ  
էլ երկար են ու համարյա հավասարաթեւ: Ցորենի տեսակների  
զարգացման ընթացքում կարիոտիպի մեջ կատարվել է գլխավո-  
րապես թիվի բազմապատկում:

Ներկայումս կարողանում են զանազան եղանակներով ար-

հետական կերպով փոփոխել կարիոտիպը և ապա այդ փոփոխությունները կայունացնել սերունդների մեջ: Օբինակ, փոխում են քրոմոսոմների թիվը՝ բազմապատկերվ երկու, երեք, չորս և ավելի անգամ, ավելացնում են մեկ կամ մի քանի քրոմոսոմ, փոխում են քրոմոսոմների մեծությունը, ձեզ և այն: Շատ հաճախ այդ փոփոխություններին զուգընթաց փոխվում են և բույսի այլ հատկությունները:

Վերեռում մենք ասել ենք, որ քրոմոսոմների թիվը բջջում միշտ զույգ է լինում: Այստեղ կարող ենք ավելացնել նաև հետեւյալը. ըստ մեծության և ձեր քրոմոսոմները զույգերով են, բացի հաղվագյուտ դիպլերից: Այս երեսութը մեզ համար կարդագի միայն այն ժամանակ, երբ ծանոթանանք կարիոտիպի փոփոխություններին բույսի զարգացման ընթացքում:

Միտոզի նկարագրությունից երեսում է, որ բջջի բաժանման ժամանակ քրոմոսոմների թիվը չի փոխվում, քանի որ բուլոր քրոմոսոմները ճեղքվում են և կեսերը հավաքվում են քեսաներում: Հետեւանքն այն է լինում, որ քրոմոսոմների թիվը մը նույն է նույնը: Սակայն բույսի կյանքում մի շրջան կա, երբ կորիզի կիսվելու ժամանակ քրոմոսոմների թիվը կիսվում է: Այսպիսի բաժանումը կոչվում է ու ե գ ու կ ց ի ո ն բ ա ժ ա ն ո ւ մ կամ մ ե ի ո զ ի ս: Ծաղկավոր բույսերի մեջ դա կատարվում է բուն ծաղկի մասերում՝ վարսանդի սերմնասկզբնակներում և առեջի փոշանթում: Մյուս բույսերի քրոմոսոմների թիվը կը բանականական մասերում է հատուկ տեսակի սպորներ կազմվելու ժամանակ: Քրոմոսոմների կրծատված՝ կես թիվը կոչվում է հապլոիդ քանակություն, իսկ կրծակի թիվը՝ դիպլոիդ քանակություն:

Ծաղկավոր և մերկասերդ բույսերի մարմինը կազմված է դիպլոիդ բջիջներից: Այդ բույսերի մեջ հապլոիդ բջիջները շատ քիչ են: Նման երեսութ տեսնում ենք նաև պտերների վրա: Աըրանց մարմինը ևս կազմված է դիպլոիդ բջիջներից: Պտերի տերերի տակի կողմը սպորանոթներ կան, որոնց մեջ ուելուկցիա է կատարվում և զրա հետեւանքով հապլոիդ սպորներ են առաջանում: Այդ սպորները թափվում են, և զրանցից հողի վրա փոքր մարմիններ են առաջանում, որոնք ամբողջովին հապլոիդ բջիջներից են կազմված:


Մամուռների և ջրիմուռների շատ տեսակների վրա հակառակն ենք տեսնում: Դրանց մարմինը կազմված է հապլոիդ բջիջներից: Դիպլոիդ բջիջները սրանց վրա ավելի փոքր տեղ են բունում, երբեմ ընդամենը մեկ գիպլոիդ բջիջ է լինում:

Իսկ Բըբ և ինչպես է հապլոիդ բջիջներից գիպլոիդ առաջանում: Այդ պրոցեսը կատարվում է բեղմանավորության ժամանակ, երկու հապլոիդ բջիջներ՝ սեռական բջիջներ կամ գամետներ միաձուլվում և մեկ բջիջ են գառնում՝ մեկ կորիզով, որի մեջ քրոմոսոմները գումարվում են:

Այսպիսով, բույսի կյանքում իրար հաջորդում են երկու պրոցես՝ սեղուկցիոն բաժանում և բեղմանավորություն: Սեղուկցիայի հետեանքով քրոմոսոմների թիվը դառնում է հապլոիդ՝ իսկ բեղմանավորության հետեանքով՝ գիպլոիդ: Ուրիշն կարող ենք ասել, որ բույսի զարգացման ընթացքում իրար հաջորդում են քրոմոսոմների հապլոիդ և գիպլոիդ քանակություններ: Այս երես վույժը կոչվում է սեր բույն գների և տջորդական գույների, առավելապես ստորակարգ բույսերի մոտ հապլոիդ ֆազն է գերակշռում, իսկ մյուսների, բարձրակարգներից մեծ մասի մոտ՝ գիպլոիդ ֆազը: Թանի որ գիպլոիդ քանակությունը կազմվում է երկու հապլոիդ քանակությունների գումարից, իսկ նույն տեսակի բույսի հապլոիդ հավաքները իրար նման են, այդ պատճառով էլ գիպլոիդ կորիզաթիթեղում քրոմոսոմները զույգերով նման են:

Սակայն, ինչպես վերենում էլ ասել ենք, հագլագյուտ գեպքերում կարիտուպի մեջ մեկ կամ մի քանի զույգը իրար նման չեն լինում: Մեծ մասամբ գա արհեստական կամ բնական խախտութերի արդյունք է: Սակայն որոշ գեպքերում մի զույգի իրար նման չլինելը կամ քրոմոսոմների թիվ կենտ լինելը կապահած է բույսերի բաժանասեռության՝ երկառնության հետ: Օրինակ, վայրի սպանախը երկառն բույս է: Դրա արսական բույսերն ունեն մի հատուկ զույգ քրոմոսոմներ, որոնք մեծությամբ խիստ տարբերվում են իրարից: Դրանցից մեկը մոտավորապես  $1\frac{1}{2} - 1\frac{3}{4}$  անգամ երկար է իր համապատասխան քրոմոսոմից: Մնացած հինգ զույգն իրար նման են: Իզական բույսերը նույնպես վեց զույգ քրոմոսոմ ունեն, որոնք բոլորն էլ զույգ զույգ

իրար նման են. Նման է նաև այն զույգը, որը համապատաս-  
 խանում է արականի անհավասար զույգին: Մեկ այլ օրինակ  
 թրթնջուկի արական և իդական բույսերը տարբերվում են քրո-  
 մուռմների թվով: Արա-  
 կան բույսերն ունեն  
 15 քրոմոսոմ, իգա-  
 կանները՝ 14: Մեծու-  
 թյամբ և ձեռվա տար-  
 բեր քրոմոսոմներից  
 կազմված զույգը, ինչ-  
 պես նաև հավելյալ  
 քրոմոսոմը կոչվում են  
 սեռը որոշող կամ  
 սեռական քրոմոսոմներ:



Նկ. 21. Վայրի սպանախի կարիոտիպը:

Ուրիշ շատ երեսույթներ ևս կազմված են քրոմոսոմների հետ:  
 Այդ բաղմաթիվ երեսույթները, որոնք ուսումնասիրվում են գե-  
 նեակացի կրոմից, ինչպես նաև այն զարմանալի փաստը, որ  
 բոլոր բույսերի (և կենդանիների) բջիջները միասնակ են բա-  
 ժանկում, ցույց են տալիս, որ քրոմոսոմների ճշգրիտ բաշխու-  
 մը գուստը բջիջների միջն բիոլոգիական արտակարգ մեծ նշա-  
 նակություն ունի: Հազարավոր փաստերի հիման վրա գիտնա-  
 կանների մեծ մասն այն եղբակացության է հանգել, որ կորիզը  
 և հատկապես նրա մեջ գտնվող քրոմոսոմները մեծ դեր են խա-  
 զում ժառանգականության մեջ, դրանք հենց ժառանգակիրներ  
 են: Ի հարկի, դրանով չի ժիստվում, որ բջջի մյուս մասերը՝  
 պրոտոպլասման, քոնդրիոսոմները, պլաստիդները նույնպես մի  
 ինչ որ ձեռվա մասնակցում են ժառանգականության երեսույթնե-  
 րին: Ներկայումս հետզհետե թեքվում են դեպի այն տեսակետը,  
 որ թիկ քրոմոսոմները գլխավոր ժառանգակիրներն են, սակայն  
 բջջի մյուս մասերն էլ իրենց տեղն ունեն ժառանգականության  
 մեջ:

Պետք է ասել, որ մի խումբ գիտնականներ չեն լնդունում,  
 թե բջջի քրոմոսոմներն են հիմնական ժառանգակիրները: Այդ  
 գիտնականները հակվում են այն մտքին, որ բջիջն ամբող-  
 ջությամբ վերցրած ժառանգակիր է:

## ԲՈՒՍԱԿԱՆ ԲԶԻՉԸ ՈՐՊԵՍ ՀՅԻՄՔԻ ԱՂԲՑՈՒՄ

Մենք չենք կարող բնությունից չնոքհներ  
սպասել. նրանքը վերցնելը մեր խնդիրն է,  
ի. Միշուրին  
Ով սաստիկ ցանկանում է, նա կգտնի  
Մ. Գորիք

Բույսը շատ մեծ դեր է խաղացել և այժմ էլ շատ մեծ դեր  
է խաղում մարդու կյանքում: Բույսի մեջ առաջանում և կու-  
տակվում են բազմաթիվ այնպիսի նյութեր, որոնցից մարդը  
պատրաստում է սնունդ, հակուստ, բաղմազան դեղորայք, ներ-  
կեր, թուղթ, շինանյութ և այլն: Քանի որ բույսի մարմինը  
կազմված է բջիջներից, ապա և այդ նյութերը գանգում են դրանց  
մեջ: Այժմ տեսնենք թե ինչպես են բաշխված այդ նյութերը բջիջ  
զանազան մասերում:

Մինչև այժմ ասածից պարզեց, թե ինչպիսի բարդ միավոր  
է բուսական բջիջը և որքան շատ զանազան միացություններ է  
պարունակում այն: Աճող բջիջ մեջ դրանք չնշին քանակություն-  
ներով են գտնվում: Այստեղ առանձնապես մեծ տեղ են բռնում  
պրոտոպլասմայի և կորիզի հիմնական բաղադրիչ մասերը՝ սպի-  
տակուցները, շատ փոքր չափով ճարպերը և էլ ավելի քիչ՝ տծ-  
խաջրերը: Այդ բջիջների բջջանյութի մեջ ևս մեծ թփով նյութեր  
կան, սակայն յուրաքանչյուրից շատ չնշին քանակությամբ: Հա-  
մեմատարար ծեր բջիջներում, ինչպես նաև պահեատի օրգաննե-  
րի՝ պտուղների, սերմերի, պալարների, բազմամյա ցողունների  
ու արմատների և զանազան բույսերի հատուկ հյուսվածքների  
բջիջներում, բացի այդ ընդհանուր նյութերից: Կուտակված կան  
այս կամ այն նյութերը Բույսի բոլոր բջիջներն էլ լայն կեր-  
պով օգտագործվում են, բայց հումքի գլխավոր աղբյուրը համե-  
չիսանում են այն բջիջները, որոնց մեջ կուտակված են որոշ նյու-  
թեր:

Շատ բույսերի աճող, գալար մասերը, շնորհիվ նրանց բը-  
ջիջներում գտնվող բաղմաղան արժեքավոր նյութերի՝ օգտագործ-  
վում են հատկապես այն դեպքերում, երբ հենց այդպիսի բաղ-  
մաղանություն է պահանջվում: Օրինակ, շատ բույսերի դալար  
մասերն օգտագործվում են և ննդի համար, ըստ որում դրանք  
գործ են ածվում կամ հում և կամ նախաղես եփելոց, թթու  
դնելոց, կամ որեւէ այլ եղանակով մշակելոց հետո: Հում են գոր-  
ծածում զանազան կանաչեղենները՝ կոտեմ, համեմ, սամիթ, ունան  
և այլն, աղցանները՝ սալաթ, մատաղ եղինձ, կաղամբ և այլն:  
Եփում են սպանախը, սիրեխը, շրեշը, կանգառը և այլն: Թթու  
են գնում վարունգը, կաղամբը, բոխին, բոլին, բըլղղանը և այլն:

Մարդկանց սննդի համար ոչ պիտանի դալար բույսերը օգ-  
տագործվում են որպես անասնակեր՝ թարժ վիճակում, չո-  
րացնելոց հետո կամ սիլոս պատրաստելով:

Երբեմն այդ նույն տեսակի բույսերն օգտագործում են կա-  
նաչ պարագաներն համար:

Այս երեք գեպերում էլ օգտագործվում են բուսական բջջի  
համարյա բոլոր մասերը՝ պրոտոպլասման և կորիզը իրենց մեջ  
մտնող օրգաններով, բջջահյութը իր բարդ բաղադրությամբ և  
նույնիսկ թաղանթը, մանավանդ երր բույսերն օգտագործվում  
են որպես անասնակեր և պարարտանյութ: Փաստորեն երեք գեպ-  
քում էլ բուսական բջիջներն օգտագործվում են որպես սննդ՝  
ոչ միայն առաջին երկու դեպքերում, որ ինքն լատ ինքյան պարզ  
է, այլև երրորդ դեպքում՝ կանաչ պարարտացման ժամանակ: Այս  
վերջին դեպքում բակտերիաները սնվում են այդ բույսերի  
մի մասով, իսկ մյուս մասը վեր են ածում հումուսի՝ բուսահողի:

Հիշեալ նպատակների համար բույսերը վերցնում ենք ուժեղ  
աճի ժամանակ, քանի դեռ բջջաթաղանթները չեն հաստացել և  
չեն փայտացել: Երբեմն էլ մենք ինքներս արհեստական եղան-  
ակներով նպաստում ենք աճմանը և խանգարում՝ փայտացմա-  
նը: Դրա համար բույսերն առատ ջրուս ենք, ազոտով պարա-  
րտացնում, որպեսզի սպիտակուցներ շատ կազմվեն, խիտ ցանք  
ենք կատարում, որ լույս քիչ ընկնի բույսերի վրա և բջջաթա-  
ղանթները նույսը մնան: Բանջարաբուծության մեջ նույրը բույ-  
սեր ստանալու համար նույնիսկ թեթեակի մթնեցնում են, որ-  
պեսզի բջջապատերը երկար ժամանակ նուրբ մնան:

Շատ հաճախ բույսի մասաղ կամ ծեր մասերն օգտագործում  
են ավելի նեղ նպատակով, չնայած, որ այդ մասերում շատ տե-  
սակի նյութեր կան: Օրինակ, ընդդեմները՝ լորին, սիսեռը և այլն  
բազմազան նյութեր են պարունակում, բայց դրանք օգտագործ-  
վում են գլխավորապես որպես սպիտակուցների աղբյուր, որով-  
հետեւ հարուստ են հատկապես այդ խմբի նյութերով: Նույն ձեռվ,  
ընկույզը առաջին հերթին յուղատու է համարվում, չնայած որ  
նա հարուստ է նաև սպիտակուցներով: Իսկ հացահատիկները հա-  
մարվում են օպացով հարուստ մթերք, չնայած որ քիչ սպիտա-  
կուց չեն պարունակում:

Միակողմանի են օգտագործվում նաև վիտամիններով  
առատ բաւական մասերը՝ մասուրը, գազարը և այլն:

Ի հարկե, մինչ այժմ նկարագրված բոլոր դեպքերում, բացի  
գլխավոր մասից, օգտագործվում են բջջի նաև մյուս մասերը:

Հաճախ կենդանի բջիջներն օգտագործվում են նրանց մեջ  
գտնվող ֆերմենտների համար: Օրինակ, շատ բակտերիաներ  
օգտագործվում են մածուն, պանիր, քաշախ և այլն մթերք-  
ներ ստանալու համար, Այս դեպքում բակտերիաները մեղ հե-  
տաքրքրում են միայն որպես ֆերմենտի աղբյուր: Նրանց ար-  
տադրած ֆերմենտները սպիրտը դարձնում են քաշախ, շաքարը՝  
կաթնաթթու և այլն: Շաքարանկերի (գրոժների) ֆերմենտը  
շաքարը դարձնում է սպիրտ: Նկարագրված դեպքերում կենդանի  
բջիջն ամբողջությամբ մասնակցում է նյութափոխարկմանը, նա  
նյութերի մի մասն օգտագործում է իր աճման համար, սակայն  
մեզ այստեղ առաջին հերթին հետաքրքրում է նրա արտադրած  
ֆերմենտը և վերջինիս ներգործությունը սննդամթերքի վրա:  
Այս է պատճառը, որ հաճախ խմորող բակտերիաները և շաքա-  
րանկերը «կենդանի ֆերմենտ» են կոչվույ:

Բազմաթիվ բույսերի որոշ մասեր գործ են ածվում որպես  
գեղութայք, որովհետեւ զբանց բջիջներում գտնվում են զանա-  
զան ազդող նյութեր, այդպիսի բույսերի օրինակ են մոռի պը-  
տուղները, հղան լիզվի տերերը, լորենու ծաղիկները, խոլորձի ար-  
մատային պալարները (աալեպ), ծիրանեգույն մատնոցուկի տե-  
րեր և այլն:

Նույնպես, որոշ բույսերի տերեներ գործ են ածում կաշին ա-  
զդակելու համար, որովհետեւ դրանց մեջ կան աղաղող նյութեր՝

աւաննիդները, օրինակ՝ կաղնուտ տերելը և գխտորը, ընկույզի տերելը և կատվիկները, ուռենու կեղելը, սմախի տերելը և կեղել և այլն։ Աղաղիչ նյութեր պարունակող որոշ բուսական մասեր գործ են ածում ժողովրդական բժշկության մեջ որպես զեղ աղեստամոքսային մի քանի հիվանդությունների գեմ, օրինակ, նուան կեղել։

Կան և այնպիսի բույսեր, որոնց տերենները, ծաղիկները, կոճղարձատները և այլ մասեր գործ են ածվում նրանց բջիջներում պարունակող եթերայուղերի համար Բաղմաթիվ օրինակներից հիշենք ուրցը, գաղձը կամ անանուխը և այլն։ Այս խմբին են պատկանում նաև համեմունքները, օրինակ, ու առջտեղը, հոտափետ տաքտեղը, վանիլը, դարչինը, մեխակը, մուշկայինընկույզը, հիլը և այլն։

Բաղմաթիվ բույսերի առանձին մասերը գործ են ածվում որպես փայտ, խցան, թեր

Փայտ ստանում են ծառերից և թփերից, որոնց ցողունը տարեց տարի աճելով հաստանում և որոշ մասում լիզնինով ներծծվում ու փայտանում է։ Փայտակած մասում կենդանի բջիջներ համեմատաբար քիչ կան, մեծ մասը թաղանթներից են կաղմակած։ Ուրիմն այստեղ ունենք բջջի որոշ մասը՝ թաղանթը բնտկան կերպով անջատված և ձևափոխված։ Ինչպես հայտնի է, փայտը շատ մեծ գործածություն ունի. շատ գեվար է պատկերացնել կյանքն առանց փայտի, որը գործ է ածվում որպես շինանյութ, վառելիք, նեցուկներ (սյուներ հեռոգրաթելերի համար), հումք՝ թուղթ պատրաստելու և գանազան նյութեր ստանալու համար (սպիրտ, քացախաթթու և այլն)։

Մոտավորապես նման ձևով է կաղմակում նաև խցանը։ Այս տեղ ևս բջիջները մեռնում են, և մնում է միայն թաղանթը, որը ներծծված է խցանանյութով՝ սուրերինով։ Տարբերությունն այն է, որ խցանի բջիջները շատ զաղ, մատադ ժամանակ են սկսում փոփոխվել, քանի գեռ թաղանթը նուրբ է և բարակ և ներծծվող նյութը՝ սուրերինը չի կարծրացնում թաղանթը, ինչպես լիզնինը. Այդ պատճառով էլ խցանն առաճական է, քանի որ կազմը մըված է օգով լի բաղմաթիվ շատ մանր փակ խորշերից։ Նույն պատճառով խցանը շատ ավելի թեթև է, քան փայտը։ Խցանն իր առանձնահատկությունների շնորհիվ պիտանի է շշերը խցելու, փրկարար օղակներ պատրաստելու (նավերի վրա), իր վատ հա-

զորդիչ լինելու չնորհիվ էլեկտրականությունը և ջերմությունը  
մեկուսացնելու և բազմաթիվ այլ նպաստակների համար:

Թելը ստանում են մեծ մասամբ ցողուններից, որտեղ կան  
նեղ ու երկար հաստապատ մեռած բջիջների խրձեր՝ կազմված  
միայն թաղանթներից: Այդ խրձերն առանձնապես լավ գարու-  
ցած են որոշ բույսերի ցողուններում: Այդ բույսերը կոչվում են  
թելատու բույսեր: օրինակ, կտավնատ կամ վուշ, կանեփ, կենափ,  
սամի, թթենի, և այլն: Թելն անջատելու համար հարկան հյուս-  
վածքները քայլայում են՝ թրջոց դնելով կամ քիմիական ազ-  
դիչներով: Որոշ գեղքերում թելը ստանում են բույսի գաճապան  
մասերի վրա գտնվող մաղիկներից, որոնք նույնպես մեռած են  
և միայն թաղանթներից են կազմված: օրինակ, բամբակի թելը  
ստանում են նրա սերմերի վրա գտնվող մաղիկներից:

Ներկայումս բազմաթիվ նյութեր անջատում են բուսական  
բջիջի տարրեր մասերից և զործ ածում քիչ թե շատ մաքուր վի-  
ճակում: Բջջից անջատում են օսլան, շաքարները, յուղերը և շատ  
ուրիշ նյութեր:

Օսլան ջրում չլուծվող հատիկների ձևով է, այդ պատճա-  
ռով էլ բջջից հանելու համար պիտք է բուսական նյուսվածքներն  
աղալով քայլայի, որ բջջաթաղանթները պատովին, և ապա ջրով  
դատիլ: Սովորաբար օսլա ստանում են կարտոֆիլի պալարներից  
(կարտոֆիլի ալյուր), բրնձից և այլ բույսերի սերմերից:

Շաքարները լավ լուծվում են ջրում, ուստի դրանց հա-  
նելու համար անհրաժեշտ չէ բջիջը ջարգել, կարելի է պահել մի-  
այն ջրի մեջ, ուր օսմոսի չնորհիվ դուրս կգան շաքարները: Ամե-  
նագործածական շաքարը եղեգնաշաքարը կամ սախարոզն է (գի-  
ստիխարիդ), որը ստանում են շաքարեղեղից և կամ ճակնեղի  
արժաներից: Մյուս շաքարներն ավելի նեղ գործածություն  
ունեն, օրինակ, գլուկոզը, որը շատ կա խաղողի և այլ բույսերի  
պառուղներում:

Շաքարյուղերն անջատում են յուղասատ սերմերից  
ձղմելու միջոցով, նաև լուծիչներով՝ ըենզինով, հթերով: Ինչպես  
արգեն ասել ենք, ճարպայուղը կազմված է գլիցերինից և ճար-  
պաթթուներից: Հայտնի է, որ բուսայուղերը շատ տեսակների են  
լինում, նայած թե դրանց բաղադրության մեջ ինչ ճարպաթթու-  
ներ են մտնում: Ճարպայուղերն իրարից տարբերվում են շատ

Հատկություններով, որոնցից մենք կնկարագրենք երկուսը: Ամենից առաջ ճարպայուղերը տարբերվում են սառցման աստիճանով. օրինակ, արևածաղկի յուղը կազմված է զլխավորապես ցածր աստիճանի տակ սառչող ճարպայուղերից, իսկ բամբակի յուղը, ընդհակառակը, ավելի շատ ունի շուտ սառչող ճարպայուղերից, թացի գրանից, ճարպայուղերը լինում են չոր ացող և չչոր ացող: Չչորացող յուղերը կազմված են հագեցած ճարպաթթուներից, որոնք շրջապատից թթվածին համարյա չեն վերցնում և շատ երկար ժամանակ ննում են նեղուեկ վիճակում: Չորացող յուղերն ունեն չհագեցած ճարպաթթուներ, որոնք օդից թթվածին են վերցնում, հագենում և ամրանում:

Նայած թե ինչ հատկություններ ունեն ճարպայուղերը, գըրանք գործ են ածում տարբեր նպատակներով: Չորացող յուղերը գործ են ածում զլխավորապես յուղաներկեր պատրաստելու համար: Այդ յուղերով պատրաստած ներկերը կանազան առարկաներին քսելիս, գրանց երեսին չորանում են բարակ շերտով և պահպանում արտաքին ազգեցություններից (փայտը՝ թրջվելուց, մետաղը՝ ժանգոտելուց և այլն): Չորացող է, օրինակ, կոտավճառի յուղը, որը մեծ քանակությամբ օգտագործվում է օլիֆ և յուղաներկեր պատրաստելու համար: Բուսական յուղերն օգտագործվում են ևս շատ այլ նպատակների համար՝ ուտելու, որպես օծանելիք, օճառի և զլիցերինի արտադրության մեջ և այլն:

Եթերայաւղերը շուտ ցնդող նյութեր են: Դրանց անշատում են ըջից՝ ջրի հետ թորելով: Սրանք ջրի մեջ չեն լուծվում և երեսին հավաքվում են: Բազմազան եթերայուղեր կան, որոնք տարբերվում են իրենց բաղադրությամբ, հոսառի, մարդու օրգանիզմի վրա թողած ազգեցությամբ: Հայտնի է, թե որքան լավ են տարբերվում զանազան ծաղիկներն իրենց բուրմունքով՝ շեփորուկը կամ յասամանը, վարդը, մեխակը, մանուշակը և այլն: Եթերայուղերից պատրաստում են անուշանուա օծանելիքներ (օդըկորն): Եթերայուղերից մի քանիսն օգտագործվում են որպես գեղեր. բոլորին հայտնի են անանուխի (մյատնի) կաթիլները, վալերիանի (կատվախոտի) կաթիլները՝ զրանք բույսերից ստացվող եթերայուղերի լուծույթներ են: Եթերայուղերը գործ են ածում նաև հրուշակեղենի մեջ և լիկյաներ պատրաստելիս, նաև տեխնիկայում՝ որպես լուծիչներ: Սառուդելու համար

թե բույսի մեջ կա արդյոք եթերայուղ, նրա տեսհները, ծաղիկները կամ կոճղարմատը տրորում են երկու ձեռքի ափերի մեջ և հոտ քաշում:

Եթերայուղերը հատկալիուն ունեն օդի հետ շփվելիս խտանալու, որի հետևանքով գառնում են բալասան (բալզամ). օրինակ փշատերի ծառերից ցողուններում և այլ մասերում բալսան՝ կա, որ վերքերից կամ այլ տեղերից գուրս է ծովում և ամրանալով ձյութ է դառնում:

Զյութի հետ չպետք է շփոթել թաղանթի ձեափոխությունից առաջացած խեժը կամ գումմին: Խեժից պատրաստում են սոսինձ: Հիշենք արարական խեժը կամ գումմին արարիկումը (գումմիարաբիկ), որը հատուկ տեսակի ակացիայից են ստանում: Խեժ ստանում են նաև մի քանի տեսակ փոքր փշութփերից, որոնք գաղ են կոչվում: Գաղերը թիթեռնածաղիկ թփեր կամ շատ փոքր ծառեր են փետրածեաբարդ, փշածայր տերեներով: Դրանք աճում են չոր տեղերում և լայն տարածված են նաև մեղ մոտ Հայաստանում: Խեժ ստանալու համար գաղի բնի (և կամ գլխավոր ճյուղերի) վրա որևէ սուր գործիքով խոր վերք են առաջացնում. այլտեղից գանգաղ ծորում է խեժը (տրագանտ), որը օդի հետ շփվելով ամրանում է: Հավաքում են հետեւյալ օրը կամ ավելի ուշ:

Բուսական բջիջներից ստանում են բազմաթիվ ներկեր՝ կանաչ (դժնիկ կոչված ծառից), կարմիր (տորոնից), գեղին (իշտկաթնուկից), սև (ընկուզենուց) և այլն:

Բջջանյութից կարելի է անջատել բազմատեսակ ազոտ պարունակող և անազոտ գլյուկոզ կողի դներ, որոնցից մի քանիսը թունավոր են, օրինակ ամիգդալինը (նշի և այլ կորիզապտուղների սերմերում), սոլանին (կարտոֆիլի ծիլերում, այլ մասերում և մորմազգիների ընտանիքին պատկանող ուրիշ տեսակների բջիջներում), սապոնին (օճառախոտի և մեխակազզի այլ բույսերի մեջ): Դրանք գործ են ածվում որպես զեղեր, ինչպես նաև տեխնիկական և այլ նպատակներով: Քլյուկոզիդներին մոտ են կանգնած տաննիդները (աղաղիչ նյութեր), որոնց մասին խոսել ենք վերևում:

Բջջանյութի մեջ ազոտ պարունակող մի խումբ նյութեր կան՝ ալկալոիդներ, որոնք հատկապես կարեոր բժշկական-

նշանակություն ունեն: Ալկալիդները համարյա բոլորն էլ քիչ  
թե շատ թունավոր են. փոքր չափերով գործածելիս՝ դրանք աղ-  
դակում են նյարդային կենարոնները, իսկ մեծ չափերով՝ ժամա-  
նակավորապես կասեցնում են նյարդերի աշխատանքը և այլ աղ-  
դեցություններ են անում: Ալկալիդները լինում են բույսի բո-  
լոր մասերի քջիջներում: Դրանցից մեծ նշանակություն ունի  
իբրինը, որը ստացվում է հատուկ ծառից, զվարապես զբա-  
կեղեից, և ճանաչված միջոց է մալարիայի դեմ: Ստրիխնինը  
(մի հատուկ տեսակի լիանից) շատ ուժեղ թույն է, որը սակայն  
փոքր քանակություններով գործ է ածվում մկանների աշխա-  
տանքն ազդակելու համար: Մորֆինը (մշակովի կակաչի պառուղ-  
ներից) քնարեր հատկություն ունի: Նիկոտինը (ծխախոտի տե-  
րեկներից) գործ է ածվում զյուղատնտեսության վնասառու մի-  
ջատների դեմ: Ալկալիդների թիվը մեծ է:

Ալկալիդները թմրեցնող (նարկոակիլ) նյութեր են:  
Ալկալիդ պարունակող որոշ բույսեր վաղուց գործ են ածվում  
նյարդերը թմրեցնելու կամ գրգռելու համար, որպես սովորություն:  
Հայտնի է ծխախոտի գործածությունը, որի տերենները հատուկ  
մշակումից հետո բարակ թելերի ձևով կտրում են և ծխում:  
Զանաղան երկրներում նույն նպասակով ծխում, ծամում կամ  
քթով ներշնչում են այլ բույսերից պատրաստած նյութեր: Օրի-  
նակ, օպիումը (կակաչի պտուղներից ստացվող խիժանման նյութ,  
որից հետո անջատում են մորֆինը), թեյը, սուրճը ևս ալկա-  
լիդներ են պարունակում (վերջին երկուսը՝ կոֆեին): և այդ  
պատճառով նույնպես պետք է նարկոտիկների խմբին դասել:

Մի քանի բույսեր ունեն կաթնահյութ, որից ստացվում է  
կաթուչուկ: Մեր Միության մեջ լայնորեն մշակում են տառ-  
սագըզ կոչված խտուտիկը, որի կաթնահյութի մեջ մեծ քանա-  
կությամբ կառուչուկ կա: Մարի ծամոնը, որը ստանում են սինձի-  
գոզիկ կոչված տեսակի հյութից, նույնպես մեծ մասով կառ-  
չուկ է:

Մենք հիշատակեցինք մի շաբաթ նյութեր, որ ստացվում են  
բուսական բջիջներից և օգտագործվում են ամենաբազմազան  
նպատակներով: Սակայն մեր թվարկած նյութերը քջից ստաց-  
վող նյութերի մի փոքր մասն են միայն կազմում: հայտնի  
նյութերի ցուցակը մի քանի անդամ մեծ է: Բացի գրանից, բույ-

սերի բազմակողմանի հետազոտությունների շնորհիվ, շարունակ նորանոր նյութեր և արդեն հայտնի նյութերի նոր աղբյուրներ են գտնվում: Սովորական գիտնականների ջանքերով վերջին մի քանի տարիների ընթացքում հայտաբերվել են այնպիսի բռյալ սեր, որոնք իրենց բջիջներում պարունակած նյութերով փոխարինող են հանդիսանում արտասահմանից ստացվող նյութերի:

Պետք է ասել, որ մարդը չի բավարարվում այն նյութերով, որ պատրաստի վիճակում ստացվում են բնությունից: Հաճախ նա փոփոխում է բռւսական ըջջից ստացված նյութերը. օրինակ, շաքարը դարձնում է սպիրտ, վերջինս՝ քացախ կամ կառչուկ և այլն: Շատ անգամ էլ նա ցածրաբեր նյութերից պատրաստում է անհամեմատ ավելի արժեքավոր նյութեր. օրինակ, շաքարասնկերի միջոցով հարզը դարձնում են բարձրարժեք անասնակեր (գրոժացում): Հիշենք, որպես օրինակ, նաև ցելուլոզի արտադրությունը: Ցելուլոզը համեմատաբար ցածրաբեր նյութ է, որը շատ առատ դանվում է բնության մեջ ամենուրեք՝ անտառներում (ծառերից ստացվող փայտը), դաշտերում (խոտերը), ջրերում (ջրիմուռները): Այդ լայն տարածված նյութից պատրաստում են բազմաթիվ ավելի արժեքավոր նյութեր՝ շաքար, քաղցրեղեն, սպիրտ, կառչուկ, թուղթ, ստվարաթուղթ, դիկտ, արհեստական մետաքս, պայթուցիկ նյութեր և այլն:

Ինչպես տեսնում ենք, բուսական բջիջը ներկայումս բավական լավ և բազմակողմանի օգտագործվում է: Մակայն բուսական բջջի մեջ շատ ավելի՝ մեծ հնարավորություններ կան թաքնված: Անհրամեշտ է ոչ միայն մանրամասն հետազոտել հար մեջ կուտակված հարստությունները, գտնել արտասահմանից ներմուծվող բուսական հումքի փոխարինողները, այլև ավելի խորն ուսումնասիրել բուսական բջիջը, նրա կազմությունը, նրանում տեղի ունեցող կենսական պրոցեսները, զարգացման աստիճանները՝ սաղմային վիճակից մինչև բազմազան հասուն հյուսվածքներ ստացվելը: Միայն այդ խոր ուսումնասիրության շնորհիվ կարող ենք լի առաջ ար կերպով պով տիրապետել բռւսական բջիջը և առաջ առաջ ար կան ըջում մտեղի ունեցող կեն-

ուական պղբոցեաներին և դեկապարհութեան մեջ  
ցանկության համաձայն, որպեսզի ըստյանի մեջ  
կռւատակվեն այն նյութերը և այնպիսի քանակությամբ ու տես-  
ալով, ինչպես մեզ անհրաժեշտ է:

## ԲԱԳԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	էջ
Բջջի ուսումնակրության պատմությունը . . . . .	3
Բջիջը հիմական կենսական ժիավոր . . . . .	22
Բջջի կազմությունը . . . . .	26
Պրոտոպլասմա . . . . .	30
Կորիզ . . . . .	40
Պլաստիլինը . . . . .	45
Օսլա . . . . .	53
Ցուղեր . . . . .	57
Բջջահյութ . . . . .	59
Ալեյրանի հատիկներ և զանազան բյուրեղներ . .	64
Բջջաթաղանթ . . . . .	67
Բջջի բազմացումը . . . . .	75
Քրոմոսոմներ . . . . .	79
Բուսական բջիջը որպես հումքի աղբյուր . . . . .	84

ՏԵԽ. ԽՄԲԱԳԻՐ՝ Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ  
ՍՐԲԱԳՐԻՁ՝ Ա. ԱՐԶԱՔԱՆՅԱՆ

Հանձնված է արտադրության 27/XII 1947 թ. ստորագրված է  
առպազբան 7/11 1948 թ. ՎՃ 02168. Պատ. 911, հրատ. 496, տիրու 2500  
6 տպ. մամուկ, մեկ մամուկում 36400 տպ. նիզ:

---

Հայկական ՍՍՌ ԳԱ տպարան, Երևան, Արովյան 104



ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0010363

Գինը 6 Առևելի 604.

